



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3181

3 K 33  
1 - 35



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐ. ԱՊԵԽԱԼԻԱ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Պայմանագիր բար յերկութիւն, մքանչ:

հ. ԱՍԱԼԻՆ

# ԼԵՆԻՆԻ ԶՄԻ

■ ■ ■ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՑՈՒՐՁԸ ■ ■ ■

~~335.55  
U-94~~

ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1 9 2 6 •

21 JUN 2005

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐ. ՍՊԸՆԱԼԻԱՏ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք:

3K33 ՄՐ. ԱՍԱԼԻՆ 14 NOV 2005  
L-35

# ԼԵՆԻՆԻԶՄԻ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԸՆԿՐՁՅ

26/6  
38

196



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1926 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԽՄԿԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

05.08.2013  
3181

3181

Համ. Կ. Կ. (թ) Լենինգրա-  
դի կազմակերպությանն եւ  
նվիրում.

Ի. ԱՏՎԵԼԻՔՆ

Գրառեալ. № 434 (թ) Պ. № 1282. Պետրաս. № 368. Տիր. 5,000

Պետրասի IV տպարան Լենինականում

ԼԵՆԻՆԻԶՄԻ ԽՆԴԻՐՍԵՐԻ ՇՈՒՐՋԸ\*)

(Առաջաբանի փոխարեն)

Ներկա ժողովածվի հիմնական մասերից մեկը պետի համարել «Լենինիզմի հիմքերի մասին» բրոշյուրը։ Այդ բրոշյուրը առաջին անգամ լույս է ընծայվել համարյա յերկու տարի առաջ, 1924 թ. ապրիլին։ Այժմ այն ներկա ժողովածվի մեջ լույս է տեսնում յերկրորդ հրատարակությամբ։ Այս յերկու տարվա մեջ շատ ջուր ե հոսել. կուսակցությունը յերկու դիսկուսիա մաշեց, լենինիզմի մասին մի շարք բրոշյուրներ ու ձեռնարկներ հրատարակվեցին, հերթական դարձան սոցիալիստական շինարարության նոր գործնական հարցեր։ Հասկանալի յե, վոր այս յերկու տարվա մեջ ծագած նոր խնդիրները, այլև հավասարապես բրոշյուրի լույս տեսնելուց հետո տեղի ունեցած դիսկուսիաների արդյունքները՝ չեյին կարող հաշվի առնվել այս բրոշյուրում։ Հասկանալի յե նույնպես, թե մեր շինարարության կոնկրետ խնդիրները (նեպ, պետկապիտալիզմ, միջակ գյուղացության հարցը ևայլն) չեյին կարող լիսկատար լուսաբանված լինել մի փոքրիկ բրոշյուրում, վոր «Լենինիզմի հիմքերի կոնսպեկտիվ շարադրանքն եւ Այս

\*) Ներկա հոդվածը իբր ներածություն ե մտել ընկեր Ստալինի հոդվածների ժողովածուն, վոր կրում ե «Լենինիզմի խնդիրներ» վերտառությունը։

և նման խնդիրները կարող ելին միայն լուսաբանվել հեղինակի հետագա բրոցյուրներում («Հոկտեմբերյան հեղափոխությունը և ոռուական կոմմունիստների տակտիկան», «XIV Կուսկոնքի երենցիալի արդյունքների շուրջ», «Հարցեր ու պատասխաններ» ևայլն), վորոնք ներկա ժողովածվի մեջ են մտնում և որդանապես կապված են այն հիմնական դրությունների հետ, վոր շարադրված և «Լենինիզմի հիմքերի մասին» սկզբանբարոշուրում։ Այդ հանգամանքը լիովին արդարացնում է ներկա ժողովածվի հրատարակությունը, վոր այսպիսով ներկայանում են ենիզմի խնդիրներին նվիրված միասնական ու ամբողջական աշխատություն։

Քրողջական աշխատությունը:  
XIV կուսականագումարի վերջին դիսկուսիան գումար տվեց կուսակցուցիթյան վերջին, 13-ից մինչև 14-րդ համագումարը ապրած շրջանի իգեռոգիական ու շնորհարական աշխատանքին: Այն միաժամանակ վորոշ բուտուգման յենթարկեց նոր ոպոզիցիայի իր ժամանակին՝ առաջտրած զրությունները: Թուլլատրելի յե հարցնել — վորպիսին ե այդ ստուգման արդյունքը:

## ԵՆԻՆԻԶՄԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

«Լենինիզմի հիմքերի մասին» բրոյցութում արված և Լենինիզմի հայտնի բնորոշումը, վոր ըստ յերկութին քաղաքացիության իրավունք և ստացել։ Այն առում է,

«Լենինիզմը իպերխալիզմի և պրոլետարական հեղափոխության դարսաշրջանի մարքսիզմն է։ Ավելի ճիշտը՝ Լենինիզմը պրոլետարական հեղափոխության թեորիան և տակտիկան ե ընդհանուրապես, պրոլետարիատի դիկտատուրայի թեորիան ու տակտիկան հատկապես»։

Ուղիղ ե արդյոք այս բնորոշումը:  
Յես կարծում եմ, վոր ուղիղ ե: Ուղիղ ե նախ և  
առաջ նրա համար, վոր ճիշտ ե մատնանշում լենինիզ-  
մի պատմական արմատները, իմպերալիզմի դարացանի  
մարքսիզմ բնորոշելով նրան հակառակ Լենինի մի քա-  
նի քննադատների, վորոնք անձշորեն կարծում են,  
թե լենինիզմը ծագել ե իմպերիալիստական պատերազ-  
մից հետո: Յերկրորդ՝ ուղիղ ե նրա համար, վոր լենի-  
նիզմի միջազգային բնույթը ճիշտ ե նշում հակառակ  
սոցիալ-դեմոկրատիային, վոր լենինիզմը կիրառելի

յե համարում միայն ոռոսական աղքային հանդամանք-  
ներում։ Յերբորդ՝ ուղիղ և նրա համար, վոր ճիշտ և  
նշում լենինիզմի որգանական կտակը Մարքսի ուսմունքի-  
հետ, իմակերիալիզմի գարաջրջանի մարքսիզմ բնորոշելով  
նրան հակառակ լենինիզմի մի քանի քննադատների,  
վորոնք նրան վոչ թե մարքսիզմի հետագա զարգա-  
ցումն են համարում, այլ միայն մարքսիզմի վերական-  
գնումն և նրա կիրառումն ոռոս իրականության նկատ-  
մամբ։

Այս բոլորը կարծես թե առանձին մեկնություն-  
ների կարիք չի գուռմ։

Այնուամենայնիվ յերեսում ե վոր մեր կուսակցու-  
թյան մեջ կան ընկերներ, վորոնք անհրաժեշտ են դա-  
տում քիչ այլ կերպ բնորոշել լենինիզմը։ Ահա, որին-  
ակ, ընկեր Զինովել կարծում ե թե՝

«Լենինիզմը իմակերիալիստական պատերազմ-  
ների և համաշխարհային հեղափոխության գարաջրջանի-  
մարքսիզմ և, հեղափոխության, վոր անվիշականորեն  
մարքսիզմ և մի յերկրում, ուր գերիշխում ե գյուղացու-  
ծագել և մի յերկրում, ուր գերիշխում ե գյուղացու-  
ծագել» \*) (տես ընկ. Զինովելի հոդվածը՝ «Բայլշեիզմ  
թյունը») (տես ընկ. Պրավդա Ա 273, 30 նոյ. 1924 թ.)

թե՛ արոցկիզմ»—«Պրավդա» № 273, 30 նոյ. 1924 թ.)  
ի՞նչ կարող են նշանակել ընկեր Զինովելի խոս-  
քերը, ի՞նչ ե նշանակում լենինիզմի բնորոշման մեջ մու-  
տքագրության արդյունք։

Այդ նշանակում ե լենինիզմը միջազգային պրոլե-  
տարական ուսմունքից դարձնել ոռոսական առանձնա-  
հատկության արդյունք։

Այդ նշանակում ե ջուր ածել Բառերի և Կառց-

\*) Ընդգծումներն իմն են, ի. Ստ.

կու ջաղացին, վորոնք բացասում են լենինիզմի պիտո-  
նիությունը ուրիշ, կապիտալիստորեն առավել զարգա-  
ցած յերկրների համար։

Խոսք չկա, վոր գյուղացիական հարցը նուսառ-  
առանի համար կարենորագույն նշանակություն ունի,  
վոր մեր յերկիրը գյուղացիական ե։ Բայց ի՞նչ նշա-  
նակություն կարող ե ունենալ այդ փաստը լենինիզմի  
հիմքերը բնորոշելու համար։ Միթե լենինիզմը մշակել  
ե միայն նուսաստանի հողի վրա և նուսաստանի հա-  
մար, այլ վոչ թե իմակերավիզմի հողի վրա և իմակերա-  
վիստական յերկրների համար ընդհանրապես։ Միթե  
լենինի այնպիսի աշխատությունները, ինչպես «Իմպե-  
րիալիզմ», «Ետությունը և հեղափոխությունը», «Պրո-  
կտարական հեղափոխությունը և ոհնեգատ Կառուցկին»,  
«Զախության մանկական հիվանդությունը» ևայլն նը-  
շանակություն ունի միայն նուսաստանի, այլ վոչ բա-  
յոր իմակերավիստական յերկրների համար ընդհանրա-  
պես։ Միթե լենինիզմը բոլոր յերկրների հեղափոխա-  
կան շարժման փորձի ընդհանրացումը չե։ Միթե լե-  
նինիզմի թեորիայի ու տակտիկայի հիմքերը պիտանի,  
պարտադիր չեն բոլոր յերկրների պրոկտարական կու-  
սակցությունների համար։ Միթե լենինը արգարացե  
չեր ասելով, թե «Բայլշեիզմը իրեն տակտիկայի որի-  
նակ պիտանի յե բոլորի համար» \*) (տես հ. XV, էջ  
503 ոռոսական հրատարակություն)։ Միթե լենինը  
արդարացի չեր խոսելով «Խորհրդային իշխանության և  
բայլշեիզման թեորիայի ու տակտիկայի հիմքերի մի-  
ջազգային նեանակուրյան» \*) մասին (տես հ. XVII,

\*) Ընդգծումներն իմն են, ի. Ստ.

Եջ 116), Միթե ուղիղ չեն, որինակ, Լինինի հետեւաբ խոսքերը.

«Ռուսաստանում՝ շնորհիվ մեր յերկը խիստ շատ հիեալնացության և մանր-բուրժուականության՝ պրոլետարիատի դիկտատուրյան անխուսափելուրեն մի քանի առանձնահատկություններով պիտի տարբերվի առաջավոր յերկիրներին հետ համեմատած։ Բայց Ռուսաստանում հիմնական ույժերը և հասարակական տնտեսության հիմնական ձևերը նույնն են, ինչ վոր ամեն մեկապիտալիստական յերկում։ Այնպես վոր այդ առանձնահատկությունները համենայն լինու կարող վերաբերվել ամենազլխավորին \* ) (տես հ. XVI, եջ 348):

Յեզ յեթե այս բոլորը ճիշտ են՝ չե՛ բղխում այդտեղից այն, վոր ընկեր Զինովի լինինիզմի տված բնորոշումը չի կարող ուղիղ ճանաչվել։

Ի՞նչպես հաշտեցնել Լինինիզմի այդ աղքայնուրենամանափակ բնորոշումը ինտերնացիոնալիզմի հետ։

## II

### ԳԼԽԱՎՈՐԸ ԼԵՆԻՆԻ ԶՄՈՒՄ

«Լինինիզմի հիմքի մասին» բրոշյուրում ասված են-

«Վորանք կարծում են, թե հիմնականը լենինիզմում գյուղացական հարցն են, թե լինինիզմի յելակետը հանդիսանում ե գյուղացության,

\* ) Ընդդումն իմն են ի. Ստ.

նրա գերի, նրա տեսակաբար կշռի խնդ կատարելապես սխալ են Հիմնական խնդիրը լինինիզմում, նրա մեկնակետը վոչ թե գյուղական հարցն ե, այլ պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրը, նրա նվաճման պայմանները։ Գյուղացական հարցը, վոր լինդիրն ե պրոլետարիատի գաշնակցի մասին նրա իշխանության համար մղած պայքարում—ածանցական խնդիր ե։

Ուզի՞դ ե այս գրությունը։

Կարծում եմ, վոր ուղիղ ե։ Այդ գրությունն ամբողջապես բղխում ե լինինիզմի բնորոշումից։ Իսկապես, յեթե լինինիզմը պրոլետարական հեղափոխության թեորիան ու տակտիկան ե, իսկ պրոլետարական հեղափոխության հիմնական բովանդակությունը հանգիստում ե պրոլետարիատի դիկտատուրան,—ապա պարզ ե, վոր գլխավորը լինինիզմում պրոլետարիատի դիկտատուրիայի խնդիրի մեջ ե կայանում, այդ հարցի մշակման, այդ հարցի հիմնավորման ու կոնկրետացման մեջ։

Այնուամենայնիվ ընկեր Զինովիը, ըստ յերեսութին, համաձայն չե այդ գրության հետ։ Իր «Լինինի հիշատակին» հոդվածում նա ասում է.

«Գյուղացության դերի խնդիրը, ինչպես արգենտինի եմ յեն, բայց լինիզմի, լինինիզմի հիմնական խթիրն ե \* ) (տես «Պրավդա», № 35, 1824 թ. փետր. 13):

Ընկ. Զինովիի այս գրությունը, ինչպես տեսնում եք, ամբողջապես բղխում ե լինինիզմի անձիշտայն բնորոշումից, վոր տվել ե ընկ. Զինովիը։ Ուստի

\* ) Ընդդումն իմն են ի. Ստ.

այն նույնքան անձիշտ ե, վորքան անձիշտ և լենինիզմի նրա բնորոշումը,

Ուղիղ և լենինի թեսզիսը այն մասին, վոր պրոլետարիատի դիկտատուրան «հեղափոխության արմատական բովանդակությունն ե» (տես հ. ԽՎ, եջ 447): Անպայման ուղիղ ե: Ուղիղ և թեզիսը այն մասին, վոր լենինիզմը պրոլետարական հեղափոխության թերիան ու տակտիկան ե: Յես կարծում եմ, վոր ուղիղ ե: Իսկ ի՞նչ ե բղխում սրանից: Իսկ սրանից՝ բղխում ե այն, վոր լենինիզմի հիմնական խնդիրը, նրա մեկնակետը, նրա հիմքը պրոլետարիատի խնդիրն և հանգիստը:

Միթե ուղիղ չե, վոր իմպերիալիզմի խնդիրը, իմպերիալիզմի զարգացման վոստվոստուն բնույթի խնդիրը, սոցիալիզմի հաղթանակի խնդիրը մի յերկրում, պրոլետարիատի պետության խնդիրը, այդ պետության Խորհրդային ձևի խնդիրը, կուսակցության դերի խնդիրը, պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում, սոցիալական շինարարության ուղիների խնդիրը,—վոր այս բոլոր խնդիրները հենց մշակել և լենինը: Միթե ուղիղ չե, վոր հենց այդ խնդիրներն ել կազմում են պրոլետարիատի դիկտատուրայի զարգարի հիմքը, պատվանդանը: Միթե ուղիղ չե, վոր առանց այս հիմնական խնդիրների մշակման՝ պրոլետարիատի տեսակետից անխորհեմ կը լիներ գյուղացիական հարցի մշակումը,

Խոսք չկա, վոր լենինը լավ զիտեր գյուղացական հարցը, Խոսք չկա, վոր գյուղացական հարցը՝ իբրև պրոլետարիատի գաշնակցի խնդիր՝ կարևորագույն նըշանակություն ունի պրոլետարիատի համար և պրոլե-

տարիատի դիկտատուրայի հիմնական խնդրի բաղկացուցիչ մասն և հանդիսանում: Բայց միթե պարզ չե, վոր յեթե լենինիզմի առաջ ցցված չլիներ պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական խնդիրը, ապա չեր լինի և պրոլետարիատի դաշնակցի ածանցական խնդիրը, գյուղացական հարցը: Միթե պարզ չե, վոր յեթե լենինիզմի, առաջ ցցված չլիներ պրոլետարիատի կողմից իշխանությունը նվաճելու գործնական խնդիրը, ապա չեր լինի և գյուղացության հետ գաշնակցելու խնդիրը:

Լենինը չեր լինի մեծագույն պրոլետարական իդեոլոգը, վորպիսին նա անկասկածելիորեն հանդիսանում ե, նա կը լիներ պարզ «գյուղացական փիլիսոփա», ինչպես նրան հաճախ նկարում են արտասահմանի զըրական քաղքենիները, — յեթե նա գյուղացական հարցը մշակման ձեռնարկեր վոչ թե պրոլետարիատի դիկտատուրայի թերորիայի ու տակտիկայի պատվանդանի վրա, այլ առանց այդ պատվանդանի, այդ պատվանդանից գուրս:

Յերկուսից մեկը.

Կամ գյուղացական հարցը գլխավորն և լենինիզմում և այն ժամանակ լենինիզմը պիտանի չե, պարտադիր չե կապիտալիստորեն զարգացած յերկրների համար, յերկիրների, վոր գյուղացական չեն, կամ գլխավորը լենինիզմում հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրան և այն ժամանակ լենինիզմը հանդիսանում է բոլոր յերկիրների պրոլետարների միջազգային ուսմունքը, պիտանի և պարտադիր առանց բացառության բոլոր յերկիրների, վորոնց թվում և կապիտալիստորեն զարգացածների համար:

Այստեղ պետք ե ընտրություն անել:

## «ԹԵՐՄԱՆԵՆԾ» ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

«Լենինիզմի հիմքերի մասին» բրոշյուրում «պերմանենտ հեղափոխության թեորիան» գնահատվում է իրեն գյուղացության դերի թերագնահատման «թեռիտա»: Այստեղ ասված ե \*).

«Լենինը պայքարում եր «պերմանենտ հեղափոխության կողմանիցների դեմ վոչ թե անընդհատության խնդրի պատճառով, վորովհետեւ ինքը լենինը կանգնած եր հեղափոխության անընդհատության տեսակետին, —այլ գյուղացության դերի թերագնահատման համար, գյուղացության, վոր հանդիսանում ե պրոլետարիատի մեծագույն պահանտի ույժը»:

Ուստի «պերմանենտականներին» այս բնույթագիրը մինչև վերջին ժամանակ համարվում եր հանրածանաչված: Այսուամենայնիվ թեև ընդհանրապես ուղիղ, այն չի կարող սպառեցուցիչ ճանաչվել: 1924 թ. դիսկուսիան մի կողմից, լենինի աշխատությունների խնամքով վերլուծությունը մյուս կողմից ցույց տվին, վոր ուստի «պերմանենտականների» սխալը կայանում եր վոչ միայն գյուղացության դերի թերանգահատման մեջ, այլև պրոլետարիատի ույժերի և ընդունակությունների թերագնահատման մեջ առաջնորդելու գյուղացությանը, թերահավատության մեջ դեպի պրոլետարիատի հեղեղությալի (գերիշխանության) գաղափարը:

Այս պատճառով «Հոկտեմբերյան հեղափոխությունը \*

և ուստական կոմմունիստների տակտիկան» իմ բրոշյուրում (1924 թ. գեկտեմբեր) յես ընդարձակեցի այդ բնույթագիրը և այն փոխեցի ուրիշ, առավել լրիվ բընույթագրով: Անա դրա մասին ինչ է ասված այդ բրոշյուրում.

«Մինչ այժմ սովորաբար նշում եյին «պերմանենտ հեղափոխության» թեորիայի մի կողմը — թերահավատությունը գյուղացիական շարժման հեղափոխական հնարավորությունների հանդեպ: Այժմ արդարության համար, այդ կողմն անհրաժեշտ է լրացնել ուրիշ կողմով, — թերահավատությամբ մուսաստանի պրոլետարիատի ույժերի և ընդունակությունների հանդեպ»:

Այս, հարկավ, չի նշանակում, թե լենինիզմը դեմ եր կամ դիմեանչակերտավոր պերմանենտ հեղափոխության գաղափարին, վոր Մարքսն և հոչակել անցյալ գորի քառասունական թվականներին: Ընդհակառակը, լենինը միակ մարքսիստն եր, վոր ուղիղ եր ըմբռնել ու զարգացրել պերմանենտ հեղափոխության գաղափարը: Լենինի տարբերությունը «պերմանենտականներից» այս խնդրում կայանում ե նրա մեջ, վոր «պերմանենտականները» աղավաղում եյին Մարքսի պերմանենտ հեղափոխության գաղափարը, դարձնելով այն կենսագուրկ գրքի իմաստություն, այն ինչ լենինը վերցրեց այդ գաղափարը իր մաքուր ձեռով և այն գարձրեց իր հեղափոխության թեորիայի հիմքերից մեկը: Պատք և հիշել, վոր բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ներածման և սոցիալիստական հեղափոխության փոխարկման գաղափարը, վոր տվել ե լենինը դեռ 1905

\*) Ընդգծումն իմն ե: ի. Ստ.

թվականին, Մարքսի պերմանենտ հեղափոխության թեորիայի մարմարավորման ձևերից մեկն եւ Ահա թե դեռ 1905 թ. ինչ եր գրում այդ մասին լենինը.

«Դեմոկրատական հեղափոխությունից մենք այնուամենայնիվ հենց մեր ույժերի, զիտակից ու կաղմակերպված պրոլետարիատի ույժի չափով կըսկսենք անցնել սոցիալիստական հեղափոխության. Մենք անընդհատ հեղափոխության կողմենակից ենք \*): Մենք կանգ չենք առնի կես ճամբին: Չընկնելով արկածախնդրության մեջ, չդաշտաճանելով մեր զիտական խղճին, չհետապնդելով եժանագին ժողովրդականության, մենք կարող ենք ասել և ասում ենք միայն մի բան. մենք բոլոր ույժերով կողնենք վողջ զյուղացությանը դեմոկրատական հեղափոխությունն կատարելու, վորպեսզի դրանով հետև լինի մեզ, պրոլետարիատի կուսակցության, վորքան հնարավոր և արագ անցնելու նոր և բարձր խնդրի—սոցիալիստական հեղափոխության» (տես հ. 16, եջ 449-450).

Բայց ահա ինչ ե գրում այդ նյութի մասին լենինը տասն և վեց տարի անց, պրոլետարիատի կողմից իշխանությունը նվաճելուց հետո.

«Կառւցկիները, Հիլֆերդինգները, Մարտովները, Զերնովները, Հիլլկվիտները, Լոնգեները, Մակդոնալդները, Տուրատինները և « $2^{1/2}$ -ական» մարքսիզմի մյուս հերոսները չկարողացան ըմբռնել... բուրժուա-դեմոկրատական և պրոլետար-սոցիալիստական հեղափոխությունների փոխարժեաբերությունները, Առաջն ներանելով փոխարժեաբերությունները, Առաջն իման եւ ի. Ստ.

\*) Հնդկացումն իման եւ ի. Ստ.

վում ե յերկրորդին \*). Յերկրորդը անցողաբար լուծում ե առաջնի խնդիրները, Յերկրորդը ամրապնդում ե առաջնի գործը: Պայքարը և միայն պայքարն ե վճռում, թե վճռքան ե հաջողվում յերկրորդին՝ գերազանցել առաջինին» (տես հ. 18, մ. 1-ին, եջ 363):

Յես հատուկ ուշագրություն եմ հրավիրում առաջն ցիտատի վրա, վոր վերցրած ե լենինի 1905 թ. սեպտեմբերի 1-ին հրապարակած «Սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքը զեպի զյուղացական շարժումը» հոդվածից: Յես այս ընդգծում եմ ի գիտություն այն ընկերների, վորոնք դեռ ևս շարունակում են պնդել, թե իրը լենինը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ներածման և նրա սոցիալիստական հեղափոխության փոխարկվելու գաղափարին ե յեկել, պերմանենտ հեղափոխության գաղափարին ե հանգել իմպերալիստական պատերազմից հետո, մոտավորապես 1916 թվականին: Այդ ցիտատը կասկած չի թողնում, վոր այդ ընկերները խորապես մոլորվում են:

26/6  
38


#### IV

**ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿԱՏՈՒՐԱՆ**

Ինչումն ե կայանում պրոլետարական հեղափոխության գիծը, նրա տարբերությունը բուրժուական հեղափոխությունից:

Տարբերությունը պրոլետարական հեղափոխության

\*) Հնդկացումն իման եւ ի. Ստ.



թյան և բուրժուական հեղափոխության միջև կարելի կը լինի վերածել հինգ հիմնական կետերի.

1) Բուրժուական հեղափոխությունը սովորաբար սկզբում և կապիտալիստական կառուցվածքի առավել կամպակաս պատրաստի ձևերի գոյության պայմանում, վոր գենես դրսէորգած հեղափոխությունից առաջ ծերու հասունացել են ավատական հասարակության գործում, այն ինչ պրոլետարական հեղափոխությունն ըստ կազմում ե սոցիալիստական կառուցվածքի պատրաստի ձևերի բացակայության կամ համարյա բացակայության պայմանում:

2) Բուրժուական հեղափոխության հիմնական խնդիրը հանգում ե նրան, վոր նվաճվի իշխանությունը և այն համապատասխան վիճակի վերածվի գոյություն ունեցող բուրժուական եկոնոմիկայի հետ, այն ինչ պրոլետարական հեղափոխության հիմնական ինդիրը հանգում ե նրան, վոր նվաճելով իշխանությանը՝ կառուցվի նոր, սոցիալիստական եկոնոմիկա:

3) Բուրժուական հեղափոխությունը սովորաբար ավարտվում ե իշխանության նվաճումով, այն ինչ պրոլետարական հեղափոխության համար իշխանության նվաճումը միայն նրա սկիզբն ե, ըստ վորում իշխանությունը ոգտագործվում ե իրեն լծակ վերակերտելու հին եկոնոմիկան և կազմակերպելու նորը:

4) Բուրժուական հեղափոխությունը սահմանափակվում ե փոփոխելով իշխանության մեջ մի շահագործող խմբակ մյուս շահագործող խմբակով, ահա ինչու նա կարիք չի գործում փշտիլու հին պետական մեքենան, այն ինչ պրոլետարական հեղափոխությունը իշխանությունից վտարում ե բոլոր և ամեն կարգի շա-

հազործող խմբակներին և իշխանության տիրապես ըստ լոր աշխատավորների ու շահագործվողների առաջնորդութին, պրոլետարների դասակարգին, ահա ինչու նա չի կարող չփշտիլ հին պետական մեքենան և այն փոխարինել նորով:

5) Բուրժուական հեղափոխությունը չի կարող շատ ու քիչ տեսականորեն բուրժուազիայի շուրջը համախմբել աշխատավոր ու շահագործվող միլիոնավոր մասսաներին հենց այն պատճառով, վոր նրանք աշխատավոր ու շահագործվող են հանդիսանում, այն ինչ պրոլետարական հեղափոխությունը կարող ե և պետք ե նրանց տեսական դաշնակցությամբ շաղկապե պրոլետարիատի հետ հենց վորպես աշխատավորների ու շահագործվողների, յեթե այն կամենում ե իրագործել իր հիմնական խնդիրը, վոր ե ամրացումն պրոլետարիատի իշխանության և նոր, սոցիալիստական եկոնոմիկայի կառուցումն:

Ահա կենինի միքանի հիմնական գրությունները այս մասին:

«Հիմնական տարբերություններից մեկը բուրժուական և սոցիալիստական հեղափոխությունների միջև, ասում ե կենինը, կայանում ե նրանում, վոր միշտ ֆեոդալիզմից անող բուրժուական հեղափոխության համար նոր տնտեսական կազմակերպությունները աստիճանաբար ստեղծվում են հին հասարակակարգի խորքերում հենց գոնե առետարական հարաբերությունների զարգացումով, վորոնք աստիճանաբար փոփոխում են ֆեոդալական հասարակության բոլոր կողմերը: Բուրժուական հեղափոխությունն իր

առջև մի խնդիր ուներ—սըբել, դեն շպրտել, կործանել նախկին հասարակության բոլոր կապանքները, իրագործելով այդ խնդիրը, ամեն մի բուրժուական հեղափոխություն իրագործում ե այն բոլորը, ինչ պահանջվում է նրանից, վորովհետեւ վերջին հաշվով այն ստեղծում ե ապրանքային արտադրություն և ուժեղացնում ե կապիտալիզմի աճումը։ Միանգամայն այլ վիճակում ե գըտընվում սոցիալիստական հեղափոխությունը։ Վորքան առավել հետամնաց ե այն երկիրը, վորին վիճակվեց պատմության զիգզագների ույժով սկսել սոցիալիստական հեղափոխությունը, այնքան դժվար ե նրա համար հին կապիտալիստական փոխարարերությունից սոցիալիստականին անցնելը։ Այստեղ կործանման խնդիրներին ավելանում են նոր, չլսված դժվարության խնդիր—կազմակերպչականը» (տես հ. ԽV, եջ 124)։

«Յեթե ուսւական հեղափոխության ժողովրդական ստեղծագործությունը, վոր անցել ե 1905 թ. մեծ փորձով, —շարունակում ե լենինը, — գեռ 1917 թ. ֆեարվարին Խորհուրդներ չստեղծեր, ապա վոչ մի դեպքում նրանք չեյին կարող հոկտեմբերին վերցնել իշխանությունը, վորովհետեւ հաջողությունը կախված ե միլիոններ ընդգրկող շարժման արդեն պատրաստի կազմակերպչական ձևերից։ Այդ պատրաստի ձևը հանդիսացան Խորհուրդները վոչ այն պատճառով, վոր քաղաքականության բնագավառում մեզ սպասում եյին այն փայլուն հաջողությունները, այն համատարած հաղթական յերթը, վոր մենք ապրեցինք, այլ

այն պատճառով, վոր քաղաքական նոր ձևը պատրաստ եր և մեզ մնում եր միայն միքանի դեկրետներով հեղափոխության առաջին ամիսներին սաղմնային վիճակ ապրող Խորհրդային իշխանությունը դարձնել Ռուսաստանի պետության պաշտոնապես ճանաչված ձևը, — Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությունը» (նույնական եջ 124—125)։

Մնում եյին դեռ, ասում ե լենինը, վիթխարի դժվարության յերկու-խնդիրը, վորոնց լուծումը վոչ մի դեպքում չի հանդիսանում այն հաղթական յերթը, վորով անցել ե մեր հեղափոխությունը» (նույնական եջ 125)։

Առաջին՝ այդ հերթին կազմակերպության խնդիրն ե, վոր ցցված ե ամեն-մի սոցիալիստական հեղափոխության առաջ։ Սոցիալական հեղափոխության տարբերությունը բուրժուականից հենց կայանում ե նրանում, վոր այնտեղ կան կապիտալիստական կազմակերպությունների պատրաստի ձևեր, իսկ Խորհրդային պրոլետարական հեղափոխությունը այն փոխարարերությունները պատրաստի չի ստանում, յեթե չկերցնենք կապիտալիզմի ամենից զարգացած ձևերը, վորոնք ըստ եռթյան ընդգրկել են արդյունաբերության միայն վոչ մեծ գագաթները և միանգամայն քիչ են շոշափել գեռ հողագործությունը։ Հաշվառքի կազմակերպում, խոշորագույն ձեռնարկությունների վրա կոնտրոլ վողջ պետական տնտեսական մեխանիզմի կերպարանափոխումը միասնական խոշոր մեքենայի, տնտեսական որգանիզմ,

վոր աշխատում ե այնպես, վորպեսզի հարյուրավոր միլիոն մարդիկ ղեկավարվեն մի պլանով, — առաջն վիթխարի կազմակերպչական խնդիրը, վորքարձվել ե մեր ուսերին: Իր խակ պայմաններով այն վոչ մի կերպ չեր թուլատրում հախուռն լուծումն, այն լուծումը, վորով մեղ հաջողվում եր հաղթահարել քաղաքացիական պատերազմի խնդիրները» (նույն տեղ, էջ 125):

«Յերկրորդ խնդիրը — միջազգային հեղափոխության հարցի լուծումն ե: Յեթե մենք այնպես հեշտությամբ զուեցինք կերենսկու հրոսակներին, յեթե այնպես հեշտությամբ իշխանություն ստեղծեցինք, յեթե մենք առանց նվազագույն աշխատանքի ստացանք հողի սոցիալազարտայի, բանվորական կոնտրոլի ղեկրետները, ապա միայն այն պատճառով, վոր հատուկ գասավորված պայմանները կարճ ժամանակով մեղ ծածկեցին միջազգային իմտերիալիզմից: Միջազգային իմպերիալիզմը, վոր ունի ամբողջ միացյալ կապիտալի ույժը և ռազմական տեխնիկայի վողջ զորությունը, վիթխարի սեալ ույժ ե, վոր վոչ մի գեպօւմ, վոչ մի պայմանով Խորհրդային հանրապետության հետ չի կարող կողք-կողքի ապրել թե իր որյեկտիվ գրությամբ, թե այն կապիտալիստական դասակարգի տնտեսական շահերով, դասակարգի, վոր մարմավորված ե նրա մեջ, չեր կարող կողք-կողքի ապրել առևտրական կապերի, միջազգային և ֆինանսական փոխարքերությունների զորությամբ: Այստեղ կոնֆլիկտը ներկայանում էր անխուսափելի: Այստեղ

սուսական հեղափոխության մեծագույն դժվարությունն ե, նրա մեծագույն պատմական պրոբլեմը — անհրաժեշտություն՝ լուծելու միջազգային խնդիրները, անհրաժեշտություն՝ միջազգային հեղափոխություն առաջացնելու» (նույն տեղ, էջ 126—127):

Այդպիսին են պրոլետարական հեղափոխության ներքին բնույթը և հիմնական իմաստը:

Կարելի յե արդյոք առանց բռնական հեղափոխության, առանց պրոլետարիատի զիկտատուրայի հին բուրժուական կարգերի նման արմատական վերակառուցում կատարել:

Պարզ ե, վոր անկարելի յե: Խորհել թե նման հեղափոխություն կարելի յե կատարել խաղաղությամբ, բուրժուական դեմոկրատիայի շրջանակներում, վոր հարմարեցրած ե բուրժուազիայի տիրապետության համար, — նշանակում ե կամ խելազարդել և կորցնել նորմալ մարդկային հասկացողությունը, կամ բիրտ կերպով և բացահայտորեն հրաժարվել պրոլետարական նեղափոխությունից:

Այս դրությունը պետք ե ընդգծել առավել մեծ ույժով ու կատեգորիկ կերպով, քանի վոր մենք զործունենք զեռ ևս մի յերկրում հաղթանակած պրոլետարական հեղափոխության հետ, մի յերկրում, վոր շրջապատված ե թշնամի կապիտալիստական յերկրներով և վորի բուրժուազիային չի կարող չսատարել միջազգային կապիտալը:

Ահա ինչն կենին ասում ե, թե «հարստանարված գասակարգի ազատագրությունն անհնարին և վոչ միայն առանց բռնական հեղափոխության, այլեվ ա-

ուանց վոչնչացնելու պետական իշխանության այն առարատը, վոր ստեղծել ե տիրող գասակարզը» (տես հ. XIV, մ. 2, եջ 302):

«Թող սկզբից, —ասում ե Լենինը, —պահպանելով մասնավոր սեփականությունը, այսինքն պահպանելով իշխանությունը, կապիտալի ճնշումը, —բնակչության մեծամասնությունը արտահայտվի կողմանակից պրոլետարիատի կուսակցության, —այն ժամանակ միայն նա կարող ե և պետք ե վերցնի իշխանությունը», —այսպես են ասում մանր բուրժուական դեմոկրատները, բուրժուարիայի փաստական սպասավորները, վոր «սոցիալիստ» են, անվանում իրանց» (տես հ. XVI, եջ 456):

«Թող սկզբից, շարունակում ե Լենինը, հեղափոխական պրոլետարիատը տապալե բուրժուարիային, ջլատե կապիտալի ճնշումը, վշրե բուրժուական պետական տպարատը, —այն ժամանակ հաղթանակած պրոլետարիատը կարող ե արագորեն իր կողմը գրավել վոչ-պրոլետարական աշխատավոր մասսաների մեծամասնության համակրանքն ու աջակցությունը, բավարարելով նրանց ի հաշիվ շահագործողների, —ասում ենք մենք» (նույն տեղ, եջ 457):

«Վորպեսզի իր կողմը նվաճե բնակչության մեծամասնությունը, —շարունակում ե Լենինը, —պրոլետարիատը նախ ե առաջ պիտի տապալի բուրժուարիային և իր ձեռքն առնե պետական իշխանությունը: Յերկրորդ՝ ջարգուփշուր անելով հին պետական տպարատը, նա պիտի Խորհրդա-

յին իշխանություն մտցնի, վորով նա միանգամից կըխախտե բուրժուագիայի և մանր-բուրժուական համաձայնողականների տիրապետությունը, հեղինակությունը, ազգեցությունը վոչ-պրոլետարական աշխատավոր մասսաների մեջ: Յերրորդ՝ նա պետք ե վերջնահարված հասցնի բուրժուարիայի և մանր-բուրժուական համաձայնողականների ազգեցությանը, վոր նրանք վոչ-պրոլետարական աշխատավոր մասսաների մեծամասնության մեջ, հեղափոխականորեն իրագործելով նրանց տնտեսական կարիքները ի հաշիվ շահագործողների» (նույն տեղ, եջ 450):

Այսպիսին են պրոլետարական հեղափոխության բնորոշ նշանները:

Ի՞նչպիսին են, սրա հետ կապակցված, պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական գծերը, յեթե ձանչված ե, վոր պրոլետարական հեղափոխության հիմնական բովանդակությունը պրոլետարիատի դիկտատուրան ե:

Ահա պրոլետարիատի դիկտատուրայի առավելքնդանուր բնորոշումը, վոր տվել ե Լենինը.

«Պրոլետարիատի դիկտատուրան դասակարգային կովի ավարտումն չե, այլ նրա շարունակությունը նոր ձեերով: Պրոլետարիատի դիկտատուրան հաղթած և քաղաքական իշխանությունը իր ձեռքն առած պրոլետարիատի դասակարգային կոփն ե ընդդեմ պարտված, բայց չփոչնչացած, չքացած, չդադարած դիմադրություն ցույց տալ, իր դիմապրությունն ուժեղացրած բուրժուազիայի» (տես հ. 16-րդ, եջ 240-241),

Առավելով պրոլետարիատի դիկտատուրան «համաժողովրդական», «հանրաընտիր», «վոչ-դասակարգային» իշխանության հետ շփոթելու դեմ, կենքնասում ե.

«Այն դասակարգը, վոր իր ձեռքն ե զերցրել քաղաքական տիրապետությունը, վերցրել ե գիտակցելով, թե այն մենակ ե վերցնում: Այդ պարունակում ե պրոլետարիատի դիկտատուրայի հասկացողության մեջ: Այդ հասկացողությունն այն ժամանակ սիայն իմաստ ունի, յերբ մի դասակարգ գիտե, թե նա մենակ ե իր ձեռքն առնում քաղաքական իշխանությունը և վոչ իրան, վոչ ուրիշներին «համաժողովրդական, հանրաընտիր, վողջ ժողովրդի անունից սրբագործված» իշխանության զրույցներով չի խարում» (տես հ. 18-րդ մ. 1, էջ 175):

Այս չի նշանակում սակայն, թե մի դասակարգի իշխանությունը, պրոլետարների դասակարգի, վոր բաժին չի հանում և չի կարող բաժին հանել մյուս դասակարգերին, իր նպատակների իրագործման համար մյուս դասակարգերի - աշխատավոր և շահագործվող մասսաների ռգնության կարիքը չի զգում: Ընդհակառակը: Այդ իշխանությունը, մի դասակարգի իշխանությունը կարող է հաստատվել և ավարտվել միայն առանձին ձեւի դաշնակցություն կնքելով պրոլետարների դասակարգի և մանր-բուրժուական դասակարգի աշխատավոր մասսաների, նախ և առաջ զյուղացության աշխատավոր մասսաների միջև:

Ի՞նչ առանձին ձեւի դաշնակցություն ե այդ, ի՞նչի մեջ ե այն կայանում: Զի՞ հակասում ընդհանրա-

պես մյուս վոչ-պրոլետարական դասակարգերի աշխատավոր մասսաների հետ կնքած այդ դաշնակցությունը մի դասակարգի դիկտատուրայի գաղափարին:

Այդ դաշնակցության առանձին ձեւ կայանում ե նրանում, վոր այդ դաշնակցության դիկավարության առանձին ձեւ կայանում ե նրանում, վոր պետության դիկավարը, պրոլետարիատի դիկտատուրայի սխանմի դիկավարը հանդիսանում ե մի կուսակցություն, պրոլետարիատի կուսակցությունը, կոմմունիստների կուսակցությունը; վոր դիկավարությունից բաժին չի հանում յել բաժին չի կարող հանել մյուս կուսակցություններին:

Ինչպես տեսնում եք հակասությունն այստեղ յերկութական ե, թվայող:

«Պրոլետարիատի դիկտատուրան, —ասում ե Լենինը, —առանձին ձեվի դասակարգային դաշնակցություն ե \*): Կնքած պրոլետարիատի, աշխատավոր ավանդարգի և բազմաթիվ վոչ-պրոլետարական աշխատող շերտերի (մասր բուրժուազիա, մանր տնտեսատերեր, զյուղացություն, ինտելիգենցիա և այլն) կամ նրանց մեծամասնության միջև, դաշնակցություն՝ ընդգեմ կապիտալիստի, դաշնակցություն, վոր նպատակ ունի կատարելապես տապալելու կապիտալը, կատարելապես ձնելու բուրժուազիայի դիմադրությունները և վերականգնման փորձերը նրա կողմից, դաշնակցություն, վոր նպատակ ունի վերջնականապես ըստեղծելու և ամբացնելու սոցիալիզմը: Այդ առան-

\*) Ընդգծումն իմն ե: ի. Ստ.

ձին տեսակ դաշնակցություն ե, վոր կազմավորվում ե առանձին հանգամանքներում, այն ե՝ կատաղի քաղաքացիական պատերազմի հանգամանքներում, այդ սոցիալիզմի կուռ կողմնակիցների դաշնակցությունն ե նրա հեղհեղուկ, յերբեմն «չեղոք» (այն ժամանակ պայքար մղելու համաձայնությունից դաշնակցությունը դառնում ե չեղոքության համաձայնություն) կողմնակիցների հետ, դաշնակցություն տեսեսապես, խաղաքանութեն, սոցիալապես, հոգեվոր տեսակետից վոչ միասոր դասակարգերի միջեւ \*) (տես հ. 16, եջ 240-241):

Իր մի հրահանգչական գեկուցման մեջ ընկեր Կամենը՝ բանավիճելով պրոլետարիատի դիկտատուրայի նման ըմբռնման գեմ՝ ասում ե.

«Դիկտատուրան մի դասակարգի դաշնակցություն չե \*) մյուսի հետ» (տես «Պրավդա», № 11, 1925 թ. յունվ. 14):

Յես կարծում եմ, վոր ընկեր Կամեննեն այստեղ նախ և առաջ նկատի ունի իմ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ոռուսական կոմմունիստների տակտիկան» ըրոշյուրից մի տեղ, ուր ասված ե.

«Պրոլետարիատի դիկտատուրան պարզ կառավարական գագաթ չե, «Հմառեն» «ջոկած» «փորձված ստրատեգի» հոգատար ձեռքով և «բանականորեն հենվող» ընակչության այս կամ այն շերտերի վրա: Պրոլետարիատի դիկտատուրան դասակարգային դաշնակցություն ե պրոլետարիատի և գյուղացության աշխատող մասսանե-

\*) Ընդգծումն իմն ե: ի. Ստ.

թի միջև տապալելու կապիտալը, սոցիալիզմի վերջնական հաղթանակը նվաճելու մի պայմանով, վոր այդ դաշնակցության դեկալար ույժն ե հանդիսանում պրոլետարիատը»:

Յես ամբողջապես պաշտպանում եմ պրոլետարիատի դիկտատուրայի այդ ձեւի կերպումը, վորովհետեւ կարծում եմ, վոր այն ամբողջությամբ և լիովին գուգադիպում ե Լենինի հենց նոր հիշատակած ձեւի կերպման հետ:

Յես պնդում եմ, վոր ընկեր Կամեննեի հայտարարությունն այն մասին, թե «գիկտատուրան մի դասակարգի դաշնակցություն չե մյուսի հետ», տրված այդպիսի անառարկելի ձեռփ, —վոչինչ ընդհանուր չունի պրոլետարիատի դիկտատուրայի Լենինյան թերթայի հետ:

Յես պնդում եմ, վոր այդպիս կարող են խոսել միայն այն մարդիկ, վորոնք չեն ըմբռնել զողման գաղափարի, պրոլետարիատի և գյուղացության դաշնակցության գաղափարի, պրոլետարիատի այդ դաշնակցության մեջ ունեցած գերիշխանության գաղափարի իմաստը:

Այդպիս կարող են խոսել միայն մարդիկ, վորոնք չեն ըմբռնել Լենինի թեզիսը այն մասին, թե՝

«Միայն համաձայնուրիունը զյուղացուրյան նետ \*) կարող ե փրկել Ռուսաստանի սոցիալիստական հեղափոխությունը, քանի չի բոնկվել հեղափոխությունը մյուս յերկրներում» (տես հ. 18-րդ, մ. 1, եջ 138):

\*) Ընդգծումն իմն ե: ի. Ստ.

Սյուպիս կարող են խոսել միայն մարդիկ, վորոնք չեն ըմբռնել լենինի միտքն այն մասին, թե՝

«Դիկտատուրայի գերազույն սկզբունքն է \* )—պահպանել պրոլետարիատի դաշնակցությունը գյուղացության հետ, վորպեսզի պրոլետարիատը կարողանա պահպանել դեկալար դեր և պետական իշխանություն» (տես հ. 18, մ. 1, եջ 331)։

Հեշելով դիկտատուրայի կարևորագույն նպատակներից մեկը, շահազործողների ճնշման նպատակը, լենինն ասում է.

«Դիկտատուրայի գիտական ըմբռնումը նըշանակում է վոչ այլ ինչ, քան վոչնչով չսահմանափակված, վոչ մի որենքով, բացարձակակապես վոչ մի կանոնադրությամբ չկաշկանդված, անմիջականորեն բանության վրա հենվող իշխանություն... Դիկտատուրան նշանակում է—մի անգամ ընդ միշտ նկատի առեք այս, պարոնայք կադետներ—անսահմանափակ, ութի, այլ վոչ որենքի վրա հենվող իշխանություն։ Քաղաքացիական ոլատերազմի ժամանակ յուրաքանչյուր հաղթող իշխանություն կարող է լինել միայն դիկտատուրա» (տես հ. 18, եջ 361 և 355)։

Բայց բոնությամբ, հարկավ, չի սպառվում պրոլետարիատի դիկտատուրան, թեև առանց բոնության դիկտատուրա չի լինում։

«Դիկտատուրան, ասում է լենինը, նշանակում է վոչ միայն բոնություն, թեև այն անհարին է առանց բոնության, նա նշանակում է

\* ) Բնդգծումն իմն է, ի. Ստ.

նույնպիս աշխատանքի առավել բարձր կազմակերպություն, քան նախորդ կազմակերպությունը» (տես հ. 16, եջ 222)։

Պրոլետարիատի գիտատուրան... միայն բոնություն չե շահազործողների նկատմամբ և անգամ բանություն չե զիսավորապես։ Այդ հեղափոխական բոնության տնտեսական հիմքը, նրա կենսունակության և հաջողության գրավականն այն է, վոր կապիտալիստի հետ համեմատած պրոլետարիատը ներկայացնում է և իրագործում աշխատանքի հասարակական կազմակերպության առավել բարձր տիպ։ Սրա մեջն և կոմմունիզմի ուժի աղբյուրը և անխուսափելի լիակատար հաղթության գրավականը (տես. հ. 16, եջ 247-248)։

Նրա զիսավոր եռությունը՝ (այսինքն դիկտատուրային թ. Ա. Տ. և աշխատողների առաջավոր ջոկատի, նրա ավանդարգի, նրա միակ դեկավարի—պրոլետարիատի կազմակերպվածության ու գիսցիպինայի մեջ և կայանում։ Նրա նպատակն է ստեղծել սոցիալիզմ, վոչնչացնել հասարակության բաժանումը դասակարգերի, հասարակության բոլոր անդամներին աշխատավորներ դարձնել մարդուն մարդու ձեռքով շահազործելու հոգը խլել։ Այդ նպատակը չի կարելի իրագործել միանգամից, այն պահանջում է կապիտալիզմից սոցիալիզմին տանող բավականին տեսական անցողիկ մի ժամանակաշրջան, և այն պատճառով, վոր արտադրության վերակազմությունը դժվար բան է, և այն պատճառով, վոր ժամանակ է

հարկավոր կյանքի բոլոր բնագավառների արմատական փոփոխությունների համար, և այս պատճառով, վոր մանը բուրժուական և բուրժուական տնտեսավարության սովորության հոկայական ուժը կարելի յէ հաղթահարել միայն տեսական համառ պայքարով։ Հենց այս պատճառով Մարքսը խոսում է պրոլետարիատի դիկտատուրայի ամբողջ ժամանակաշրջանի, իրեն կապիտալիզմից սոցիալիզմին տանող ժամանակաշրջանի մասին» (տես նույն տեղ, եջ 226—227):

Այսպիսին են պրոլետարիատի դիկտատուրայի բնորոշ գծերը։

Այսուղից ել բղխում են պրոլետարիատի յերեք չիմնական կողմերը։

1) Պրոլետարիատի իշխանության ոգտագործումը ճնշելու շահագործողներին, պաշտպանելու յերկիրը, ամրացնելու կազմ մյուս յերկրների պրոլետարների հետ, բոլոր յերկրներում զարգացնելու և հաղթությամբ պահելու հեղափոխությունը։

2) Պրոլետարիատի իշխանության ոգտագործումը աշխատավոր և շահագործվող մասսաները վերջնականապես պոկելու բուրժուազիայից, ամրացնելու պրոլետարիատի գաշնակցությունը այդ մասսաների հետ, զբավելու այդ մասսաները սոցիալիստական շինարարության մեջ, այդ մասսաների պետական դեկավարության համար պրոլետարիատի կողմից։

3) Պրոլետարիատի իշխանության ոգտագործումը կազմակերպելու սոցիալիզմը, վոչնչացնելու դասակարգերը, առանց դասակարգերի հասարակության, առանց պետության հասարակության անցնելու։

Պրոլետարական դիկտատուրան այս բոլոր յերեք կողմերի միացումն է։ Այս յերեք կողմերից վոչ մեկն էլ չի կարելի առաջ մղել իրրե պրոլետարիատի դիկտատուրայի միակ բնորոշ նշան և, ընդհակառակը, հերթիք ե վոր բացակայե այս նշաններից մեկը, վորպեսզի կապիտալիստական ողակման հանգամանքներում պրոլետարիատի դիկտատուրան դադարի դիկտատուրա լինելուց։ Այս պատճառով՝ առանց պրոլետարիատի դիկտատուրայի հասկացողությունը աղավագելու վտանգի չի կարելի մերժել այս յերեք կողմերից և վոչ մեկը։ Միայն այս յերեք կողմերը միասին վերցրած մեղտալիս են պրոլետարիատի դիկտատուրայի լիակատար և ազարտված հասկացողությունը։

Պրոլետարիատի դիկտատուրան ունի իր փուլերը, իր առանձին ձևերը, աշխատանքի զանազանակերպ մեթոդները։ Քաղաքացիական պատերազմի շրջանում առանձնապես ակնրախ ե դիկտատուրայի բռնական կողմը Բայց սրանից ամեններն չի բղխում, թե քաղաքացիական պատերազմի շրջանում վոչ մի շինարար աշխատանք չի լինում։ Առանց շինարար աշխատանքի չի կարելի քաղաքացիական պատերազմ մղել։ Սոցիալիզմի շինարարության շրջանում, ընդհակառակը, առանձնապես ակնրախ ե դիկտատուրայի խաղաղ, կազմակերպչական, կուլտուրական աշխատանքը, հեղափոխական որինականությունը եալին։ Բայց սրանից գարձյալ չի բղխում, թե դիկտատուրայի բռնական կողմը զոսացել և կամ շինարարության շրջանում կարող ե կոսանալ։ Ճնշման որգանները, բանակի ու մյուս կազմակերպությունները, այժմ, շինարարության մոմենտին, նույնքան անհրաժեշտ են, վորքան քաղաքացիական պատե-

բազմի շրջանում։ Առանց այդ որգանների գոյության անհնարին և դիկտատուրայի շատ թեքիչ ապահոված շինարար աշխատանքը։ Զարեւք և մոռանալ, վոր դեռևս հեղափոխությունը հաղթանակել և միմիայն մի յերկրում։ Զարեւք և մոռանալ թե քանի կա կապիտալիստական ողակումն, կը ինի և ինտերվենցիայի զինական միջամտության վտանգ, այս վտանգից բղիսող իր բռնոր հետևանքներով։

## V

## ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ

Վերը յես խոսեցի պրոլետարիատի դիկտատուրայի մասին նրա պատմական անխուսափելիության տեսակետից, նրա դասակարգային բովանդակության տեսակետից, նրա պետական բնույթի տեսակետից, վերջապես նրա կուծանարար և ստեղծագործ անելիքների տեսակետից.—այդ իրագործում և ամբողջ պատմական մի փուլի ընթացքում, վոր կոչվում և կապիտալիզմից դեպի սոցիալիզմ տանող անցողակի շրջան։

Այժմ մեզ անհրաժեշտ և խոսել պրոլետարիատի դիկտատուրայի մասին նրա կառուցման տեսակետից, նրա «մեխանիզմի» տեսակետից, այն «փոկերի», «լըծակների» և ուղղություն տվող ույժից դերի ու նշանակության մասին, վորոնց ամբողջությունը «պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմն ե» կազմում (Անին) և վորոնց ոգնությամբ և իրագործվում պրոլետարիատի դիկտատուրայի այսորվա աշխատանքը։

Այդ ինչ բաներ են «փոկերը» կամ «լծակները» պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում։ Այն ինչ բան և «ուղղություն տվող ույժը»։ Ինչի՞ են նըրանք հարկավոր։

Լծակները կամ փոկերը՝ այդ պրոլետարիատի մասսայական այն կազմակերպություններն են, առանց վորոնց ոգնության անհնարին և դիկտատուրայի իրագործումը,

Ուղղություն տվող ույժը՝ այդ պրոլետարիատի առաջավոր ջոկատն ե, այդ նրա ավանդարդն ե, վոր պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական ղեկավարույժն և հանդիսանում։

Այդ փոկերը, լծակները և ուղղություն տվող ույժը պրոլետարիատին անհրաժեշտ են նրա համար, վոր առանց նրանց՝ հանդեպ կազմակերպված և սպառագինված կապիտալի՝ նա իր հաղթությանը հետամտող պայքարում կը մնար անզեն բանակի վիճակում։ Այդ կազմակերպությունները պրոլետարիատին անհրաժեշտ են այն պատճառով, վոր առանց զրանց նա անխուսափելի պարտություն կը կրեր բուրժուազիայի տապալումը հետամտող իր պայքարում, իր իշխանության ամրացումը հետամտող պայքարում, սոցիալիզմի կառուցումը հետամտող իր պայքարում։ Այդ կազմակերպությունների սիստեմատիկ ոգնությունը և ավանդարդի ուղղություն տվող ույժն անհրաժեշտ են նրա համար, վոր առանց այդ պայմանների անհնարին և շատ ու քիչ տեսական և ամուր պրոլետարիատի դիկտատուրա։

Վճրոնք են այդ կազմակերպությունները,

Առաջին՝ դա բանվորների արհեստակցական մի-

ուրյուններն են իրանց ճյուղավորութներով կենդրոնում և տեղերում՝ իբրև մի ամբողջ շարք արտադրական, կուլտուրական, դաստիարակչական և այլ կազմակերպությունները։ Նրանք միացնում են բոլոր արհեստների բանվորներին։ Այդ կուսակցական կազմակերպություն չե։ Արհմիությունները մեզ մոտ տիրող բանվոր դասակարգի համապարփակ կազմակերպություններ կարելի յե անվանել։ Նրանք կոմմունիզմի գործոց են հանդիսանում։ Նրանք են, վոր իրանց միջից տալիս են լավագույն մարդկանց՝ զեկավար աշխատանք տանելու կառավարչության բոլոր ճյուղերում։ Նրանք իրագործում են կապը բանվոր դասակարգի առաջավորների և հետամնացների միջին։ Նրանք բանվորական մասսաներին միացնում են բանվոր դասակարգի ավանդարդի հետ։

Յերկրորդ՝ այդ խորհուրդներն են իրանց բազմաթիվ ճյուղավորութներով կենդրոնում և տեղերում՝ իրարև վարչական, տնտեսավարական, ուղղմական, կուլտուրական և այլ պետական կազմակերպություններ, ավելացրած գրան անթիվ բազմություն ինքնածագ մասսայական կազմակերպություններ աշխատավորների, վոր կուտաակվում են այդ կազմակերպությունների մեջ և նրանց միացնում բնակչության հետ։ Խորհուրդները քաղ օքի և գյուղի բոլոր աշխատավորների մասսայական կազմակերպություններն են։ Դա կուսակցական կազմակերպություն չե։ Խորհուրդները պրոլետարիատի դիկտատուրայի ուղղակի արտահայտիչն են։ Խորհուրդների միջով ե անցնում ամեն կարգի ու ձեկ ձեռնարկութներ՝ ամրացնելու դիկտատուրան և կառուցելու սոցիալիզմը։ Խորհուրդների միջով ե իրագործվում

Շյուղացության պետական զեկավարությունը պրոլետարիատի կողմից։ Խորհուրդները միացնում են աշխատավորների միլիոնավոր մասսանները պրոլետարիատի հետ։

Յերրորդ՝ այդ բոլոր տեսակների կոռացիրացիան ե իր բոլոր ճյուղավորութներով։ Այդ աշխատավորների մասսայական կազմակերպությունն ե, վոր միացնում ե աշխատավորներին նախ և առաջ իբրև սպառողներ, իսկ ժամանակի ընթացքում նաև իբրև արտադրողներ (գյուղատնտեսական կոռպերացիա)։ Նա առանձին նըշանակություն ե ստանում պրոլետարիատի դիկտատուրայի ամրացումից հետո, լայն շինարարության շրջանում։ Նա դյուրացնում ե պրոլետարիատի ավանդաբարդի կապը գյուղացության մասսաների հետ և ստեղծում ե հնարավորություն՝ վերջիններին գրավելու սոցիալիզմի շինարարության հունը։

Չորրորդ՝ այդ յերիտասարդուրյան միուրյունն ե, Այդ քանվորական ու գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպությունն ե, վոչ-կուսակցական կազմակերպություն, բայց հարող կուսակցությանը։ Նա նպատակ ունի ոգնելու կուսակցությանը՝ յերիտասարդ սերունդը սոցիալիզմի վագով դաստիարակելու գործում։ Նա յերիտասարդ պահեստի ույժ ե մատակարարում պրոլետարիատի մնացած բոլոր մասսայական կազմակերպություններին՝ կառավարական բոլոր ճյուղերում։ Յերիտասարդության միությունն առանձին նշանակություն ե ստացել պրոլետարիատի դիկտատուրայի ամրացումից հետո, պրոլետարիատի գայն կուլտուրական և գաստիարակչական աշխատանքի շրջանում։

Վերջապես՝ այդ պրոլետարիատի կուսակցությունն է, նրա ավանդարդը։ Նրա ույժը կայանում է այն բանում, վոր նա պրոլետարիատի բոլոր մասսայական կազմակերպություններից իր մեջն և հավաքում բոլոր լավագույն մարդկանց։ Նրա կոչումը կայանում է այն բանում, վոր պիտի միացնի առանց բացառության պրոլետարիատի բոլոր մասսայական կազմակերպությունները և մի նոպատակի ուղիե նրանց գործողությունները՝ պրոլետարիատի ազատազրության նըպատակին։ Իսկ միացնելու առաջնորդել նրանց մի նոպատակի գծով բացարձակապես անհրաժեշտ է, վորովհետև առանց դրան անհնարին և պրոլետարիատի պայքարի միասնականությունը, վորովհետև առանց դրան անհնարին և պրոլետարական մասսաների ղեկավարությունը նրանց իշխանության համար վարած պայքարում, նրանց սոցիալիզմի կառուցման պայքարում։ Բայց միացնելու ուղեկավարել պրոլետարիատի մասսայական կազմակերպությունների աշխատանքը ընդունակ է միայն պրոլետարիատի ավանդարդը, նրա կուսակցությունը։ Միայն պրոլետարիատի կուսակցությունը, միայն կոմմունիստների կուսակցությունը ընդունակ է պրոլետարիատի ղեկատուրայի սիստեմում իրագործելու հիմնական ղեկավարի այդ դերը։

Ինչու:

«Առաջին՝ այն պատճառով, վոր կուսակցությունը բանվոր դասակարգի լավագույն տարրերի ժողովատեղին է, տարրերի, վորոնք ուղղակե կապեր ունեն պրոլետարիատի անկուսակցական կազմակերպությունների հետ և հաճախ ղեկավարում են նրանց։ Յերկրորդ՝ այն պատճառով, վոր

կուսակցությունն իրեն բանվոր դասակարգի լավագույն մարդկանց ժողովատեղի, լավագույն դպրոցն և հանդիսանում բանվոր դասակարգին առաջնորդներ մշակելու, առաջնորդներ՝ ընդունակ ղեկավարելու իր դասակարգի ամեն ձևի կազմակերպությունները։ Յերրորդ՝ այն պատճառով, վոր կուսակցությունն իրեն բանվոր դասակարգի առաջնորդների լավագույն դպրոց, իր փորձով ու հեղինակությամբ միակ կազմակերպությունն և հանդիսանում՝ ընդունակ կենդրոնացնելու պրոլետարիատի պայքարի ղեկավարությունը և այսպիսով ընդունակ դարձնելու բանվոր դասակարգի բոլոր և ամեն կարգի անկուսակցական կազմակերպությունները դասակարգի հետ միացնող սպասարկու որգաններ և փոկեր» (տես «Լենինի նիզմի հիմքերի մասին»):

Կուսակցությունը հիմնական ղեկավար ույժն և պրոլետարիատի ղիկտատուրայի սիստեմում։

«Կուսակցությունը պրոլետարիատի դասակարգային միացման բարձրագույն ձևն է» (Լենին)։

Յեկայնպես՝ արհմիությունները՝ իրեն պրոլետարիատի մասսայական կազմակերպություն, վոր կապում է կուսակցությունը դասակարգի հետ նախ և առաջ պետական գծով։ Կոռպերացիան՝ իրեն գլխավորապես գյուղացության մասայական կազմակերպություն, վոր կապում է կուսակցությունը գյուղացիան մասայական կազմակերպություն և առաջ տնտեսավարական մասսաների հետ նախ և առաջ տնտեսավարական

գծով, գյուղացությունը սոցիալիստական շինարարության գծով. յերթասարդության միուրյունը՝ իրրերանվարական և գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպություն, վոր կոչված ե պրոլետարիատի ավանդաբղի համար գյուրացնել նոր սերընդի սոցիալիստական դաստիարակությունը և մշակել յերիտասարդ պահեստի ույժ. և, վերջապես, կուսակցությունը՝ իրրե հիմնական ուղղություն տվող ույժ պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում՝ կոչված ե դեկավարելու բոլոր այդ մասսայական կազմակերպությունները, — այսպես ե ընդհանրապես դիկտատուրայի «մեխանիզմի» պատկերը, «պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմի» պատկերը:

Առանց կուսակցության, իրրե հիմնական դեկավար ույժի, անհնարին ե շատ ու քիչ տեսական և ամուր պրոլետարիատի դիկտատուրա,

Այսպիսով, Լինինի բառերով խոսելով՝ «ընդհանրապես և ամբողջությամբ ստացվում ե ձևականորեն վոչ կոմմունիստական, ճկուն և համեմատաբար լայն, խիստ հզոր պրոլետարական ապարատ, վորի միջոցով կուսակցությունը սերտ կապված ե դասակարգի յեկմասայի հետ և վորի միջոցով կուսակցության դեկավարությամբ իրագործում ե դասակարգի դիկտատուրան» (տես հ. 17-րդ, էջ 139):

Այդ չի նշանակում, հարկանվ, թե կուսակցությունը կարող ե կամ պետք ե փոխարինե արհմիությունները, խորհուրդները և մյուս մասսայական կազմակերպությունները: Կուսակցությունը իրագործում է պրոլետարիատի դիկտատուրան: Բայց նա իրագործում է այդ վոչ անմիջականորեն, այլ արհմիություն-

ների ոգնությամբ, խորհուրդների և նրանց ճյուղավորութերի միջոցով: Առանց այդ «փոկերի» շատ ու քիչ ամուր դիկտատուրա անհնարին կըլիներ:

«Զի կարելի, — ասում ե Լինինը, — իրագործել դիկտատուրան առանց մի քանի «փոկերի», վոր ձգվում են ավանդաբղից գեպի առաջավոր դասակարգի մասսան, նրանից գեպի աշխատավոր մասսան»... «Կուսակցությունը, այսպես ասած, իր մեջ ե հավաքում պրոլետարիատի ավանդաբղից և այդ ավանդաբղից իրագործում ե պրոլետարիատի դիկտատուրան: Չունենալով այնպիսի պատվանդան, ինչպես արհմիությունները, չի կարելի պետական գործողություններ (Փունկցիա) կատարել: Իսկ այդ ելի իրագործել ստիպողական ե մի շարք առանձին ինչ-վոր նոր տիպի հաստատությունների միջոցով, այն ե՝ խորհրդային ապարատի միջոցով»\*) (տես հ. 18-րդ, մ. 1, էջ 8—9):

Կուսակցության դեկավար դերի գերագույն արտահայտությունը, որինակ, մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ, պրոլետարիատի դիկտատուրայի յերկրում, հարկ և ճանաչել այն փաստը, վոր առանց կուսակցության դեկավար ցուցմունքների մեր խորհրդային և մյուս մասսայական կազմակերպությունների կողմից չի լուծվում և վոչ մի կարևոր քաղաքական կամ կազմակերպչական խնդիր: Այս իմաստով կարելի կըլինի ասել թե պրոլետարիատի դիկտատուրան ըստ եռորյան նրա ավանդաբղից «դիկտատուրա յե», նրա կուսակցության՝ իրրե պրոլետարիատի հիմնական դե-

\*) Ընդգծութերն իմն են — ի. ՍՏ.

կավաք ույժի՝ «դիկտատուրա. յԵ»։ Ահա ինչ ե ասում մասին կենինը կոմինտերնի 2-րդ կոնցրեսում։

«Տեսներն ասում ե, թե ինքը պրոլետարիատի դիկտատուրայի կողմանից ե, բայց պրոլետարիատի դիկտատուրան ամբողջովին այնպես չի պատկերացնում մեզ։ Նա ասում ե, թե պրոլետարիատի դիկտատուրայի տակ մենք ըստ եռուրյան\* հասկանում ենք նրա կազմակերպվածութիւն գիտակից փոքրամասնության դիկտատուրա։ Յեվ իսկապես, կապիտալիզմի դարաշրջանում, յերբ բանվորական մասսաներն անընդհատ շահագործության են յենթարկվում և չեն կարողանում զարգացնել իրանց մարդկային ընդունակությունները, առավել բնորոշը բանվորականքաղաքական կուսակցությունների համար հանգիստանում ե հենց այն, վոր նրանք կարող են ընդգծել միայն իրանց դասակարգի փոքրամասնությունը։ Քաղաքական կուսակցությունը կարող ե միացնել միայն դասակարգի փոքրամասնությունը այնպես, ինչպես իսկապես գիտակիցքանվորները ամեն մի կապիտալիստական հասարակության մեջ կազմում են միայն բոլոր բանվորների փոքրամասնությունը։ Այս պատճառով մենք ստիպված ենք ճանաչել վոր միայն այդ գիտակիցքոքրամասնությունը կարող ե ղեկավարել լայն

անվորական մասսաները և նրանց տանել իրենեփեց։ Յեթե ընկեր Տեսներն ասում ե, թենա թշնամի յե կուսակցության, բայց միաժամանակ կողմնակից ե նրան, վոր ավելի լավ կազմակերպված ե առավել հեղափոխական բանվորների փոքրամասնությունը ուղի ցույց տա վողջ պրոլետարիատին, ապա յես ասում եմ, վոր իսկապես մեր

\*) Ընդգծութիւններն իմն են։ — Ի. ՍՏ.

մեջ տարբերություն չկա» (հ. 17-րդ, եջ 270)։

Սակայն նշանակում ե այս, թե պրոլետարիատի դիկտատուրայի և կուսակցության ղեկավարի դերի (կուսակցության «դիկտատուրա») միջև կարելի յե հավասարության նեան գծել, թե կարելի յե նույնացնել առաջինը յերկրորդի հետ, թե առաջինը կարելի յե փոխարինել յերկրորդով։ Իհարկե չի նշանակում, իհարկե չի կարելի։ Ահա, որինակ, ընկեր Սորինն ասում ե, թե «պրոլետարիատի դիկտատուրան, մեր կուսակցուրյան դիկտատուրան ե» (տես «Լենինի ուսմունքը կուսակցության մասին», եջ 95)։ Այս դրությունը, ինչպես տեսնում եք, «կուսակցության դիկտատուրան» նույնացնում ե պրոլետարիատի դիկտատուրայի հետ։ Կարելի՞ յե լենինիզմի հողի վրա մնալով՝ ուղիդ ճանաչել այդ նույնացումը։ Վոչ, չի կարելի։ Յեվ ահա ինչն։

Առաջին։ Կոմինտերնի 2-րդ կոնցրեսում արտասանած Լենինի ճառի վերը հիշատակված ցիտատում Լենինը ամենեին չի նույնացնում կուսակցության ղեղավար դերը պրոլետարիատի դիկտատուրայի հետ։ Նա խոսում ե միայն այն մասին, թե «միայն ցիտակից փոքրամասնությունը (այսինքն կուսակցությունը, ի. Մ.Տ.) կարող ե ղեկավարել լայն բանվորական մասսաներ և նրանց տանել իր յետեից», թե նենց այս իմաստով «պրոլետարիատի դիկտատուրայի տակ մենք ըստ եռուրյան\*» հասկանում ենք նրա կազմակերպվածութիւն գիտակից փոքրամասնության դիկտատուրա։ Ասել—«ըստ եռության», գեռ չի նշանակում ասել—«ամբողջապես»։ Մենք հաճախ ենք ասում, թե ազգային հարցը ըստ եռության գյուղացիական հարց ե։ Յեվ այդ իսպառ ուղիդ ե։ Բայց դա գեռ չի նշանակում, թե

\*) Ընդգծութիւններն իմն են։ — Ի. ՍՏ.

աղքային հարցը զյուղացիական հարցով և սպառվում, թե իր ծավալով զյուղացիական հարցը հավասար ե աղքային հարցին, թե զյուղացիական հարցը նույնական և աղքային հարցին հարցի հետ, Կարիք չկա ապացուցելու, թե աղքային հարցը իր ծավալով լայն ու ճոխ է զյուղացիական հարցից: Նույնն ել համեմատությամբ Կարելի յե ասել կուսակցության ղեկավարի ղերի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին: Յեթե կուսակցությունն անց ե կացնում պրոլետարիատի դիկտատուրան և այս իմաստով պրոլետարիատի դիկտատուրան բայ եռյան հանդիսանում ե նրա՝ կոնսակցության «դիկտատուրա», այդ գեռ չի նշանակում, թե «կուսակցության դիկտատուրան» (ղեկավար ղերը) նույնական և պրոլետարիատի դիկտատուրայի հետ, թե տուաջինն իր ծավալով հավասար ե յերկրորդին: Կարիք չկա ապացուցելու, թե պրոլետարիատի դիկտատուրան ծավալով լայն ու ճոխ է ղեկավար ղերից: Կուսակցությունն անց ե կացնում պրոլետարիատի դիկտատուրան, բայց նա անց ե կացնում պրոլետարիատի, այլ վոչ թե վորեե այլ դիկտատուրա: Ով նույնացնում ե կուսակցության ղեկավար ղերը պրոլետարիատի դիկտատուրայի հետ նա փոխարինում ե պրոլետարիատի դիկտատուրան կուսակցության «դիկտատուրայով»:

Յերկրադ: Պրոլետարիատի մասսայական կազմակերպությունների և վոչ մի կարենոր վորոշում առանց կուսակցության ղեկավար ցուցմունքի զլուխ չի գալիս: Այս իսպառ ճիշտ ե: Բայց միթե այս նշանակում ե, թե պրոլետարիատի դիկտատուրան սպառվում ե կուսակցության ղեկավար ցուցմունքներով: Նշանակում ե

այս միթե, թե այս պատճառով կուսակցության ղեկավար ցուցմունքները կարելի յե նույնացնել պրոլետարիատի դիկտատուրայի հետ: Հարկավ չի նշանակում: Պրոլետարիատի դիկտատուրան կուսակցության ղեկավար ցուցմունքներն են՝ ավելացրած այդ ցուցմունքների կիրառումը պրոլետարիատի մասսայական կազմակերպությունների ձեռքով, ավելացրած նրանց կենսագործումը բնակչության կողմից: Մենք այսուհետնչափս տեսնում եք, զործ ունենք մի ամբողջ շարք անցքերի և միջանցիկ աստիճանների հետ, վորոնք պրոլետարիատի դիկտատուրայի այնքան ել անկարեվոր մոմենտը չե, վոր կազմում են: Կուսակցությունն ղեկավար ցուցմունքները և նրանց կյանքում կիրառելու մեջ, հետևաբար տեղ են բանում ղեկավարվողների կամքն ու գործողությունները, գասակարգի կամքն ու գործողությունները, նրա պատրաստակամությունը (կամ չցանկանալը) պաշտպանել այդ ցուցմունքները, նրա հմտությունը (կամ անհմտությունը) հենց այնպես անցկացնելու ինչպիս այդ պահանջում ե հանգամանքը: Հազիկ թե կարիք կապացուցելու, թե մի կուսակցություն, իր վրա առնելով ղեկավարությունը, չի կարող հաշվի առնել ղեկավարվողների կամքը, վիճակը, գիտակցության մակարդակը, չի կարող հաշվեցնելից դեն նետել իր դառնակարգի կամքը, վիճակը և գիտակցության մակարդակը: Այս պատճառով՝ ով կուսակցության ղեկավար ղերը նույնացնում ե պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա գասակարգի կամքն ու գործողությունները փոխարինում ե կուսակցության ցուցմունքներով:

Յերրորդ: «Պրոլետարիատի դիկտատուրան, ասում  
ե Լենինը, հաղթանակած և քաղաքական իշխանությունն իր ձեռքը վերցրած պրոլետարիատի դասակարգային կոփվն ե» (տես հ. 16-րդ, եջ 240): Ինչում  
կարող ե արտահայտվել այդ դասակարգային կոփվը:  
Այն կարող ե արտահայտվել պրոլետարիատի մի շարք  
զինված յելույթներում ընդգեմ տապալված բուրժուազիայի հարձակումների կամ ընդգեմ ոտարազգի բուրժուազիայի ինտերվենցիայի (զինված միջամառության),  
Այն կարող ե արտահայտվել քաղաքացիական պատերազմում, յեթե պրոլետարիատի իշխանությունը գեռ  
չի ամրացած: Այն կարող ե արտահայտվել պրոլետարիատի լայն կազմակերպչական և շինարարական աշխատանքում, գործի գրավելով լայն մասսաններ նրանց հետո, հենց վոր իշխանությունն ամրացել ե: Այս  
բոլոր գիրքերում գործող անձ ե հանդիսանում պրոլետարիատը վորպես դասակարգ: Զի յեղած, վոր կուսակցությունը, մեն-մենակ կուսակցությունը, կազմակերպե այս բոլոր յելույթները բացառապես իր սեփական ույժերով, առանց դասակարգի աջակցության: Սովորաբար նա միայն ղեկավարում ե նրանց այն չափով, վոր չափով ունի իր յետև դասակարգի աջակցությունը: Վորովինետե կուսակցությունը չի կարող սպասել, չի կարող փոխարինել դասակարգը: Վորովինետե կուսակցությունն իր բոլոր կարեոր, ղեկավար գերով հանդերձ՝ այնուամենայնիվ մնում ե դասակարգի մասը: Այս պատճառով՝ ով նույնացնում ե կուսակցության ղեկավար գերը պրոլետարիատի դիկտատուրայի հետ՝ նա դասակարգը փոխարինում ե կուսակցությունով:

Չորրորդ: Կուսակցությունն իրագործում է պրոլետարիատի դիկտատուրան: «Կուսակցությունը՝ այդ պրոլետարիատի անմիջականորեն կառավարող ավանդարդն ե, այդ ղեկավարն ե» (Լենին): Այս իմաստով կուսակցությունը վեցնում է իշխանությունը, կուսակցությունը կառավարում է յերկիրը: Բայց այդ գեռ չի նշանակում, թե կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրան իրագործում է պետական իշխանությունից զատ, առանց պետական իշխանության, թե կուսակցությունը կառավարում է յերկիրը խորհուրդներից զատ, վոչ խորհուրդների միջոցով: Այս գեռ չի նշանակում, թե կուսակցությունը կարելի յե նույնացնել խորհուրդների հետ, պետական իշխանության հետ: Կուսակցությունն իշխանության միջուկն ե: Բայց նա չե և չի կարող նույնացվել պետական իշխանության հետ: «Բըրկ կառավարող կուսակցություն, — ասում ե Լենինը, — մենք չեյինք կարող կուսակցական գաղաթների հետ չծուլել խորհրդային գաղաթները, և նրանք մեզ մոտ ձուլված են և կըլինեն այդպիսին» (տես հ. 18-րդ, մ. 1, եջ 112): Այդ խոպանուղիդ ե: Բայց դրանով Լենինը ամենաին չի ուզում ամել, թե մեր խորհրդային հաստատություններն ամբողջությամբ, որինակ, մեր բանակը, մեր տրանսպորտը, մեր տնտեսական հիմնարկները և այլին հանդիսանում են մեր կուսակցության հիմնարկները, թե կուսակցությունը կարող ե փոխարինել խորհուրդներին և նրանց ձյուղավորումներին, թե կուսակցությունը կարելի յե նույնացնել պետական իշխանության հետ: Լենինը քանիցս ասել ե, թե «խորհուրդների սիստեմը պրոլետարիատի դիկտատուրան ե», թե «Խորհրդային

իշխանությունը պրոլետարիատի դիկտատուրան ե» (տես հ. 16-րդ, եջ 44-46), բայց նա յերբեք չի ասել թե կուսակցությունը պետական իշխանություն ե, թե խորհուրդները և կուսակցությունը միևնույն բանն են: Կուսակցությունը, վոր ունի մի քանի հարյուր հազար անդամ, դեկավարում ե խորհուրդները և նրանց ճյուղավորությունը կենդրում ու տեղերում, վորոնք ընդգրկում են միքանի միլիոն մարդիկ, կուսակցական և անկուսակցական, բայց նա չի կարող և չպետք ե նըրանց փոխարինե իրանով: Այս ինչու յե կենինն առում, թե «դիկտատուրան իրագործում ե խորհուրդներում կազմակերպված պրոլետարիատը, վորին դեկավարում ե բայլշմիկների կոմմունիստական կուսակցությունը», թե «կուսակցության վաղ աշխատանքն ընթանում ե խորհուրդների միջոցով\*), վորոնք առանց արհեստի տարբերության միացնում են աշխատավոր մասսաններին» (տես հ. 17-րդ, եջ 138-140), թե դիկտատուրա ասած՝ «ստիպմունք ե իրագործել... խորհրդային ապարատի միջոցով\*» (տես հ. 18-րդ, մ. 1, եջ 8): Այս պատճառով՝ ով կուսակցության դեկավար գերը նույնացնում ե պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա փոխարինում ե խորհուրդները, պետական իշխանությունը կուսակցությունով:

Հինգերորդ: Պրոլետարիատի դիկտատուրայի հասկացողությունը պետական հասկացողություն ե: Պրոլետարիատի դիկտատուրան իր մեջ պարտադրաբար բովանդակում ե բռնության հասկացողություն: Առանց բռնության դիկտատուրա չի լինում, յեթե դիկտատուրան այս խոսքի ստույգ իմաստով ըմբռնենք: Լենինը

\*) Ընդգծություն իմն են:—Ի. ՍՏ.

պրոլետարիատի դիկտատուրան բնորոշում ե իբրև «անմիջականորեն բռնության վրա հենվող իշխանություն» (տես հ. 17-րդ, եջ 124): Այս նկատառությունը խոսել կուսակցության դիկտատուրայի մասին պրոլետարեների դասակարգի նկատմամբ և նույնացնել այն պրոլետարիատի դիկտատուրայի հետ,—այդ նշանակում ե խոսել այն մասին, թե կուսակցությունը իր դասակարգի նկատմամբ պիտի լինի վոչ միայն դեկավար, վոչ միայն առաջնորդ և ուսուցիչ, այլ նրա նկատմամբ իր տեսակի բռնություն գործադրող պետական իշխանություն: Այս պատճառով՝ ով նույնացնում է «կուսակցության դիկտատուրան» պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա լոելեայն մեկնում ե նրանցից, թե կարելի յե բռնության վրա կառուցել կուսակցության հեղինակությունը, վոր անհեթեթություն ե և խոպառ անհաշտելի լենինիզմի հետ: Կուսակցության հեղինակությունը պաշտպանվում ե բանվոր դասակարգի վստահությամբ: Իսկ բանվոր դասակարգի վստահությունը նվաճվում ե վոչ թե բռնությամբ,—բռնությամբ այն միայն սպանվում ե,—այլ կուսակցության ուղիղ թերորիայով, կուսակցության ուղիղ քաղաքականությամբ, կուսակցության նվիրվածությամբ բանվոր դասակարգին, նրա կապով բանվոր դասակարգի մասսաների հետ, նրա պատրաստակամությամբ, նրա հմտությամբ համոզելու մասսաները իր ուղիղ լոգունդների մեջ:

... իսկ այս բոլորից հետո ի՞նչ ե հետեւում:

Այստեղից հետեւում ե այն, վոր՝

1) լենինը կուսակցության դիկտատուրա բառը

\*) Ընդգծություն իմն ե—Ի. ՍՏ.

գործ ե ածում վոչ այս խոսքի ստույգ իմաստով՝ («բռնության վրա հենվող իշխանություն»), այլ փոխարերական իմաստով, դեկավարության իմաստով։

2) Ո՞վ կուսակցության դեկավարությունը նույնացնում և պրոլետարիատի դիմացաւրայի հետ, նա պղավաղում և ինքինին, անձշտորեն կուսակցությանը բռնության գործողություններ սեփականացնելով բանվոր դասակարգի նկատմամբ իր ամբողջության մեջ։

3) Ո՞վ կուսակցությանը սեփականացնում և նըրան անընդունակ բռնության գործողություններ բանվոր դասակարգի նկատմամբ, նա խախտում և ավանդարդի և դասակարգի, կուսակցության և պրոլետարիատի միջև յեղած ուղիղ փոխհարաբերությունների տարրական պահանջները։

Մենք այսպիսով ընդհուպ մոտեցանք այն փոխհարաբերություններին, վոր կա կուսակցության և դասակարգի միջև, կուսակցականների և անկուսակցականների միջև բանվոր դասակարգի ծոցում։

Ինինն այս փոխհարաբերությունները բնորոշում ե իրեր «փոխհարաբերություն բանվոր դասակարգի ավանդարդի և բանվորական մասսայի միջև» (տես հ. 18-րդ, մ. 1, հջ 135)։

Ի՞նչ ե նշանակում այդ։

Առաջին՝ այդ նշանակում ե, վոր կուսակցությունը նըրազգած կերպով պիտի ուկնդրե մասսաների ձայնին, վոր նա պետք ե ուշադիր վերաբերվի դեպի մասսաների հեղափոխական բնազդը, վոր նա պետք ե ուսումնամիջնամասիր մասսաների պայքարի գործնականը։

\*) Ընդգծումն իմն ե: Ի. ՍՏ.

Երա վրա ստուգելով իր քաղաքականության ճշտությունը, վոր նա պետք ե, հետևաբար, վոչ միայն սովորեցնե, այլև սովորի մասսաներից։

Յերկրորդ՝ այդ նշանակում ե, վոր կուսակցությունը որը որին պիտի նվաճի պրոլետարական մասսաների վստահությունը, վոր նա պետք ե քաղաքականությամբ և իր աշխատանքով դարձնե իր համար մասսաների պաշտպանությունը, վոր նա պետք ե չիրամայե, այլ նախ և առաջ համոզե, դյուրացնելով մասսաներին սեփական փորձով ճանաչելու կուսակցության քաղաքականության ճշտությունը, վոր նա, հետևաբար, պետք ե լինի դասակարգի առաջնորդը, գեկավարը, ուսուցիչը։

Այս պայմանների խախտումը նշանակում և խախտումն այն ուղիղ փոխհարաբերությունների, վոր կա ավանդարդի և դասակարգի միջև, նշանակում և ջլատումն «փոխադարձ վստահության», փլուզումն և դասակարգային, և կուսակցական կարգապահության։

«Հավանորեն, ասում ե լինինը, այժմ արդեն համարյա ամեն վոք տեսնում ե, վոր բայլշմիկները չեյին մնա իշխանության գլուխ վոչ թե յերկու և կես տարի, այլև յերկու և կես ամիս» առանց խստագույն, մեր կուսակցության մեջ տիրող իսկապես յերկաթե կարգապահության, առանց բանվոր դասակարգի վողջ մասսայի կողմից կուսակցության հայտնաբերած ամենալիակատար յեվ անվերապահ պատվանության \*), այսինքն այն ամենով, ինչ կա նրա մեջ մտածող, շիտակ, անձնազոհ, ազգեցիկ, ընդունակ իր յետեց տանելու կամ քաշելու մնացած շերտերը։ (Տես հ. 17-րդ, հջ 117)։

«Բնդգեմ հին հասարակության ույժերի և ավանդությունների, ասում ե ապա լենինը, պրոլետարիատի դիկտատուրան համառ պայքար ե, արյունոտ և անարյուն, բռնական և խաղաղ, սպածական և տնտեսական, մանկավարժական և վարչական։ Միլիոնների ու տասնյակ միլիոնների սովորության զորությունն ամենասարսափելի ույժն ե։ Առանց կուսակցության, յերկաթի, պայքարում կոփած, առանց կուսակցության, վոռ վայելում ե վստահությունը այն բոլոր ժիակուրյան, ինչ ունի սվյալ դասակարգը \*), առանց կուսակցության, վոր գիտե հետեւ մասսայի տրամադրությանը և ազգել նրա վրա, — նման պայքար հաջողությամբ անկարելի յե վարել» (տես հ. 17-րդ, եջ 136):

Բայց ինչպես և նվաճում կուսակցությունը դասկարգի այդ վստահությունն ու աջակցությունը Ինչպես և կազմավորվում պրոլետարիատի դիկտատուրայի համար անհրաժեշտ յերկաթե կարգապահությունը, ինչ հողի վրա յե նա աճում։

Ահա թե ինչ ե տսում այդ մասին լենինը։

«Ինչնվ ե պահպանվում պրոլետարիատի հեղափոխական կուսակության կարգապահությունը. ինչնվ ե ստուգվում, ինչնվ սատարվում։ Առաջինը՝ պրոլետարիատի ավանդարդի գիտակցությամբ և նրա նվիրվածությամբ հեղափոխությանը, նրա տոկունությամբ, ինքնազությամբ, հերոսությամբ։ Յերկորորդ՝ նրա հապալությամբ կապվել մոտենալ վորոշ չափով, յեթե

\*) Ընդգծումն իմն ե. Ի. Ս.

կուգեք, ձուլվել աշխատավորների ամենալայն մասսային \*), առաջին գլուխ պրոլետարական, բայց նույնապես յեվ վոչ պտուեարական աշխատավոր մասսային։ Յերկորորդ՝ այն ավանդարդի ձեռքով իրագործվող քաղաքական դեկավարության ձշությամբ, նրա քաղաքական ստրատեգիայի (ուզմա-զիատության) և տակտիքայի (գործելակերպի) ձշությամբ, պայմանով, վոր ամենալայն մասսաները սեփական փորձով համոզվեն այդ ձշության մեջ։ Առանց այս պայմանների հեղափոխական մեջ, վոր իսկապես ընդունակ է կուսակցության մեջ, վոր իսկապես ընդունակ է առաջավոր գասակարգի կուսակցությունը լինելու, նպատակ ունի տապալելու բուրժուազիան և վերակազմելու վողջ հասարակությունը, կարգապահությունն անիրազործելի յե։ Առանց այս պահությունն անիրազործելի իմ։ Առանց այս պայմանների կարգապահություն ստեղծելու փորձերն անխուսափելիորեն դառնում են անամիջություն, ֆրազ, ծամածություն։ Իսկ մյուս կողմից այդ պայմանները միանգամբ չեն ծագում։ Նրանք մշակվում են միայն տեսական աշխատանքով, գժվարին փորձով։ Նրանց մշակումը հեշտանքով, դժվարին փորձով։ Նրանց մշակումը հեշտանքում ե հեղափոխական ուղիղ թերոխայով, վոր իր հերթին դոգմա չե, այլ կազմավորվում ե միայն իսկապես մասսայական և իսկապես հեղափոխական շարժման գործնականի հետ սերտ կապակցությամբ» (տես ԽVII, եջ 119):

Յեվ ապա.

Կապիտալիզմի վրա տանելիք հաղթանակի հաջողության համար պահանջվում ե ուղիղ փոխ-

\*) Ընդգծումն իմն ե. Ի. Ս.

<sup>\*)</sup> *Հնդկական իմաստ.*

սուցվածքի զորությամբ նըս քանակը բնակչության մեջ (տես հ. 17-րդ, եղ 232):

Այս ցիտատներից յերկում ե, վոր՝

1) Կուսակցության հեղինակությունը և յերկաթե կարգապահությունը բանվոր դասակարգի մեջ, վորածառաթեշտ և պրոլետարիատի դիկտատուրայի համար,— կառուցվում են վոչ թե վախի կամ կուսակցության «անսահմանափակ» իրավունքների վրա, այլ վստահության, վորածառաթեշտյան, վորածառաթեշտյան գաղափառի կուսակցությունը, այն պաշտպանության, վոր կուսակցությունն ստանում ե բանվոր դասակարգի կողմից:

2) Բանվոր դասակարգի վատահությունը կուսակցության հանդեպ նվաճմում և վոչ միանդամից և վոչ բռնության միջոցով բանվոր դասակարգի նկատմամբ, այլ կուսակցության մասսաների մեջ վարած տեսական աշխատանքով, կուսակցության ուղիղ քաղաքականությամբ, կուսակցության ձիրքով՝ համոզելու մասսաներին սեփական փորձով ճանաչելու իր քաղաքականության ձշտությունը, կուսակցական ձիրքով՝ բանվոր դասակարգի աշխակցությունն ապահովելու իրան, բանվոր դասակարգի մասսաները տանելու իր յիշությունը և առաջարկեալ

3) Առանց կուսակցության ուղիղ քաղաքականության, կոփված մասսաների պայքարի փորձով, և առանց բանվոր գասակարգի վստահության չի լինում և չի կարող լինել կուսակցության խկական դեկապարություն.

4) Կուսակցությունը և նրա ղեկավարությունը,  
յիթե նա վայելում է գասակարգի վատահությունը և  
յիթե այդ ղեկավարությունը իսկական ղեկավարու-

թյուն և հանդիսանում, չեն կարող հակադրվել պրուետարիատի դիկտատուրային, վորովհետև առանց գասակարգի վստահությունը վայելող կուսակցության ղեկավարության (կուսակցության «դիկտատուրա») անհնարին և շատ ու քիչ ամուր պրոլետարիատի դիկտատուրա:

Առանց այդ պայմանների կուսակցության հեղինակությունը և յերկաթե կարգապահությունը կամ դատարկ ֆրազ և, կամ պարձենկոտություն և արկածախնդրություն:

Չի կարելի հակադրել պրոլետարիատի դիկտատուրան կուսակցության ղեկավարության («դիկտատուրային»): Չի կարելի, վորովհետև կուսակցության ղեկավարությունը զլիսալորն և պրոլետարիատի դիկտատուրայի մեջ, յեթե նկատի ունինանք շատուքիչ ամուր և լիակատար դիկտատուրա, այլ վոչ այնպիսին, վորպիսին եր, որինակ՝ Փարփիզի Կոմմունան, վորանկատար և անկայուն դիկտատուրա յեր: Չի կարելի, վորովհետև պրոլետարիատի դիկտատուրան և կուսակցության ղեկավարությունը բանում են, այսպիս ասած, աշխատանքի միենույն դիմք, գործում են միենույն ուղղությամբ:

«Մենակ հենց հարցի կարգումը,—ասում ենինը, «կուսակցության դիկտատուրան, թե՞ գասակարգի դիկտատուրա, առաջնորդների (կուսակցություն) դիկտատուրան, թե՞ մասանների (կուսակցության) դիկտատուրա» վկայում են մտքի անշափի և անելանելի շփոթության մասին... Բոլորին հայտնի յե, վոր մասսաները բաժանվում են դասակարգի... վոր դասակարգին ղեկավարում են

սովորաբար և ըստ մեծի մասին, զո՞նե արդիքաքաքակիթյունը յերկներում, քաղաքական կուսակցությունները, վոր քաղաքական կուսակցությունները իբրև ընդհանուր կանոն կառավարում են առավել կամ պակաս կայուն խմբակների ձեռքով, բաղկացած ավելի հեղինակավոր, աղեղիկ, փորձված, ամենապատասխանառու պաշտոններին ընտրվող անձերից, վորոնք առաջնորդ են կոչվում... Շաղակրատել... մինչև հակադրումը ընդհանրապիս մասսայի դիկտատուրային առաջնորդների դիկտատուրան, այդ ծիծաղաշարժ անհեթեթություն և հիմարություն են» (տես հ. 17-րդ, եջ 133—134):

Դա իսպառուղիղ է: Բայց այդ ուղիղ գրությունը բղխում է այն նախազրյալից, թե կան ուղիղ փոխարարերություններ ավանդարդի և բանվորական մասսայի, կուսակցության և դասակարգի միջև: Նա բղխում է այն յենթադրությունից, թե փոխարարերությունները ավանդարդի և դասակարգի միջև մնում են, այսպիս ասած, նորմալ մնում են «փոխադարձ վստահության» սահմաններում: Իսկ բայց անել յեթե վստահության միամաններում: Իսկ բայց անել յեթե վստահության միամաններում: Վասակարգի միջև, «փոխադարձ վստահությունը» կուսակցության և դասակարգի միջև: Ի՞նչ անել, յեթե կուսակցությունն ինքն եւ սկսում այսպիս անել, յեթե կուսակցությունն ինքն եւ սկսում այսպիս այնպիս իրան հակարգել դասակարգին՝ խախտելով դասակարգին հետ յեղած ուղիղ փոխարարերությունների հիմքերը, խախտելով «փոխադարձ վստահության» հիմքերը, Հնարավոր են ընդհանրապիս նման դեպքեր: Այն, հնարավոր են, յեթե կուսակցությունը մասսա-

ների մեջ իր հեղինակությունն սկսում ե կառուցել վոչ թե իր աշխատանքի և մասսայի վստահության, այլ իր «անսահմանափակ» իրավունքների վրա. յեթե կուսակցության քաղաքականությունը պարզապես ուղղի չե, իսկ նա չի կամենում վերաքննել և ուզդել իր սխալը. յեթե քաղաքականությունն ընդհանրապես ուղղի ե, բայց մասսաները պատրաստ չեն այն յուրացնելու, իսկ կուսակցությունը չի ուզում կամ չի կարողանում համբերել մինչ այն, վոր մասսանները սեփական փորձով հնարավորություն ունենան համոզվելու կուսակցության ճիշտ քաղաքականության մեջ. Մեր կուսակցության պատմությունը մի շարք նման դեպքեր գիտե: Մեր կուսակցության մեջ զանազան խմբակներ ու ֆրակցիաներ ընկել ու ցրվել են այն պատճառով, վոր նրանք խախտում ենին այս յերեք պայմաններից մեկը, իսկ յերեքն և բոլոր այս պայմանները միասին վերցրած:

Բայց սրանից բղխում ե, թե պրոլետարիատի դիկտատուրայի հակադրումը կուսակցության «դիկտատուրային» (դեկավորությանը) չի կարելի ուղիղ հանաչել միայն այն դեպքում.

1) Յերե կուսակցության դիկտատուրայի տակ բանվորական դասակարգի նկատմամբ հասկանալ վոչ թե դիկտատուրան այս խոսքի իսկական իմաստով («բռնության վրա հենվող իշխանություն»), այլ կուսակցության դեկավորությունը, բացասող բռնությունը դասակարգի նկատմամբ իր ամբողջության մեջ, նրա մեծամասնության դեմ, ինչպես և այդպես ինքնն ե հասկանում.

Յերե կուսակցությունը ավյալներ ունի դասա-

կարգի իսկական դեկավարը լինելու, այսինքն յեթե կուսակցության քաղաքականությունն ուղիղ ե, յեթե այդ քաղաքականությունը համապատասխանում է դասակարգի շահերին.

3) Յերե դասակարգը, դասակարգի մեծամասնությունն ընդունում ե այդ քաղաքականությունը, յուրացնում ե այն, կուսակցության աշխատանքի շնորհիվ համոզվում ե այդ քաղաքականության ճշտության մեջ՝ վստահում ե կուսակցությանը և պաշտպանում նրան. վստահում ե կուսակցությանը և պաշտպանում նրան:

Այս պայմանների խախտումն անխուսափելիորեն առաջացնում ե ընդհարում կուսակցության և դասակարգի միջև, նրանց միջև պատակտում, նրանց հակարգումը իրար:

Կարելի յե ույժով դասակարգի շինքին փաթաթել կուսակցության դեկավարությունը: Զե, չի կարելի: Համենայն դեպս նման դեկավարությունը չի կարող շատ ու քիչ տեսական լինել: Կուսակցությունը յերե նա կամենում ե պրոլետարիատի կուսակցություն, միավ պետք ե իմանա, վոր նա հանդիսանում ե նախական պետք ե դիկտատուրայի բանվոր դասակարգի առաջնորդ դեկավար, ուսուցիչ: Մենք չենք կարող մոռանուլ լենինի այդ մասին ասած խոսքերը՝ «Պետություն և հեղափոխություն» բրոցյուրում:

«Դաստիարակելով բանվորական կուսակցությունը՝ մարքսիզմը դաստիարակում ե պրոլետարիատի ավանդությունը, վոր ընդունակ ե վերցնելու իշխանությունը և տանելու վողջ ժողովուրդը դեպի սոցիալիզմ, ուղղություն տալու և կազմակերպելու նոր հասարակակարգ, լինելու աշխատավորների և շահագործվողների ուղղուրդը»:

սուցիքը, առաջնորդ դեկալարը\*) իր հասարակական կյանքի կառուցման գործում՝ առանց բուրժուազիայի և ընդդեմ բուրժուազիայի» (տես հ. 14-րդ, մ. 2, էջ 317):

Կարելի՞ յե ընդունել, վոր կուսակցությունը իսկապես դասակարգի զեկավարն ե, յեթե նրա քաղաքականությունը ճիշտ չե, յեթե նրա քաղաքականությունն ընդհարվում է դասակարգի շահերի հետ: Հարկավ չի կարելի: Նման դեպքերում, յեթե կուսակցությունը զեկավար ե ուղղում մնալ, պետք ե վերաբննել իր քաղաքականությունը, պետք ե շտկե իր քաղաքականությունը պիտի ճանաչե իր սխալը և ուղղե այն: Կարելի յեր այս դրությունը հաստատելու համար վկայություն բերել մեր կուսակցության պատմությունից գոնե այն փաստը, պարենի մասնատրման վերացման շրջանը, յերբ բանվորները և գյուղացիական մասսաները պարզապես դժգոհ ելին մեր քաղաքականությունից և այն ժամանակ կուսակցությունն ընդառաջեց, բաց ու շիտակ ընդառաջեց վերաբննելու այդ քաղաքականությունը: Ահա այն ժամանակ ինչ եր ասում էենինը 10-րդ համագումարում պարենի մասնատրման վերացման և նոր տնտեսական քաղաքականություն մոցնելու խնդրի մասին:

«Մենք չպետք ե ջանանք վորեն բան ծածկել այլ պետք ե ուղղաբար խոսենք, վոր գյուղացությունը մեկ մոտ հաստատված հարաբերությունների ձևից գժգոհ ե, վոր նա այդ փոխհարաբերությունների ձևը չի կամենում և այլիս այդպես ապրել չի կարող: Այդ անվիճելի յե:

\*) Ընդգծումն իմն ե: Ի. Ստ.

Նրա այդ կամքը վորոշակի յե արտահայտվել: Մյու աշխատավոր բնակչության վիթխարի մասաների կամքն ե: Մենք դրա հետ հաշվի պիտի նստենք, և մենք բավականաչափ վորդախոն քաղաքականությունը, վորպեսզի կտրուկ ասենք— յեկե վերաբննենք»\*) (տես հ. 18-րդ, մ. 1, էջ 138):

Կարելի՞ յե ընդունել վոր կուսակցությունը պիտի իր վեա վերցնի նախաձեռնությունն ու դեկավագանությունը կազմակերպելու մասսաների վճռական յերությունը միայն այն հիմունքով, վոր նրա քաղաքականությունն ընդհանրապես ուղիղ ե, յերե այդ քաղաքականությունը դեռ վստահություն և աջակցություն չի գտնում դասակարգի կողմից, ասենք, իր թյուն չի գտնում դասակարգի կողմից, յերե կուրաղաքական հետամմացության պատճառով, յերե կուրաղաքությանը դեռ չի հաջողվել համոզելու դասակարգությանը դեռ պարագանության ճշտության մեջ, ասենք զին իր քաղաքականության ճշտության մեջ, ասենք այն պատճառով, վոր դեռ չեն հասունացել դեպքերը: Զե, չի կարելի: Նման դեպքերում կուսակցությունը, յեթե նա կամենում ե խվական զեկավար լինել, պիտի կարողանա սպասել պիտի մասսաներին համոզելու գործականության ճշտության մեջ, պիտի մասներին ոգնե սեփական փորձով համոզվելու այդ քաղաքականության ճշտության մեջ:

«Յեթե հեղափոխական կուսակցությունները, ասում ե կենինը, մեծամասնություն չունեն հեղուփոխական դասակարգերի առաջալոր ջոկատներում և յերկրում, ապա խոսք չի կարող լինել ապստամբության մասին» (տես հ. 14-րդ, մ. 2, էջ 255):

\*) Ընդգծումն իմն ե: Ի. Ստ.

«Առանց բանվոր դասակարգի մեծամասնության հայացքների փոփոխման հեղափոխությունն անհնարին ե, իսկ այդ փոփոխումն ըստեղծվում ե մասսաների քաղաքական փորձով» (տես հ. 17-րդ, էջ 172):

«Պրոլետարական ավանդարդը դաշտակարպեանվաճած ե: Այդ գլխավորն ե: Առանց դըրան չի կարելի անել առաջին իսկ քայլը դեպի հաղթություն, թայց դրանից մինչև հաղթությունը դեռ շատ հեռու ե: Միմիայն ավանդարդով հաղթել չի կարելի: Թանի վողջ դասակարգը, քանի լայն մասսաները դիրք չեն բռնել կամ ավանդարդի ուղղակի պաշտպանության համար կամ գոյն բարյացտակամ չեզոքության իմաստով նրա նկատմամբ և կատարյալ անընդունակություն ցույց տալով աջակցելու նրա հակառակորդին՝ միմիայն ավանդարդը նետել վճռական մարտ, — կըլիներ վոչ միայն հիմարություն, այլև հանցագործություն: Իսկ դրա համար, վորպեսզի իսկապես ամբողջ դաստակարգը, վորպեսզի իսկապես աշխատավոր և կապիտալից հարստահարվածների լայն մասսաները հասնեն նման դիրքի, դրա համար միայն պրոպագանդը, միայն ազիտացիան քիչ ե: Դրա համար հարկավոր ե այդ մասսաների սեփական քաղաքական փորձը» (նույն տեղ, էջ 179):

Հայդպես յե, վոր մեր կուսակցությունը հենց այդպես ել արել ե սկսած լենինի Ապրիլի թեղիսներից մինչև 1917 թ. Հոկտեմբերի ապստամբությունը: Եեկ հենց դրա համար, վոր նա գործել ե լենինի այդ ցուցմունքներով, նա շահեց ապստամբությունը:

Այդպես են հիմնականի մեջ ավանդարդի և դասակարգի ուղիղ փոխարքերությունների պայմանները:

Ի՞նչ ե նշանակում դեկավարել, յեթե կուսակցության քաղաքականությունը ուղիղ ե, իսկ ավանդարդի և դասակարգի մեջ չեն խախտվում ուղիղ փոխարքերությունները:

Դեկավարել նման պայմաններում — նշանակում են ամողել կարողանալ մասսաները կուսակցության քաղաքականության ճշտության մեջ, առաջադրել և անցուած այնպիսի լոգունքներ, վորոնք մասսաներին մոտեցնում են կուսակցության դիրքերին և հեշտացնում նրանց համար սեփական փորձով ճանաչելու կուսակցության քաղաքականության ճշտությունը, կուսակցության գիբարձրացնել մասսաների միջև կուսակցության զիշտ պատասխանությունը, նրանց վճռական պայմանների պաշտպանությունը:

Այս պատճառով՝ համողելու մեթոդը կուսակցության հիմնական մեթոդն ե դասակարգի դեկավարության գործում:

«Յեթի մենք, — ասում ե լենինը, — այժմ Ռուսաստանում յերկու և կես տարվա չտեսնված հաղթություններից հետո, վոր տարել ենք Ռուսաստանի և Անտանտի բուրժուազիայի վրա, արհմիություններին անդամագրվելու համար պայման դնելինք «գիկտատուրայի ճանաչումը», մենք հիմարություն կանելինք, կը փչացնելինք մեր ազդեցությունը մասսայի վրա, կոգնելինք մենշեփերին: Վորովինետե կոմմունիստների վողջ

նպատակն ե—համոզել կարողանալ հետամնաց-  
ներին, աշխատել կարենալ նրանց մեջ, այլ վոչ  
թե նրանցից ցանկալաւիլ մտացածին մանկորեն  
«ձախ» նշանաբաններով (տես հ. 17-րդ, եջ 144).

Այս, հարկավ չի նշանակում, թե կուսակցու-  
թյունը մինչև վերջին մարդը պիտի համոզի բոլոր  
բանվորներին, թե միայն դրանից հետո կարելի յէ  
գործողությունների անցնել թե միայն դրանից հե-  
տո կարելի յէ գործողություններ սկսել Ամենեին։  
Այդ միայն նշանակում ե, թե քաղաքական վճռական  
գործողությունների անցնելուց առաջ՝ կուսակցու-  
թյունը տևական հեղափոխական աշխատանքի ձանա-  
պարհով պիտի ապահովե իրան բանվորական մասսա-  
ների մեծամասնության պաշտպանությունը, գոնե-  
դասակարգի մեծամասնության բարյացակամ չեղոքու-  
թյունը։ Հակառակ դեպքում կենինի միտքն այն մա-  
սին, թե հաղթական հեղափոխության անհրաժեշտ  
պայմանն և հանդիսանում բանվոր դասակարգի մե-  
ծամասնության նվաճումը կուսակցության կողմը,—  
դրկված կըլիներ վորեկ իմաստից։

Արդ՝ ինչ անել փոքրամասնության հետ, յեթե  
նա չի ուզում, յեթե նա համաձայն չե կամովին հպա-  
տակվելու մեծամասնության կամքին։ Կարող ե կու-  
սակցությունը, պետք ե վոր կուսակցությունը, ունե-  
նալով իր յետև մեծամասնության վստահությունը,  
հարկադրե փոքրամասնությանը հպատակվելու մեծա-  
մասնության կամքին։ Այս, կարող ե և պետք ե։ Ղե-  
կավարությունն ապահովում ե մասսաներին համոզե-  
լու մեթոդով, վոր կուսակցության մասսաների վրա-  
ներգործելու հիմնական մեթոզն ե։ Բայց այդ չի բաց-

ասում, այլ յենթադրում ե հարկադրանքը, յեթե այդ  
հարկադրանքը իրան պատվանդան ունի վստահու-  
թյուն և պաշտպանություն, վոր կուսակցությունը  
շահել ե բանվոր դասակարգի մեծամասնության կող-  
մից, յեթե այդ գործադրվում ե փոքրամասնության  
նկատմամբ, նրանից հետո յերբ հաջողվել ե համոզել  
մեծամասնությանը։ Այդ մասին արժեք հիշել մեր կու-  
սակցության մեջ արհմիությունների դիսկուսիայի ըլլ-  
ջանում տեղի ունեցած վեճերը։ Ինչումն եր կայանում  
այդ ժամանակ ոպպողիցիայի սխալը, Փոխադրիչների  
կենողը։ Կոմիտեյի սխալը (Ցեկտրան)։ Միթե վոչ նրա  
մեջ, վոր ոպպողիցիան այդ ժամանակ հնարավոր եր  
համարում հարկադրանքը։ Վոչ, դրա մեջ չեր։ Ոպպո-  
ղիցիայի սխալը այն ժամանակ կայանում եր նրա-  
նում, վոր նա՛ ի վիճակի չինելով համոզելու մեծա-  
մասնության իր զիրքի ճշտության մեջ, կորցնելով  
մեծամասնության վստահությունը, այնուամենայնիվ  
հարկադրանք եր գործադրում, պնդում եր մեծամաս-  
նության վստահությամբ ոժտված մարդկանց «թա-  
փահարման», վրա։

Ահա թե այդ ժամանակ 10-րդ համագումարում  
ինչ եր ասում կենինը արհեստակցական միություն-  
ներին նվիրած իր ճառում։

«Վորպեսդի փոխարարերություն, վոխա-  
գարձ վստահություն հաստատվի բանվոր դասա-  
կարգի ավանդարդի և բանվորական մասսայի մի-  
ջև, պետք եր, յեթե Ցեկտրանը սխալ եր արել...  
պետք եր այն ուղղել։ Բայց յերբ սկսում են այդ  
սխալը պաշտպանել, այդ դառնում ե քաղաքական  
վտանգի աղբյուր։ Յեթե այն արամադրություն-  
կենինիզմի խնդիրների ուրցը. 3

ներից, վոր այստեղ արտահայտում ե կուտուզովը, չարվի մաքսիմալ հնարավորը դեմոկրատիայի իմաստով, մենք կըհանգենք քաղաքական սնանկության: Նախ յեվ առաջ մենք պետք ե համոզենք, ապա բե հարկադրենք: Մենք պետք ե, ինչ ել վոր լինի, համոզենք յեվ ինտո հարկադրենք\*): Մենք չկարողացանք համոզել լայն մասսաները և խախտեցինք ավանդարդի ուղիղ փոխարարերությունը մասսաների հետ» (տես հ. 18-րդ, մ. 1, հջ 135):

Նույն այդ բանն ե ասում էնինը «Արհեստակալական միությունների մասին» իր բրոշյուրում.

«Մենք այն ժամանակ ենք ուղիղ և հաջող գործադրել հարկադրանքը, յերբ սկզբում կարողացել ենք համոզումի պատվանդան դնել նրա տակ» (նույն տեղ, եջ 19):

Յեվ այդ իսպառ ուղիղ ե: Վորովինետե առանց այդ պայմանների անհնարին ե վորսե զեկավարություն: Վորովինետե միայն այդ կերպ կարելի յե ապահովել գործողությունների միասնականությունը կուսակցության միջ. յեթե խոսքը կուսակցության մասին ե, դասակարգի գործողությունների միասնականության, յեթե խոսքը դասակարգի մասին ե իր ամբողջության մեջ. Առանց զրան բանվոր դասակարգի շարքերում կըլինի պառակտում, խառնաշփություն, քայլքայում:

Այդպիսին են ընդհանրապես կուսակցության ուղիղ զեկավարության հիմքերը:

Զեկավարության վորեկ այլ ըմբռնումն՝ սինդի-

\*) Ընդզնումն իմն ե: Ի. Ստ.

կալիզմ, անարխիզմ, բյուրոկրատիզմ ե, — բոլորը՝ ինչ կամենաք, — միայն վոչ բայց կիզմ, միայն վոչ կենինիզմ:

Պրոլետարիատի գիկտատուրան չի կարելի հակադրել կուսակցության ղեկավարությանը («գիկտատուրային»), յեթե գոյություն ունեն ուղիղ փոխարաբերություններ կուսակցության և բանվոր դասակարգի, ավանդարդի և բանվորական մասսայի միջև: Բայց այստեղից յերեսում ե, թե առավել և չի կարելի նույնացնել կուսակցությունը բանվոր դասակարգի, կուսակցության ղեկավարությանը («գիկտատուրան») բանվոր դասակարգի գիկտատուրայի հետ: Այն նիման վրա, վոր կուսակցության ղիկտատուրան չի կարելի հակադրել պրոլետարիատի գիկտատուրային, ընկեր Սորինը հանգել ե այն անձիւտ յեզրակացության, թե «պրոլետարիատի դիկտատուրան մեր կուսակցուրյան դիկտատուրան ե»: Բայց էնինը խոսում ե վոչ միայն նըման հակադրության անթույլատրելիության մասին: Նա զրա հետ միասին խոսում ե «մասսայի ղիկտատուրան առաջնորդների գիկտատուրային» հակադրելու անթույլատրելիության մասին: Հաճելի չե այս նիման վրա առաջնորդների գիկտատուրան նույնացնել պրոլետարիատի գիկտատուրայի հետ: Ընթանալով այդ ուղիով մենք պետք ե վոր ասեյինք, թե «պրոլետարիատի դիկտատուրան մեր առաջնորդների դիկտատուրան ե»: Յեվ հենց ձիշտ ասած հատկապես գեպի այս հիմքարությունն ե տանում կուսակցության «գիկտատուրան» պրոլետարիատի գիկտատուրայի հետ նույնացման քաղաքականությունը...

Այս հարցը ինչ զրության ե ընկեր Զինովի մուտքածությունը...

Ընկեր Զինովիկը ըստ եռթյան կանգնած ե կուսակցության «դիկտատուրան» պրոլետարիատի դիկտատուրայի հետ նույնացման նույն տեսակետի վրա, ինչ և ընկեր Սորինը, սակայն այն տարբերությամբ, վոր ընկեր Սորինն արտահայտում ե ավելի վորոշ և պարզ, իսկ ընկեր Զինովիկը «պտույտներ և անում»: Հենց հերիք և ընկեր Զինովիկ «Լենինիզմ» գրքից վերցնել հետևյալ կտորը դրա մեջ համոզվելու համար.

«Ի՞նչ բան ե, ասում ե ընկ. Զինովիկը, իր դասակարգային բովանդակության տեսակետից Խ. Ս. Հ. Միության մեջ գոյություն ունեցող հասարակագլուխության մեջ պարզ պարագաներ անձնագույն է իշխանության անմիջական զըսպանակը Խ. Ս. Հ. Մ. մեջ, Ո՞վ է իրագործում բանվոր դասակարգի իշխանությունը: Կոմմոնիստական կուսակցությունը, Այս իմաստով մեզ մոս<sup>\*)</sup> կուսակցուրյան դիկտատուրա յե: Ինչպիսի՞ն ե իշխանության իրավաբանական ձևը Խ. Ս. Հ. Մ. մեջ: Ինչպիսի՞ն ե պետական կարգի նոր տիպը, վոր ստեղծել ե Հոկտեմբերյան հեղափոխությունը: Այդ խորհրդային սիստեմն ի: Մեկը մյուսին և վոչ մի բանով չի ներհակում (տես «Լենինիզմ», եջ 371): Մեկը մյուսին չի ներհակում, այդ, ինարկե, ուղիղ ե, յերբ բանվոր դասակարգի նկատմամբ իր ամբողջության մեջ կուսակցության դիկտատուրան հասկանալ կուսակցության դիկավարություն: Բայց ինչպես կարելի յե այդ հիման վրա հավասարության դիմքաշել պրոլետարիատի դիկտատուրայի և կուսակցության «դիկտատուրայի», Խորհրդային սիստեմի և կու-

<sup>\*)</sup> Ընդդումն իմն ե, Ի. Մո.

աւակցության «դիկտատուրայի» միջև: Լենինը նույնացնում եր խորհունդների սիստեմը պրոլետարիատի դիկտատուրայի հետ, և նա իրավացի յեր, վարովհետեւ կուսակցության դեկավարությամբ խորհուրդները, մեր խորհուրդներն աշխատող մասսաների խտացման կազմակերպություններ են պրոլետարիատի շուրջը: Բայց Բըր, վորտեհո, իր վար աշխատության մեջ ե Լենինը հավասարության նշան գծել կուսակցության «դիկտատուրայի» և պրոլետարիատի դիկտատուրայի միջև, կուսակցության «դիկտատուրայի» և խորհուրդների սիստեմի միջև, ինչպես այդ այժմ ընկեր Զինովին ե անում: Պրոլետարիատի դիկտատուրային չի ներհակում վոչ միայն կուսակցության դեկավարությունը («դիկտատուրան»), այլև առաջնորդների դեկավարությունը («դիկտատուրան»): Հաճելի չե այս հիման վրա հոչակել, թե մեր յերկիրը հանդիսանում ե պրոլետարիատի դիկտատուրայի յերկիր, այսինքն կուսակցության դիկտատուրայի յերկիր, այսինքն առաջնորդների դիկտատուրայի յերկիր: Յեկ հենց այդ հիմարությանն ե հանգում կուսակցության «դիկտատուրան» պրոլետարիատի դիկտատուրայի հետ նույնացնելու «սկզբունքը», վոր շողոմաբար և անհամարձակ անց ե կացնում ընկեր Զինովիկը:

Լենինի բազմաթիվ աշխատությունների մեջ ինձ հաջողվեց միայն հինգ դեկտեմբերի ուր Լենինն անցողաբար շոշափում ե կուսակցության դիկտատուրայի հարցը:

Առաջին դեպքը—այդ բանավիճ ե սոց-հեղափոխականների և մենշևիկների հետ, ուր նա ասում ե.

«Յերբ մեզ կշտամբում են մի կուսակցու-

թյան դիկտատուրայի մեջ և առաջարկում են, ինչպես գուք լսել եք, միասնական սոցիալիստական ֆրոնտ, մենք ասում ենք. «Այն, մի կուսակցության դիկտարներա. դրա վրա մենք կանգնած ենք և այդ հողից չենք կարող շեղվել, վորովհետեայդ այն կուսակցությունն ե, վոր տասնյակ տարիների ընթացքում նվաճել ե վողջ գործարանաֆաբրիկային և արդյունաբերական պլոյետարիատի ավանդարդի գիրքը» (տես հ. 16, եջ 296):

Յերկրորդ դեպքը — «Նամակ բանվորներին և զյուղացիներին Կոչակի վրա տարած հաղթության առիթով» գրությունն ե, ուր նա ասում ե.

«Գյուղացիներին վախեցնում են (մանականդ մենշևիկները և սոց-հեղափոխականները, բոլորը, անգամ՝ «Ճախերը» նրանցից) «մի կուսակցության դիկտատուրայի» բայլընելի-կոմմունիստների կուսակցության խրդվիլակով: Կոչակի որինակում գյուղացիները սովորել են խըսդվիլակից չվախենալ: Կամ կալվածատերերի և կապիտալիստների դիկտատուրա (այսինքն յերկաթե իշխանություն), կամ բանվոր գասակարդի դիկտատուրա» (տես հ. 16-րդ, եջ 306):

Յերրորդ դեպքը՝ այդ Լենինի պոլիմիքական ձառն և Տենների հետ Կոմինտերնի 2-րդ կոնգրեսում: Այդ ճառից քաղվածք բերված ե վերը:

Չորրորդ դեպքը — այդ միքանի տող և «Մանկան հիվանդություն» բրոյշուրում: Համապատասխան ցիտաներն արգեն բերված են վերը:

Յեկ հինգերորդ դեպքը՝ այդ պլոյետարիատի դիկտատուրայի մասին մի սխիմայի ուրվագիծ ե, հրա-

պարակված 3-րդ «Լենինյան ժողովածվում», ուր յենթագլուխ կա «Մի կուսակցության դիկտատուրա» անունով (տես «Լենինյան ժողովածվում», 3-րդ, եջ 497):

Հարկավոր ե նշել վոր հինգից յերկու դեպքում վերջին և յերկրորդ գեպքում, Լենինը չակերտների մեջ և առնում «մի կուսակցության դիկտատուրա» բառերը, այդ ձևակերպության անձիշտ, փոխաբերական իմաստն ընդգծելով պարզապես:

Հարկավոր ե նույնպես նշել, վոր այդ բոլոր դեպքերում բանվոր դասակարգի նկատմամբ «կուսակցության դիկտատուրա» արտահայտության տակ Լենինը հասկանում ե՝վոչ թե դիկտատուրա այս բարի խօսական իմաստով («բռնության վրա հենվող իշխանություն»), այլ կուսակցության դեկավարություն:

Բնորոշ ե, վոր իր հիմնական և յերկրորդակարգ աշխատություններից և վոչ մեկում, ուր Լենինը մեկնաբանում կամ պարզապես հիշատակում ե պրոլետարիատի դիկտատուրայի և կուսակցության դերի մասին պլոյետարիատի դիկտատուրայի սխստեմում, ակնարկ իսկ չկա, թե «պլոյետարիատի դիկտատուրան մեր կուսակցության դիկտատուրան ե»: Ընդհակառակ կուսակցությունների յուրաքանչյուր եջը, յուրաքանչյուր տողն աղաղակում ե նման ձևակերպման (տես «Պետություն և հեղափոխություն», «Պրոլետարական հեղափոխությունը և ունեղատ կառւցկին», «Մանկական հիվանդություն» ևայլն):

Առավել ևս բնորոշ ե, վոր Կոմինտերնի 2-րդ կոնգրեսի քաղաքական կուսակցության դերի մասին ընդունած թեղիսներում, վորոնք մշակվել են Լենինի անմիջական դեկավարության ներքո, վորոնց մեկից

ավելի յե հիշատակել լենինն իր ճառերում, իբրև կուսակցության դերի և նպատակների ուղիղ ձևակերպվան որինակ,—մենք չենք գտնում և վոչ մի, տառացի կերպով յեվ վոչ մի կուսակցության դիկտատուրայի մասին:

Ի՞նչ ե ասում այս բոլորը:

Այն, վոր՝

ա) Լենինը «կուսակցության դիկտատուրա» ձեփակերպումը չեր համարում անբիծ, ստույգ, վորի պատճառով այն խիստ սակավ ե գործածվում լենինի աշխատություններում և յերբեմն չակերտների մեջ և առնվում.

բ) Այն սակավ դեպքերում, յերբ հակառակորդների գեմ բանավիճելով լենինն ստիպված եր խոսել կուսակցության դիկտատուրայի մասին, նա սովորաբար պարզաբանում եր, վոր կուսակցության դիկտատուրան պետք ե կուսակցության դեկավարություն հասկանալ բանվոր դասակարգի նկատմամբ.

գ) Այն բոլոր գեպքերում, յերբ լենինը հարկավոր եր գտնում գիտականորեն բնորոշել կուսակցության դերը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում, նա խոսում եր բացառաբար կուսակցության դեկավար դերի մասին (իսկ այդպիսի դեպքեր—հազարվոր են).

դ) Հենց այդ պատճառով լենինը «չի կուսի» կուսակցության դերի մասին հիմնական բանաձեի մեջ մուծել—յես նկատի ունեմ Կոմիտենի 2-րդ կոնգրեսի բանաձել—«կուսակցության դիկտատուրա» ձեփակերպումը.

յե) Արդարացի չեն լենինիզմի տեսակետից և քա-

զաքականորեն կարճատես են այն ընկերները, վորոնք նույնացնում են կամ փորձում ին նույնացնել կուսակցության «դիկտատուրան», վոր նշանակում ե և «առաջնորդների դիկտատուրան», պրոլետարիատի դիկտատուրայի հետ, վորովհետև նրանք խախտում են ավանդաբգի և դասակարգի ուղիղ վորինարարերության պայմանները:

Յես արդեն չեմ խոսում այն մասին, վոր կուսակցության դիկտատուրա» ձեփակերպումը վերցրած առանց վերը ցույց տված վերապահումների, մեր գործնական աշխատանքի մեջ կարող ե ստեղծել ամբողջ շարք վտանգներ և քաղաքական մինուսներ։ Առանց վերապահումների վերցրած այդ ձեփակերպումով կարծես ասվում ե.

ա) Անկուսակցական մասսաներին—չհամարձակվեք ներհակել, չհամարձակիք գատողություն անել, վորովհետև կուսակցությունը կարող ե ամեն ինչ անել, վորովհետև մեզ մոտ կուսակցության դիկտատուրա յե.

բ) Կուսակցական շարժերին—գործեցեք խիզախորեն, սեղմեցեք ամուր, կարելի յե և ականջ չկախել անկուսակցական մասսայի ձայնին,—մեզ մոտ կուսակցության դիկտատուրա յե.

գ) Կուսակցական զագարներին—կարելի յե անձիդ թույլ տալ ինքնագոհության վորոշ պերճանք, անզամ կարելի յե միքիչ գոռողանալ, վորովհետև մեզ մոտ կուսակցության դիկտատուրա յե, ապա «ուրիշնե» և առաջնորդների դիկտատուրա:

Այդ վտանգների մասին տեղին ե հիշեցնել հենց այժմ, մասսաների քաղաքական ակտիվության վերել-

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՄԻ ՅԵՐԿՐՈՒՄ ՀԱՂԹԱՆԱԿԵԼՈՒ ԽԸՆ-  
ԴԻՐԸ

«Լենինիզմի հիմքերի մասին» բրոշյուրում 1924 թ. ապրիլ) կա սոցիալիզմի մի յերկրում հաղթանակելու խնդրի մասին յերկու ձևակերպում. առաջին ձևակերպումն առում ե.

«Հեղափոխության հաղթանակը մի յերկրում առաջ անհնարին եյին համարում, յենթագրելով, վոր բուրժուազիայի գեմ հաղթություն տանելու համար անհրաժեշտ ե բոլոր առաջավոր յերկրուների կամ համենայն գեպս այդպիսի յերկիրների մեծամասնության պրոլետարների միատեղ յերկույթը։ Այժմ այդ տեսակետը արդին չի համապատասխանում իրականության։ Այժմ պետք ե մեկնել նման հաղթության հնարավորությունից, վորովհետեւ իմպերիալիզմի հանգամանքներում զանազան կապիտալիստական յերկրների զարգացման անհամաչափ և վոստվոստուն բնույթը, կատաստրոֆիկ ներհակությունների զարգացումը իմպերիալիզմի գոգում, վոր տանում ե գեպի անխուսափելի պատերազմներ, հեղափոխական շարժման աճումն աշխարհի բոլոր յերկրներում, —այդ բոլորը մղում ե վոչ միայն գեպի պրոլետարիատի հաղթության հնարավորությունն առանձին յերկրներում, այլև գեպի անհրաժեշտությունը» (տես բրոշյուրի 3-րդ գլուխը),

Այս գրությունն իսպառ ուղիղ և մեկնաբանու-

քի արջանում, յերբ կուսակցության պատրաստակա-  
մությունը ուշադիր լինելու մասսայի ձայնին մեզ հա-  
մար ունի առանձին արժեք. յերբ զգաստությունը  
մասսայի պահանջներին նկատմամբ մեր կուսակցության  
հիմնական պատրամին և հանդիսանում, յերբ կուսակ-  
ցությունից պահանջվում ե հատուկ շրջանկատություն  
և հատուկ ձկունություն քաղաքականության մեջ,  
յերբ գորովանալու վտանգն ամենալուրջ վտանգներից  
մեկն և հանդիսանում. վտանգներ, վոր մասսաներն  
ուղղիդ գեկավարելու գործում կանգնած են կուսակ-  
ցության առաջ։

Զի կարելի չի հայտնի վոսկե խոսքերը, վոր  
ասված են մեր կուսակցության 10-րդ համագումա-  
րում.

«Ժողովրդական մասսայի մեջ մենք (կոմ-  
մունիստներս) այնուամենայնիվ ծովի մի կաթիլ  
ենք, և մենք կարող ենք կառավարել միայն այն  
ժամանակ, յերբ ուղիղ ենք արտահայտում այն,  
ինչ ժողովուրդն ե գիտակցում։ Առանց դրան  
կոմմունիստական կուսակցությունը չպիտի կա-  
րողանա առաջնորդել պրոլետարիատին, իսկ պրո-  
լետարիատն իր յետեից չպիտի կարողանա ու-  
նել մասսաններին, և վողջ մեքենան կը փլի։»

«Ուղիդ արտահայտել այն, ինչ ժողովուրդն ե գի-  
տակցում», —հենց այդ յե այն անհրաժեշտ պայմանը,  
վոր կուսակցության համար ապահովում ե հիմնական  
գեկավար ույժի պատվավոր դերը պրոլետարիատի  
գիտատուրայի սիստեմում։

թյունների կարիք չունի։ Այն ուղղված է սոց-դեմոկրատների թեորիայի դեմ, վորոնք ուսուպիա յին համարում պրոլետարիատի կողմից իշխանության գրավումը մի յերկրում, յեթե միաժամանակ հաղթական հեղափոխություն չկա մյուս յերկրներում։

Բայց «Լենինիզմի մասին» բրոշյուրում կա և յերկրորդ ձևակերպումն։ Այնտեղ ասված է \*).

«Բայց տապալել բուրժուազիայի իշխանությունը և պրոլետարիատի իշխանությունը դնել մի յերկրում, դեռ չեւ նշանակում ապահովել սոցիալիզմի լիակատար հաղթանակը։ Սոցիալիզմի գլխավոր խնդիրը—սոցիալիստական արտադրության կազմակերպումը—դեռ մնում է հետագային։ Առանց միքանի առաջավոր յերկրների պրոլետարների միատեղ ջանքերի կարելի՞ յեւ լուծել այդ խնդիրը, կարելի՞ յեւ արդյոք սոցիալիզմի վերջնական հաղթանակ նվաճել մի յերկրում։ Վհչ, անհնարին եւ Բուրժուազիայի տապալման համար հերիք և մի յերկրի ջանքերը, այդ մասին մեր հեղափոխության պատմությունն եւ խոսում։ Սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար, սոցիալիստական արտադրության կազմակերպման համար մի յերկրի ջանքեր, մանավանդ այնպիսի գյուղացական յերկրի, վորպիսին Ռուսաստանն եւ, արդեն հերիք չեն, —դրա համար անհրաժեշտ են միքանի առաջավոր յերկրների պրոլետարների ջանքեր» (նույն տեղ)։

Այս յերկրորդ ձևակերպումն ուղղված եր Լենինիզմի քննադատների պնդումի դեմ, արոցկիստների

\*.) Խոսքը առաջին հրատարակության մասին եւ

դեմ, վորոնք հայտարարում եյին, թե պրոլետարիատի զիկտատուրան մի յերկրում, յերբ բացակայում է հաղթությունը մյուս յերկրներում, չի կարող «դիմանալ պահպանողական Յերապայի հանդեպ»։

Այդ չափով եր,—բայց միայն այդ չափով,—ձեակերպումն այն ժամանակ (1924 թ. ապրիլ) բավարար հանդիսանում, և նա անկասկած վորոշ ոգուտ եւ տըվել։

Բայց հետազայում, յերբ Լենինիզմի քննադատությունն այդ մասով մեր կուսակցության մեջ արդեն հաղթահարված եր և յերբ հերթական դարձավ մի նոր խնդիր, լիակատար սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորությունը մեր յերկրի ույժերով, առանց արտաքին ոգնության, —յերկրորդ ձևակերպումը հանդիսացավ արդեն պարզապես անբավարար և այդ պատճառով անձիշտ։

Ի՞նչումն եւ կայանում այդ ձևակերպման պակասությունը։

Նրա պակասությունն այն եւ, վոր նա կապում եւ իրար հետ յերկու տարբեր խնդիրներ։ մի յերկրի ույժերով սոցիալիզմի կառուցման հնարավորության խընդիրը, վորին պետք եւ զրական պատասխան տալ և խնդիր այն մասին, թե կարող եւ պրոլետարիատի դիկտուտուրա ունեցող մի յերկրի, առանց մի շարք յերկրների հաղթական հեղափոխության, իրան կատարելապես յերաշխավորված համարել ինտերվենցիայից և ուրեմն հին կարգերի վերականգնումից, —վորին պետք եւ տալ բացասական պատասխան։ Յես արդեն չեմ խոսում այն մասին, վոր այդ ձևակերպումը կարող եւ առիթ տալ մտածելու, թե մի յերկրի ույժերով սոցիա-

Հասարակության կազմակերպումը անհնարին ե, վոր, հարկավ, ուղիղ չե:

Այս հիման վրա յես այդ ձեակերպումն իմ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմմունիստների գործելակերպը» (1924 թ. գեկտեմբերի) բըրոշյուրում կերպարանափոխեցի, ուղղեցի, մասնահատելով այդ խնդիրը յերկու խնդրի. խնդիր լիակատար յերաշխիքի մասին բուրժուական կարգերի վերականգնումից (ռեստավրացիա) և խնդիր լիակատար սոցիալիստական հասարակուրյան կառույցման հնարավորուրյան մասին մի յերկում: Դրան յես հասա նախ և առաջ մեկնարանելով «սոցիալիզմի լիակատար հաղթանակը» իրու «լիակատար ապահովություն հին կարգերի վերականգնումից», հնարավոր միայն «միքանի յերկերների պրոլետարյների միատեղ ջանքերի» կարգով, և յերկորդ՝ Լենինի «Կոռպերացիայի մասին» բըրոշուրի հիման վրա այն անվիճելի ճշմարտությունը հըռչակելով, թե լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար մենք ունենք բոլոր անհրաժեշտ տվյալները (տես «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմմունիստների գործելակերպը»):

Խնդիրի այս նոր ձեակերպումը հենց հիմք ծառայեց 14-րդ կուսկոնքերենցիայի «Կոմինտերնի և Ռ. Կ. անելիքների մասին» հայտնի բանաձևին, վոր սոցիալիզմի մի յերկում հաղթանակելու խնդիրը քննում և կապիտալիզմի կայտարակության առաջարակությունների գործելակերպը» (1925 թ. ապրիլ) կապին առընթեր և համարում ե սոցիալիզմի կառուցումը մեր յերկու ույժերով հնարավոր և անհրաժեշտ:

Այն ել հիմք ծառայեց իմ «14-րդ կուսկոնքերենցիայի արդյունքների շուրջը» բըրոշյուրին, անմիջականորին հրատարակված 14-րդ կուսկոնքերենցիայից անմիջապես հետո, 1925 թ. մայիսին:

Այդ բըրոշյուրում սոցիալիզմի մի յերկում հաղթանակելու խնդրի կարգման հարցի մասին ասված ե. «Մեր յերկերը ներհակությունների յերկու կծիկ և ներկայացնում: Ներհակությունների մի կծիկը այդ ներքին ներհակություններն են, վոր կծիկը այդ ներքին ներհակություններն են, վոր կան պրոլետարիատի և զյուղացության միջնակությունները սոցիալիզմի մի յերկում կառուցելու մասին ե. Ի. Ս.):

Ներհակությունների մյուս կծիկը այդ արագին ներհակություններն են, վոր կան մեր յերկերի իրեկ սոցիալիզմի յերկու և մյուս յերկերի իրեկ կապիտալիզմի յերկուների միջնակությունների միջնակությունների պատճենը սոցիալիզմի վերջնական հաղթանակի մասին ե. Ի. Ս.):

«Ով շիոթում ե առաջին, իսպառ մի յերկերի ջանքերով հաղթանարելի ներհարկությունների կծիկը յերկորդ կծիկ ներհարությունների հետ, վորոնք իրանց լուծումն սպասում են մի քանի յերկերների պրոլետարների ջանքերից, նա կոպտագույն սխալ ե գործում լենինիզմի դեմ, նա կամ շփոթարար ե, կամ անուղղելի ոպորտյունիստ» (տես «14-րդ կուսկոնքերանցիայի արդյունքների շուրջը»):

Սոցիալիզմի մեր յերկում հաղթանակելու խնդրի առթիվ բըրոշյուրն ասում ե. «Մենք կարող ենք կառուցել սոցիալիզմը,

և պիտի այն կառուցենք գյուղացության հետ միատեղ, բանվոր գասակարգի ղեկավարությամբ»... վորովհետև «պրոլետարիատի ղիկտառուրայի պայմանում մենք ունենք... բոլոր անհրաժեշտ տվյալները, հաղթահարելով բոլոր և ամեն կարգի ներքին դժվարություններ, լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու, վորովհետև մենք կարող ենք և մենք պետք ենք սեփական ույժերով հաղթահարենք այդ դժվարությունները» (նույն տեղ):

Իսկ սոցիալիզմի վերջնական հաղթանակի խնդրի առիթով այնտեղ ասված ե.

«Սոցիալիզմի վերջնական հաղթանակը լիակատար յերաշխիք և ինտերվենցիայի փորձերից, ուրեմն և ռեստավրացիայից, վորովհետև ռեստավրացիայի շատուքիչ լուրջ փորձ կարող ե միայն տեղի ունենալ արտաքին լուրջ աջակցության պայմանով, միայն միջազգային կապիտալի աջակցությամբ։ Այս պատճառով՝ մեր հեղափոխության պաշտպանությունը բոլոր յերկիրների բանվորների կողմից, առավել ևս այդ բանվորների հաղթությունը միքանի յերկրներում,— առաջին հաղթող յերկրի համար լիակատար յերաշխիքի անհրաժեշտ պայմանն և ինտերվենցիայի և ռեստավրացիայի փորձից, անհրաժեշտ պայմանը սոցիալիզմի վերջնական հաղթանակի» (նույն տեղ):

Կարծես պարզ ե:

Հայտնի յե, վոր նույն վորով և մեկնաբանվում այդ խնդիրը իմ «Հարցեր ու պատասխաններ» բրոշ-

յուրում (1925 թ. հունիս) և Համ. կ. կ. 14-րդ համագումարին (1925 թ. ղեկտեմբեր) Հ. կ. կ. տվածքաղաքական հաշվետվության մեջ։

Այդպես են փաստերը։

Կարծում եմ այդ փաստերը հայտնի յեն ամենին և ընկեր Զինովեին։

Յեթե այժմ, յերկու տարի անց, կուսակցության մեջ տեղի ունեցած գաղափարական պայքարից և 14-րդ կուսակոնֆերենցիայի ընդունած բանաձևերից հետո (1925 թ. ապրիլ) ընկ. Զինովելի բր 14-րդ համագումարի (1925 թ. ղեկտեմբեր) յեղրափակման խոսքում հնարավոր և գտնում դուրս հանել Ստալինի 1924 թ. ապրիլին գրած բրոցուրի հին, իսպառ անբավարար ձեռվակերպումը իրեւ պատվանդան լուծելու արդեն լուծված խնդիրը սոցիալիզմի մի յերկրում հաղթանակելու մասին,—ապա ընկ. Զինովեի այդ ինքնորինակ գործելակերպը խոսում և միայն այն մասին, վոր նա վերջնականապես մոլորվել և այդ հարցում։ Յետանել կուսակցությանը, յերբ նա առաջ և ընթացել, անգիտանալ 14-րդ կուսակոնֆերենցիայի բանաձևը, յերբ այն վավերացած և կ. կ. պլենումի կողմից,— դա նշանակում և անհուսալիորեն խրվել հակասությունների մեջ, չհավատալ սոցիալիզմի շինարարության գործին, շեղվել լենինի ուղիից և սեփական պարտությունը ճանաչել։

Ի՞նչ բան և սոցիալիզմի յերկրում հաղթանակելու հնարավորությունը։

Դա մեր ներքին ույժերով պրոլետարիատի և գյուղացության միջի ներհակությունների լուծման հնարավորությունն և, իշխանության գրավման հնա-

թաղբել։ Վերջիվերջո կըհաղթի կամ մեկը կամ մյուսը։ Իսկ մինչ կըլինի այդ՝ Խորհրդային Հանքապետության և բուրժուական պետությունների միջև անխուսափելի յեն մի շարք ամենասարսափելի բաղխումներ։ Այդ հշանակում ե, թե պըրուետարիատը, իբրև տիրող դասակարգ, յեթե միայն նա ուզում ե պիտի տիրապետե, այդ պիտի ապացուցե նաև իր ռազմական կազմակերպությամբ (հ. 16-րդ, եջ 102)։

«Մենք մեր առաջ, ասում ե Լենինը մի այլ տեղ, ունենք վերին աստիճանի անկայուն, բայց ելի անկասկածելի, անվիճելի, հայտնի հագասարակշություն։ Շմատ կըտեի այդ—չգիտեմ, և կարծում եմ, վոր իմանալ անկարելի յե։ Յեվ այս պատճառով մեծագույն զգուշություն ե հարկավոր մեր կողմից։ Յեվ մեր քաղաքականության առաջին պատգամը, առաջին դասը, վոր բղնում ե տվյալ տարվա մեր կառավարական քաղաքականությունից, գաս, վոր պիտի յուրացնեն բոլոր բանվորներն ու գյուղացիները, —լինել աչալուրչ, հիշել, վոր մենք շրջապատված ենք մարդկանցով, դասակարգերով, կառավարություններով, վորոնք բացորշաբար մեծագույն առելությունն են արտահայտում մեզ։ Պետք ե հիշել, թե վորևե արշավանքից, հնարավորությունից մենք միշտ մազից ենք կախված» (հ. 18-րդ, մ. 1, եջ 425)։

Թվում ե՝ պարզ ե։

Իսկ ի՞նչ կերպարանք ե ընդունել ընկ. Զինովեի մօտ այն հարցը, վոր վերաբերում ե սոցիալիզմի մէ յերկրում հաղթանակելու խնդրին։

Լսեցեք.

բավորությունը պըոլետարիատի կողմից և այդ իշխանության ոգտագործումը լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու մեր յերկրում, մյուս յերկրների պըոլետարիաների համակրության և աջակցության պայմանով, բայց առանց պըոլետարական հեղափոխության նախնական հաղթության մյուս յերկրներում։

Առանց այդ հնարավորության սոցիալիզմի կառուցումը կառուցումն և առանց հեռանկարի, կառուցումն առանց վստահության սոցիալիզմ կառուցելու։ Չի կարելի սոցիալիզմ կառուցել վստահ չլինելով, վոր մեր յերկրի տեխնիքական հետամնացությունը անհարահարելի արդեւք չե լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար։ Նման հնարավորության բացասումը թերահավատություն և սոցիալիզմի շնարարության գործում նահանջ և լենինիզմից։

Ի՞նչ բան և սոցիալիզմի լիակատար, վերջնական հաղթանակի անհնարինությունը մի յերկրում, —յերբ հեղափոխության հաղթանակ չկա մյուս յերկրներում։

Դա ինտերվենցիայից, ուրեմն և բուրժուական կարգերի ուստավրացիայից խուսափելու լիակատար յերաշխիքի անհնարինությունն ե, յերբ հեղափոխության հաղթանակ չկա գոնե մի շարք յերկրներում։ Այս անվիճելի գրության բացասումը նահանջ և ինտերնացիոնալիզմից, նահանջ և լենինիզմից։

«Մենք ապրում ենք, ասում ե Լենինը, վոչ միայն պետության, այլև պետությունների սիստեմի մեջ, և Խորհրդային Հանրապետության գոյությունն իմպերիալիստական պետությունների կողքին տևական ժամանակ չի կարելի յեն-

«Սոցիալիզմի վերջնական հաղթանակի տակ՝ գոյնե պետք ե հասկանալ. 1) դասակարգերի վոչընչացում և, ուրեմն, 2) մի դասակարգի դիկտատուրայի վերացում, տվյալ դեպքում պրոլետարիատի դիկտատուրայի»... «Վորապեզզի ավելի ստույգ պարզեցնք մեզ,— ասում ե ապա ընկ. Զինովեյ, — թե ինչպես ե գրված հարցը մեզ մոտ և. Ս. Հ. Մ. մեջ 1925 թվականին, պետք ե զանազանել յերկու բան. 1) սոցիալիզմ կառուցելու ապահոված հետավորություն — այդպիսի հնարավորություն սոցիալիզմ կառուցելու լիովին, հարկավ, կարող ե ընդունելի համարվել և մի յերկրի շրջանակներում, և 2) սոցիալիզմի վերջնական կառուցում և ամրացում, այսինքն սոցիալիստական կարգի, սոցիալիստական հասարակության իրազործում» (անս ընկ. Զինովեյ «Լենինիզմը», եջ 291 և 293):

Ի՞նչ կարող ե նշանակել այս բոլորը:

Այն, վոր սոցիալիզմի մի յերկրում վերջնականորեն հաղթանակելու իմաստի տակ ընկ. Զինովեը հասկանում ե վոչ թե յերաշխիք ինտերվենցիայից ու ռեստավրացիայից, այլ սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորություն. Իսկ սոցիալիզմի մի յերկրում հաղթանակելու իմաստի տակ ընկ. Զինովեը հասկանում ե սոցիալիզմի այնպիսի կառուցում, վոր չի կարող և չպետք ե սոցիալիզմի կառուցման հասցնել: Կառուցումն յենթարանքով, առանց հեռանկարի, սոցիալիզմի կառուցումն՝ սոցիալիստական հասարակություն կառուցելու անհնարինության պայմանով, — այսպիսին ե ընկ. Զինովեի դիրքը:

Սոցիալիզմ կառուցել առանց հնարավորության այն կառուցելու, իմանալով, վոր չես կառուցի, — ահա թե ինչպիսի անհեթեթյունների յե հասել ընկ. Զինովեր:

Բայց դա հեղնանք ե հարցի վրա, այլ վճէ հարցի լուծումն:

Ահա և մի կտոր ընկ. Զինովեի 14-րդ կուսհամագումարի յեղրափակման խոսքից.

«Դուք տեսեք, թե մինչեւ ուր ե հասել որինակ, ընկեր Յակովիկը, կուրսկի վերջին նահանջական կուսկոնֆերենցիայում, կարժղ ենք մենք մի յերկրում — հարցնում ե նա — բոլոր կողմից շրջապատված լինելով կապիտալիստական թշշնամիներով, կարժղ ենք մենք այդպիսի պայմաններում սոցիալիզմ կառուցել մի յերկրում. Յեկարում սոցիալիզմի կառուցման մի յերկրում. այսպիսական պատասխանում ե. «Բոլոր ասածի հիման վրա մենք իրավունք ունենք ասելու, վոր մենք վոչ միայն սոցիալիզմ ենք կառուցում, այլ վոր մենք չնայած այն բանին, վոր գետ ևս մենակ ենք, վոր մենք գետ աշխարհի մեջ միակ խորհրդային յերկերն ենք, խորհրդային պետությունը, — մենք այդ սոցիալիզմը կը կառուցենք» («Կուրսկայա Փրագտա», № 279, 1925 թ. դեկտ. 8): Մի՞քե սա հարցի լենինյան կարգումն ե, մի՞քե այսեղ ազգային սահմանափակության հոտ չի բուրում»\*):

Այսպիսով ըստ Զինովեի գուրս ե գալիս, վոր հնարավոր ձանաչել սոցիալիզմի կառուցումը մի յերկրում — դա նշանակում ե կանգնել ազգային սահմանափակության տեսակեծոի վրա, իսկ բացասել նման

\*.) Ընդգծումն իմն ե: Ի. Ստ.

Հնարավորությունը — նշանակում ե ինտերնացիոնալիզմի տեսակետի վրա կանգնել:

Բայց յեթե սա ճիշտ ե, — արժեք արդյոք առաջարակ հաղթության պայքար մղել մեր տնտեսության կապիտալիստական տարրերի գեմ: Չի բղխում դրանից, վոր նման հաղթությունն անհնարին ե:

Անձնատուր լինել մեր Տեսեսության կապիտալիստական տարրերին — ահա ուր և առաջարքում ընկեր Զինովյանի պատճառաբանությունների ներքին տրամարանությունը:

Յեվ այս անհեթեթությունը, վոր վոչինչ ընդհանուր չունի լենինիզմի հետ, ընկ. Զինովյանը մեզ հրամցնում ե իրք «Ինտերնացիոնալիզմ», իրք «Հարյուրառկոսանի լենինիզմ»):

Յես պնդում եմ, վոր սոցիալիզմի կառուցման կարեռագույն հարցում ընկ. Զինովյան նահանջում ե լենինիզմից, գլորվելով մենշևիկ Սուխանովի տեսակետին:

Դիմենք Լենինին: Ահա թե ինչ եր ասում նա սոցիալիզմի մի յերկրում հաղթանակելու մասին գեռ Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ, 1825 թ. ոգոստոսին.

«Տնտեսական և քաղաքական գարգացման անհամաշափությունը կապիտալիզմի բացարձակ որենքն ե: Այստեղից բղխում ե, վոր սկզբի շրջանում հնարավոր ե սոցիալիզմի հաղթություն սակավ կամ նույնիսկ մի, առանձին վերցրած, կապիտալիստական յերկրում: Այդ յերկրի հաղթող պրոլետարիատը, եքսպրոպրացիայի յենթարկելով կապիտալիստներին և իր մոտ կազմակերպելով

սոցիալիստական արտադրություն\*), գեմառզեմ կը-կանգներ մնացած կապիտալիստական աշխարհին, իր կողմը զրավելով մյուս յերկրների հարստահարված գասակարգերը, ապատամբություն բարձրացնելով նրանց ընդդիմ կապիտալիստների, անգամ ուղղմական ույժով անհրաժեշտության գեպքում հակառակ դուրս գալով շահագործող գասակարգերի և նրանց պիտությունների» (տես հ. 13-րդ, եջ 133):

Ի՞նչ ե նշանակում լենինի ընդգծած ֆրազը — «իր մոտ կազմակերպելով սոցիալիստական արտադրություն»: Այդ նշանակում ե, թե հաղթանակած յերկրի պրոլետարիատը, իշխանությունը գրավելուց հետո, կարող ե ալեք ե իր մոտ սոցիալիստական արտադրություն կազմակերպե: Իսկ ինչ ե նշանակում «կազմակերպել սոցիալիստական արտադրություն»: Այդ նշանակում ե սոցիալիստական հասարակություն կառուցել: Հազիկ թե կարիք կա ապացուցելու, վոր լենինի այս պարզ ու վորոշ գրությունը հետագա մեկնարանությունների կարիք չունի: Հակառակ գեպքում անհամականակի պիտի լինելին լենինի կոչերը, վոր պըռլետարիատը 1917 թ. հոկտեմբերին գրավե իշխանությունը:

Դուք տեսնում եք, վոր լենինն այս պարզ գրությունը, ինչպես յերկինքը գետնքից, տարբերվում ե թյունը, ինչպես յերկինքը գետնքից, տարբերվում ե Զինովյանի շփոթ և հակալենինական դրությունից այն մասին, թե մենք կարող ենք սոցիալիզմ կառուցել «մի յերկրի շրջանակներում» առանց այդ կառուցելու հնարավորության:

\*.) Ընդգծումն իմն ե: Ի. Ստ.

Լենինն այդ ասել է 1915 թ. իշխանությունը պրոլետարիատի կողմից գրավելուց առաջ, Բայց գուցե նրա հայացքները փոխվել են իշխանությունը վերցնելու փորձից, 1917 թվականից հետո. Դիմենք Լենինի «Կոռպերացիայի մասին» բրոշյուրին, վոր գըրգած ե 1923 թ.:

«Խսկապես, ասում ե Լենինը, պետական իշխանությունը արտադրության բոլոր խոշոր միջոցների նկատմամբ, պետական իշխանությունը պրոլետարիատի ձեռքում, այդ պրոլետարիատի դաշնակցությունը շատ միշտոներ մանր և մանրագույն գյուղացիների հետ, զեկավարության ապահովությունը այդ պրոլետարիատի համար հանդեպ գյուղացության ևայլն,—միթե այս բոլորը չե, ինչ հարկավոր ե, վորպեսզի կոռպերացիայից, միմիայն կոռպերացիայից, վոր մենք առաջ անդիտանում եյինք իր չարչիականության համար, և վոր վորոշ կողմից նեպի պայմաններում իրավունք ունենք անդիտանալու այժմ ևս, մի՞քև այս բոլոր անհրաժեշտ տվյալներ չեն լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար\*): Սա գեռ սոցիալիստական հասարակության կառուցումը չե, բայց այդ կառուցման համար սա բոլորն ե, ինչ անհրաժեշտ ե ու հերիֆ\*): (տես հ. 18-րդ, մ. 2, եջ 140):

Այլ կերպ ասելով—մենք կարող ենք և պետք ելիակատար սոցիալիստական հասարակություն կառուցենք, վորովհետեւ մեր սպասարկության մեջ ունենք բոլոր անհրաժեշտ ու բավարար միջոցները՝ այդ կառուցման համար:

\*) Բնդգծումն իմն ե: Ի. Ստ.

Թվում ե, թե ավելի պարզ արտահայտել դըժավար ե:

Համեմատեցեք Լենինի այս կլասիք գրությունն ընկ. Զինովիե, ընկ. Յակովլիկի դեմ ուղղած հականինական առարկության հետ և կըհասկանաք, վոր Յակովլիս միայն կրկնել ե Լենինի խոսքերը՝ սոցիալիզմի մի յերկրում կառուցելու հնարավորության մասին, իսկ Զինովիեը՝ դեմ գալով այդ գրության, խարազանելով Յակովլիին, նահանջել ե Լենինից և կանգնել մենչեւի Սուխանովի տեսակետին, այն տեսակետին, թե մեր յերկրի տեխնիքական հետամնացության պատճառով անհնարին և սոցիալիզմ կառուցել այնտեղ:

Հայտնի չե միայն, թե ինչու յենք մենք 1917 թ. հոկտեմբերին գրավել իշխանությունը, յեթե միտում չունեցինք սոցիալիզմ կառուցելու:

Զայտս եր 1917 թ. հոկտեմբերին գրավել իշխանությունը—ահա ինչ յեզրակացության և բերում ընկ. Զինովիի պատճառաբանությունների ներքին արամարանությունը:

Ապա յես պնդում եմ, վոր սոցիալիզմի հաղթության կարևորագույն հարցում ընկ. Զինովիե հակառակ և գնացել մեր կուսակցության վորոշակի վճիռներին, վորոնք շեշտված են 14-րդ կուսկոնքերնցիւայի «Կիդկ ընդլայնած պլենումի հետ կապված կոմինտերնի և Ռէկ անելիքների մասին» հայտնի բանաձեռնում:

Դիմենք այդ բանաձերին: Ահա թե ինչ և ասկած այնտեղ սոցիալիզմի մի յերկրում հաղթանակելու մասին:

«Յերկու ուղղակի հակադիր հասարակական  
սխտեմների գոյությունը կապիտալիստական  
պաշարման, ուրիշ ձևերի տնտեսական ձնշան,  
զինված ինտերվենցիայի, սեստավրացիայի մըշ-  
տական սպառնալիք և նյութում: Սոցիալիզմի  
վերջնական հաղթանակի համար միակ յերաշխի-  
քըն ե, այսինքն ուստավրացիայից զերծ մնալու  
լերաճսիբն ե\*) հանդիսանում, հետեւարար, հաղ-  
թական սոցիալիստական հեղափոխությունը մի  
շարք յերկրներում...«Լենինիզմը ուսուցանում ե,  
թե սոցիալիզմի վերջնական հաղթանակը՝ բուր-  
ժուական հարաբերությունների ուստավրացիայից  
զերծ մնալու լիակատար լերաճսիբի իմաստով\*)  
հնարավոր ե միայն միջազգային մասշտաբով»...  
Մրանից ամենեվին չի բդիսում\*), թե առանց տեխ-  
նիքական-տնտեսական տեսակետից տուավել զար-  
գացած յերկրների «պետական ոգնության» (Տրոց-  
կի) լիակատար սոցիալիստական հասարակութեան\*)  
կառուցումն անհնարին և այնպեսի հետամնաց  
յերկրում, վորպիսին Ռուսաստանն ե» (տես բա-  
նաձեր):

Գուրք տեսնում եք, վոր բանաձևը սոցիալիզմի վերջնական հաղթանակը մեկնաբանում ե իրքի յերաշխիք ինտերվենցիայից ու ռեստավրացիայից.—լիովին հակադիր ընկ. Զինովիկի նրա «Լենինիզմ» գրքում տված մեկնաբանության:

Դուք տեսնում եք, վոր բանաձևն ընդունում ելիակատար սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորությունն այնպիսի հիտամաց յերկրում,

\*.) Հնդկացումներն իմ են: Ի. Ստ.

վորպիսին Ռուսաստանն է, և դա առանց տեխնիքական-  
տնտեսական տեսակիտից առավել զարգացած յերկնե-  
րի «պետական ոդնության», — լիսովին հակադիր ընկ-  
քինովելի հակառակ անդման, վոր հայտնաբերվեց 14-  
րդ կուսհամագումարի նրա յեղբափակման խոսքում  
ընկ. Յակովլեսին ուղղած առարկության մեջ:

ի՞նչ անուն տալ պրան, յեթե վոչ ընկ. Զինով-  
կի կողմից պարզված պայքար 14-րդ կոնֆերենցիայի  
բանաձեռի դեմ:

իհարկե, կուսակցական բանաձևերը յերբեմ զիրծ  
չեն մեղքից: Լինում ե, վոր կուսակցական բանաձևե-  
րը սխալներ են պարունակում: Ընդհանրապես խոսե-  
լով, կարելի յէ յենթագրել վոր 14-րդ կուսկոնֆիրեն-  
ցիայի բանաձևերը նույնպես միքանի սխալներ ե ուա-  
րունակում: Հնարավոր ե, վոր Զինովիը տվյալ բա-  
նաձևը սխալ ե համարում: Բայց այն ժամանակ դրա-  
մասին պիտի ասել պարզ ու բաց, ինչպես վայել ե  
բաշեիկին: Սակայն ընկ Զինովին ինչ-վոր պատճա-  
ռով այդ չի անում: Նա նախադասել ե այլ ուղի ընտ-  
րելու, թիկունքային գրոհների ուղին 14-րդ կուս-  
կոնֆիրենցիայի բանաձևի դեմ, լուրջան մատներով  
այդ բանաձևը և բանաձևի բացորոշ քննադատության  
վորեե նշմար չհայտնաբերելով: Ըստ յերեսութին ընկ  
Զինովիը կարծում ե, թե այդ ուղին ավելի լավ ե—  
հասցնում նպատակին: Իսկ նրա նպատակը մեկն ե—  
«լավացնել» բանաձևը և «միքիչ» ուղղել կենինին:  
Հաղիվ թե կարիք կա ապացուցելու, վոր ընկ. Զինով-  
իը սխալվել ե իր հաշիվներում:

Վայրութեղից ե բղխում ընկ. Զինովի սխալը, մւլ-  
ե այդ սխալի արմատը:

Սխալի արմատը, իմ կարծիքով, կայանում ե ընկ. Զինովիկի այն համոզմունքի մեջ, վոր մեր յերկրի տեխնիքական հետամնացությունն անհաղթարելի արգելք ե լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար, վոր պրոլետարիատը մեր յերկրի տեխնիքական հետամնացության պատճառով սոցիալիզմ չի կարող կառուցել: Ընկ. Զինովյելը և ընկ. Կամենել փորձեցին մի ժամանակ, ապրիլյան կուսկոնքերնցիայից առաջ այս պատճառաբանություններով հանդես գալու կ. կ. նիստերից մեկում: Բայց նըրանք առարկություն տեսան և ստիպված յեղան նահնջել, ձեվականորեն հպատակվելով հակադիր տեսակետին, կ կ. մեծամասնության տեսակետին: Բայց ձեզականորեն հպատակվելով, ընկ. Զինովյելը միշտ շարունակել ե իր պայքարը այդ տեսակետի դեմ (տես ընկ. Զինովյել «Լենինիզմ» գիրքը և 14-րդ կուսհամագումարի յեզրափակման խոսքը): Ահա թե մեր կուսակցության Մոսկվայի կոմիտեն ինչ ե ասում Լենինգրադի նահանգական կուսկոնքերնցիայի նամակին գրած իր «Պատասխանություն» Համ. կ. կ.-թյան կ. կ. տեղի ունեցած այդ միջադեպի» մասին.

«Շատ մոտիկ անցյալում ընկերներ կամենելը և Զինովյելը Պոլիտրյուրոյում պաշտպանել են այն տեսակետը, իրը թե մեր տեխնիքական և տնտեսական հետամնացության պատճառով մենք չենք կարող հաղթանարել ներքին դժվարությունները, յեթե մեզ չփրկե միջազգային հեղափոխությունը: Իսկ մենք, կ. կ. մեծամասնության հետ միասին, կարծում ենք թե չնայած մեր տեխնիքական հետամնացության և հակա-

ռակ նրան՝ մենք կարող ենք կառուցել սոցիալիզմը, կառուցում ենք և կըկառուցենք այն Մենք կարծում ենք թե այդ կառուցումը, հարկավ, ավելի գանդաղ ախտի ընթանա, քան համաշխարհային հաղթանակի պայմաններում, բայց այնուամենայնիվ մենք ընթանում ենք և պիտի առաջ ընթանանք: Մենք նույնպես յենթագրում ենք, վոր ընկերներ կամենել և Զինովյել տեսակեր արտահայտում ե թերահավատություն մեր ըանվոր դասակարգի և նրա յետեից ընթացող գյուղական մասսաների ներքին ույժերի նկատմամբ: Մենք յենթագրում ենք, վոր դա նահանջ և լենինյան գիրքից» (տես «Պատասխանը»):

Այդ գոկումենտը մամուլի մեջ յերեցել ե 14-րդ կուսհամագումարի առաջին նիստերի ժամանակ: Ընկ. Զինովյելը, իհարկե, նարավորություն ուներ այդ գոկումենտի դեմ հանդես գալու դեռ համագումարում: Բնորոշ ե, վոր ընկեր Զինովյեն ու կամենելը մեր կուսակցության Մոսկվայի կոմիտեյի կողմից նրանց գեմ առաջադրած ծանր մեղադրանքների նկատմամբ պատճառաբանություններ չունեցան: Պատահական ե այդ: Կարծում եմ, վոր պատահական չե: Մեղադրանքը, ըստ յերեսույթին, գիպել ե նշանին: Ընկ. Զինովյելը և ընկ. Կամենելը այդ մեղադրանքին լուրջամբ «պատասխանեցին» նրա համար, վոր այն «ծածկելու» բան չկար:

Նոր ոպազողիցիան վիրավորվում ե, յերբ ընկեր Զինովյեն մեղադրում են, թե նա թերահավատ ե գեպի սոցիալիստական շինարարության գործի հաղթանակը մեր յերկրում: Բայց յեթե ընկեր Զինովյելը մի ամբողջ տարուց հետո, վորի ընթացքում քննվել ե

սոցիալիստմի հաղթանակի հարցը մեր յերկրում, նրանից հետո, յերբ ընկ. Զինովիկի տեսակետը մերժվել է կ. կ. Պոլիտեխնուրոյի կողմից (1925 թ. ապրիլ), նրանից հետո, յերբ այդ խնդրի նկատմամբ արդին կազմակերպվել է կուսակցության վորոշ կարծիքը, արձանագրված 14-րդ կուսկոնքերինցիայի հայտնի բանաձևում (1925 թ. ապրիլ), յեթե այս բոլորից հետո ընկեր Զինովին իր «Լենինիզմ» գրքում (1925 թ. սեպտեմբեր) վճռում է հանդես գալ կուսակցության տեսակետի գեմ, յեթե հետո նա այդ յելույթը կրկնում է 14-րդ համագումարում,—ապա ի՞նչպես բացատրել այս բոլորը, այս համառությունը, այս անձանձրությունը պաշտպանելու իր սխալը, յեթե վոչ նրանով, վոր ընկեր Զինովիը վարակված է, անհուսալիորեն վարակված թերահավատությամբ դեպի սոցիալիստական շինարարության գործի հաղթանակը մեր յերկրում:

Ընկեր Զինովիին հաճելի յե իր թերահավատությունը իր ինտերնացիոնալիզմ բացատրել, Բայց այդ վեր ժամանակից ե, վոր նահանջը լենինիզմից՝ լենինիզմի արմատական հարցում մեզ մոտ սկսվել է իր ինտերնացիոնալիզմ մեկնարանվել:

Ճիշտ չե՞ր լինի ասել, վոր այսաեղ վոչ թե կուսակցությունը, այլ ընկ. Զինովին ե նեղանչում ինտերնացիոնալիզմի և միջազգային նեղափոխության գեմ, վորովհետեւ ի՞նչ ե մեր «սոցիալիզմ կառուցող» յերկիրը, յեթե վոչ համաշխարհային նեղափոխության բազա: Բայց նա կարող է լինել համաշխարհային նեղափոխության խսկական բաղա, յեթե նա ընդունակ չե սոցիալիստական հասարակություն կառուցելու, կարող ե նա մնալ բոլոր յերկրների բանվորների համար այն

մեծագույն ճգողական կենդրունը, վորպիսին անկասկած նա հանդիսանում է այժմ, յեթե նա իր մոտ անընդունակ է հաղթանակ շահելու մեր տնտեսության կապիտալիստական տարրերի գեմ, սոցիալիստական շինարարության հաղթանակ: Կարծում եմ, վոր չի կարող: Բայց չի բղիում այսաեղից, վոր թերահավատությունը սոցիալիստական շինարարության նկատմամբ, որա քարոզը առաջնորդում են դեպի այն, վոր փառազրկմի մեր՝ իբր համաշխարհային նեղափոխության բազա յերկիրը, իսկ մեր յերկրի փառազրկումը կունենա համաշխարհային նեղափոխական շարժման թուլացման հետեւանք: Ինչպի եյին բանվորներին մեղնից վախեցնում պ. պ. սոցիալ-դեմոկրատները: Այն քարոզվ, վոր Շուլցիների մոտ վոչինչ չի հաջողիլ: Ինչպի ենք մենք այժմ հարվածում սոցիալ-դեմոկրատներին, զըրավելով մեզ մոտ բանվորական պատգամավորությունների ամբողջ շարքեր և դրանով իսկ ամրացնելով կոմմունիզմի զիրքերը ամբողջ աշխարհում: Սոցիալիզմի շինարարության մեր հաջողություններով: Բայց միթե պարզ չե սրանից հետո, վոր նվ անուղղակի ոգնում և սոցիալ-դեմոկրատներին, նա թուլացնում է միջազգային նեղափոխական շարժման թափը, նա անխուսափելուն նահանջում է ինտերնացիոնալիզմից...

Դուք տեսնում յեք, վոր ընկ. Զինովիկի «ինտերնացիոնալիզմը» այնքան ել լավ վիճակ չի ապրում, քան նրա «Հարյուրտոկոսանի լենինիզմը» մի յերկում սոցիալիզմ կառուցելու ինքրում:

Այս պատճառով 14-րդ կուսհամագումարն ուղիղ ե վարվել ընդուղելով նոր սպառզեցիայի հայացքները իրեն «թերահավատություն դեպի սոցիալիզմի կառուցման գործը» և իրեն «լենինիզմի աղավաղության»:

## ՊԱՅՔԱՐ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Յես կարծում եմ, վոր թերահավատությունը սոցիալիստական շինարարության հանդեպ նոր ոպպոզիցիայի հիմնական սխալն եւ Այս սխալը ըստ իս հիմնական և հանդիսանում այն պատճառով, քանի վոր նրանից են բղիում նոր ոպպոզիցիայի մյուս բոլոր սլխալները։ Նոր ոպպոզիցիայի սխալները նեպի, պետկապիտակմի, մեր արդյունաբերության սոցիալիստական բնույթի մասին, կոռպերացիայի դերի մասին պրոլետարիատի դիկտատուրայի պայմանում, կուլտակության գեմվարելիք պայքարի մեթոդների մասին, միջին գյուղացության գերի և տեսակարար կշռի մասին, — բոլոր այս սխալներն ածանցական են հանդիսանում ոպպոզիցիայի հիմնական սխալից, թերահավատությունից գեպի սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորությունը մեր յերկրի ույժերով։

Ի՞նչ բան և թերահավատությունը գեպի սոցիալիստական շինարարության հաղթանակը մեր յերկրում։

Դա ամենից առաջ վատահության բացակայությունն և այն բանում, վոր գյուղացության հիմնական մասսաները՝ մեր յերկրի զարգացման հայտնի պայմանների գորությամբ կարող կրինեն լծվել սոցիալիստական շինարարության գործին։

Յերկրորդ՝ դա վատահության բացակայությունն և այն բանում, վոր մեր յերկրի պրոլետարիատը՝ ունենալով իր ձեռքին ժողովրդական տնտեսության հրամայող բարձունքները՝ ընդունեակ և սոցիալիստական շինա-

քարության գործի մեջ գրավել գյուղացության հիմնական մասսաները։

Մեր զարգացման ուղիների մասին ունեցած իր կառուցումների մեջ՝ լոելեայն այս գրություններից են յելնում ոպպոզիցիան, — թող վոր այդ նա անում և գիտակցաբար թե անդիտակցաբար։

Կարելի յե խորհրդային գյուղացության հիմնական մասսան սոցիալիստական շինարարության գործի մեջ գրավել։ «Էնինիզմի հիմքերի մասին» բրոշյուրը այդ առթիվ յերկու հիմնական դրությունն եղարունակում։

1) «Զի կարելի Խորհրդային Միության գյուղացությունը շփոթել Արեմուտքի գյուղացության հետ։ Մի գյուղացություն, վոր անցել և յերեք հեղափոխականների գպրոց, պրոլետարիատի հետ և պրոլետարիատին գլուխ ունենալով պայքարել և թագավորի և բուրժուական իշխանությունների դեմ, մի գյուղացություն, վոր հող և խաղաղություն և ստացել պրոլետարական հեղափոխության ձեռքից և դրա պատճառով պրոլետարիատի պահեստի ույժը դարձել — այդ գյուղացությունը չի կարող չտարբերվել մի գյուղացությունից, վոր գլուխ ունենալով լիբերալ բուրժուազիան պայքարել և բուրժուական հեղափոխության ժամանակ, հող և ստացել այդ բուրժուազիայի ձեռքից, ուստի և դարձել և այդ բուրժուազիայի պահեստի ույժը։ Հազիվ թե կարեք կա ապացուցելու, վոր խորհրդային գյուղացությունը՝ սովոր գնահատելու քաղաքական բարեկամությունը և խաղական լենինիզմի խնդիրների ուուրջը. 4

գործակցությունը պրոլետարիատի հետ և այդ  
բարեկամությունն ու գործակցությունը պարտա-  
կան լինելով իր ազատությամբ,—չի կարող պրո-  
լետարիատի հետ տեսական գործակցության  
բացառիկ բարենպաստ նյութ չկազմել:

2) «Չի կարելի Ռուսաստանի գյուղատնտե-  
սությունը շփոթել արևմուտքի գյուղատնտեսու-  
թյան հետ։ Այնտեղ գյուղատնտեսության զար-  
գացումը գնում է կապիտալիզմի սովորական գծով՝  
գյուղացության խորին շերտավորման պայ-  
մաններում, ըստ որում խոշոր կալվածքները և  
մասնավոր կապիտալիստական լատիֆունդիաները  
գրագում են մի բեկեռլ, պառապերիզմը, չափա-  
վորությունը և վարձու ստրկությունը—մյուս։  
Այնտեղ վիլուգումը և քայլքայումը այս պատճա-  
ռով լիովին բնական է։ Այդ չե Ռուսաստանում։  
Մեզ մոտ գյուղատնտեսության զարգացումը չի  
կարող նման գծով ընթանալ, հենց միայն այն  
պատճառով՝ վոր Խորհրդային իշխանության  
գոյությունը և հիմնական գործիքների ու ար-  
տադրության միջոցների ազգայնացումը նման  
զարգացում չեն թույլատրում։ Ռուսաստանում  
գյուղատնտեսության զարգացումը պետք և ըն-  
թանա ուրիշ ուղիով, միլիոնավոր մանր ու միջին  
գյուղացության կոոպերացման ուղիով, գյուղում  
մասսայական կոոպերացիայի զարգացման ուղիով  
—պաշտպանված պետության կողմից արտօնյալ  
վարկավորումով։ Լենինը կոոպերացիային նվի-  
րած հողվածներում ուղիղ և մատնանշել թե  
գյուղատնտեսության զարգացումը մեզ մոտ պիտի

ընթանա նոր ուղիով, գյուղացության մեծա-  
մասնությունը կոոպերացիայի միջոցով սոցիա-  
լիստական շինարարության մեջ գրավելու ուղիով  
աստիճանաբար կոլեկտիվիզմի սկզբունքները  
գյուղատնտեսությունը ներարկելու ուղիով՝ նախ  
սպառման, իսկ հետո գյուղատնտեսական մթերք-  
ների արտադրության բնագավառում»... «Հազիվ  
թե կարիք կա ապացուցելու, վոր գյուղացության  
վիթիւրի մեծամասնությունը հաճությամբ կը  
փարե զարգացման այդ նոր ուղիին, մի կողմը  
նետելով մասնավոր կապիտալիստական լատի-  
ֆունդիաների և վարձու ստրկության ուղին, ու-  
ղին չբավորության և ավերածության»։

Ուղիղ են արդյոք այդ գրությունները։

Յես կարծում եմ, վոր մեր շինարարության հա-  
մար նեպի պայմաններում այդ յերկու դրություններն  
ուղիղ և անվիճելի յեն։

Նրանք միայն արտահայտություն են հանդիսա-  
նում Լենինի հայտնի թեզիների պրոլետարիատի և  
գյուղացության զորման, գյուղացիական տնտեսու-  
թյունների յերկը սոցիալիստական զարգացման սիս-  
տեմը կիրառելու մասին, այն մասին, վոր պրոլետարի-  
ատը պիտի դեպի սոցիալիզմ ընթանա գյուղացու-  
թյան հիմնական մասսաների հետ միատեղ այն մա-  
սին, վոր գյուղացության միլիոնավոր մասսանների  
կոոպերացումը սոցիալիստական շինարարության գըլ-  
իսավոր ուղին և գյուղում, վոր մեր սոցիալիստական  
ինդուստրիայի անձան պարագայում «կոոպերացիայի  
պարզ անումը մեզ համար նույնական և սոցիալիզմի  
անձան հետ» (տես հ. 18, մ. 2, եջ 144):

իսկապես ի՞նչ ուղիով կարող ե և պետք ե ընթանա մեր յերկրում գյուղացական տնտեսության զարգացումը:

Գյուղացական տնտեսությունը կապիտալիստական տնտեսություն չեւ: Գյուղացական տնտեսությունը, յեթե վերցնենք գյուղացական տնտեսությունների ճնշող մեծամասնությունը, մանր-ապրանքային տնտեսություն եւ: Իսկ ի՞նչ ե մանր-ապրանքային գյուղացական տնտեսությունը: Դա տնտեսություն եւ, վոր կանգնած ե կապիտալիզմի և սոցիալիզմի ճամբարաժնին: Իր զարգացումով այն կարող ե թեքվել և կապիտալիզմի կողմը, ինչպես այդ տեղի յեւ ունենում այժմ կապիտալիստական յերկրներում, և սոցիալիզմի կողմը, ինչպես այդ պիտի տեղի ունենա մեզ մոտ, մեր յերկրում, պրոլետարիատի դիկտատուրայի պայմանում:

Վերտեղեց ե ծագում գյուղացական տնտեսության այլպիսի անկայունությունը, անինքնուրույնությունը, ինչո՞ւ բացատրել այդ:

Բացատրվում ե այդ գյուղացական տնտեսությունների փոշիացումով, նրանց անկազմակերպությամբ, նրանց կախումով քաղաքից, ինդուստրիայից, վարկային սխառեմբից, յերկրի իշխանության բնույթից, վերջապես այն հանրահայտնի զրությամբ, վոր գյուղը թե նյութական և թե կուլտուրական տեսակետից ընթանում եւ պիտի ընթանա քաղաքի յետեկից:

Գյուղացական տնտեսության կապիտալիստական զարգացման ուղին նշանակում ե զարգացում գյուղացության խորին շերտավորման միջոցով—խոշոր լատիֆունդիաներով մի քենուն և մասսայական չքաղորացումով մյուս քենուն: Զարգացման այլպիսի ուղին

անխուսափելի յեւ կապիտալիստական յերկրներում, վորվովինեակ գյուղը, գյուղացական տնտեսությունը գըտնվում ե կախման մեջ քաղաքից, ինդուստրիայից, քաղաքում կենդրոնացած վարկից, իշխանության ըընույթից, իսկ քաղաքում թագավորում ե բուրժուազիան, կապիտալիստական արդյունաբերությունը, կապիտալիստական վարկային սիստեմը, կապիտալիստական պետական իշխանությունը:

Պարզապես ե արդյոք գյուղացական տնտեսության զարգացման այդ ուղին մեր յերկրում, ուր քաղաքը ունի իսպառ ուրիշ գենք, ուր ինդուստրիան պրոլետարիատի ձեռքին ե գտնվում, ուր տրանսպորտը, վարկային սիստեմը, պետական իշխանությունը և այլն կենդրոնացած են պրոլետարիատի ձեռքին, ուր հողի ազգայնացումն ընդհանուր որենք ե յերկրում: Բնարկե պարտադիր չեւ: Ընդհակառակը: Հենց նրա համար, վոր քաղաքը գյուղի գեկավարն եւ, իսկ մեզ մոտ քաղաքում թագավորում ե պրոլետարիատը, վոր իր ձեռքին ե պահում ժողովրդական տնտեսության բոլոր հրամայող բարձունքները, հենց այդ պատճառով գյուղացական տնտեսություններն իրանց զարգացման մեջ պիտի ընթանան այլ ուղիով, սոցիալիստական շինարարության ուղիով:

Ի՞նչ ուղի յեւ դա:

Դա միլիոնավոր գյուղացական տնտեսությունների մասսայական կոռպերացումն ե կոռպերացիայի բոլոր գծերով, փոշիացած գյուղացական տնտեսությունների միացման ուղին ե սոցիալիստական ինդուստրիայի շուրջը, կոլլեկտիվիզմի սկզբունքների պատվաստման ուղին ե գյուղացության մեջ՝ սկզբում հողագործա-

կան մթերքների սպառման և գյուղացական տնտեսություններին քաղաքային ապրանքներ մատակարարելու գծով, իսկ հետո գյուղատնտեսական արտադրության գըծով:

Յեվ վորքան առաջ ենք գնում, այնքան այդ ու-  
ղին ավելի յե անխուսափելի դառնում պրոլետարիա-  
տի դիկտատորայի հանգամանքում, վորովհետև կո-  
ռածերացումը սպառման գծով, կոռպերացումը մատա-  
կարարման գծով, վերջապես կոռպերացումը վարկի ու  
արտազրության (գյուղատնտեսական ընկերություն-  
ներ) գծով միակ ուղին ե հանդիսանում գյուղի բարե-  
կեցության վերելքի համար, միակ միջոցը փրկելու  
գյուղացության լայն մասսաները չքավորությունից  
ու քայլայումից:

Սառւմ են, թե մեզ մոտ գյուղացությունը սուցիալիստական չե իր վիճակով, վորի պատճառով նաև անընդունակ և սոցիալիստական զարգացման համար: Այդ ինարկե ուղիղ ե, վոր գյուղացությունը սոցիալիստական չե իր վիճակով: Բայց դա պատճառաբանություն չե գյուղացական տնտեսության սոցիալիստական ուղիղով զարգանալու գեմ, յեթե ապացուցված է, վոր գյուղը քաղաքի յետեից և ընթանում, իսկ քաղաքում իշխում և սոցիալիստական արդյունաբերությունը: Հօկտեմբերյան հեղափոխության ժամանակ գյուղացությունը նույնական սոցիալիստական չեր իր վիճակով, և նա իսպառ չեր կամենում սոցիալիզմի հաստատել յերկրում: Նա այն ժամանակ գլխավորապես հետամտում եր վերացնելու կալվածատիրական իշխանությունը և վերջացնելու պատերազմը, հաշտությունն հաստատելու: Այսուամենայնիվ նա այն ժամանակ սու-

յիալիստական պրոլետարիատի յետևից գնաց: Ինչո՞ւ Նրա համար, վոր այն ժամանակ բուրժուազիայի տապալումը և իշխանության գրավումը սոցիալիստական պրոլետարիատի կողմից միակ յելքն եր գլուխ թօթափելու իմակերիալիստական պատերազմից, միակ ուղին եր հաշտություն հաստատելու համար: Նրա համար, վոր ուրիշ ուղիներ չկային այն ժամանակ և չեր կարող լինել: Նրա համար, վոր մեր կուսակցությանը այն ժամանակ հաջողվեց շոշափել գտնել գյուղացության հատուկ շահերի (կալվածատիրոջ տապալումը, հաշտություն) յերկրի ընդհանուր շահերին (պրոլետարիատի դիկտատուրա) ստորագան միացման ու հրպատակման այն աստիճանը, վոր ընդունելի ու ձեռնտու հանդիսացավ զյուղացության համար: Յեզ գյուղացությունը՝ չնայած իր անսոցիալիստականության այն ժամանակ զնաց սոցիալիստական պրոլետարիատի յետեկից:

Այս նույնը պիտի ասել մեր յերկրի սոցիալիստական շինարարության մասին, գյուղացությանը այդ շինարարության հունը զբավելու մասին։ Գյուղացությունը սոցիալիստական չե իր վիճակով։ Բայց նա կընդգրկե և պարբերաբար կընդգրկե սոցիալիստական զարգացման ուղին, վորովհետև չկա և չի կարող լինել այլ ուղի՝ փրկելու գյուղացությանը չքաղորությունից և քայլայումից, քան զողումը պրոլետարիատի հետ, քան զրդումը սոցիալիստական արտաքության հետ, քան գյուղացական տնտեսության ներառումը սոցիալիստական զարգացման ընդհանուր հունը՝ գյուղացության մասսայական կռապերացման միջնորդ։

Ինչու հենց գյուղացության մասսայական կոպերացումով:

Նրա համար, վոր մասսայական կոռպերացման մեջ «մենք գտել ենք մասնավոր շահի, մասնավոր-առելտրական շահի, նրա պետության կողմից ստուգելու և վերահսկելու, նրա ընդհանուր շահերին ստորադաս լինելու այն աստիճանը» (Անին), վոր ընդունելի և ձեռնտու յե զյուղացությանը և վորը հնարավորություն և ապահովում պրոլետարիատին սոցիալիստական շինարարության գործի մեջ գրավելու գյուղացության հիմնական մասսաները: Հենց նրա համար, վոր գյուղացության համար ձեռնտու յե ապրանքների սպառման և տնտեսությանը մեքենաներ մատակարարելու գործը կազմակերպել կոռպերացիայի միջոցով, հենց դրա համար նա պիտի ընթանա և կլնթանա մասսայական կոռպերացման ուղիով:

Իսկ ինչ և նշանակում գյուղացական տնտեսությունների մասսայական կոռպերացում սոցիալիստական արտադրության զիխավորությամբ:

Դա նշանակում և մանր-ապրանքային գյուղացական տնտեսության նախանջ հին կավիտալիստական ուղիից, վոր հղի յե գյուղացության մասսայական քայլքայմամբ, և թեվակոխումն զարգացման նոր ուղի, սոցիալիստական շինարարության ուղի:

Այս ինչու գյուղացական տնտեսության զարգացման նոր ուղիի պայքարը, գյուղացության հիմնական մասսան սոցիալիստական շինարարության գործի մեջ գրավելու պայքարը—մեր կուսակցության հերթական անելիքն և հանդիսանում:

ՀԱՄ. Կ. Կ. 14-րդ համագումարն ուղիղ և վար-

վել վորոշելով, թե «զյուղում սոցիալիզմի շինարարության հիմնական ուղին կայանում և նրանում, վորպեսզի սոցիալիստական արդյունաբերության, պետական վարկային հիմնարկությունների և պրոլետարիատի ձեռքում գտնվող ուրիշ հրամայող քարձրունքների աճող տնտեսական ղեկավարությամբ կոռպերատիվ կազմակերպության մեջ գրավել գյուղացության հիմնական մասսան և սոցիալիստական գարգացում ապահովիլ այդ կազմակերպությանը՝ հաղթահարելով և վարեկելով նրա կավիտալիստական տարրերը» (առև համագումարի բանաձեռ ԿԿ հաշվետվության առիթով):

Նոր ովազողիցիայի խորագույն սխալը կայանում և նրանում, վոր նա չի հավատում զյուղացության զարգացման այդ նոր ուղիին, չի անսնում կամ չի հասկանում այդ ուղիի ամբողջ անխուսափելիությունը պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում: Իսկ նա այդ չի հասկանում այն պատճառով, վոր չի հավատում սոցիալիստական շինարարության հաղթությանը մեր յերկրում, չի հավատում մեր պրոլետարիատի ընդունակությանը իր յետեկց սոցիալիզմի ուղիով տանելու գյուղացությանը:

Այստեղից ել ծագում և նեպի յերկվակի բնության անըմբոնումն, նեպի բացասական կողմերի չափանցումը և նեպի մեկնաբանումը՝ իբրև նահանջ առավելապես:

Այստեղից ել ծագում և մեր տնտեսության կապիտալիստական տարրերի գերի չափազանցումը և մեր սոցիալիստական զարգացման (սոցիալիստական արդյունաբերություն, վարկային սիստեմ, կոռպերացիա,

պրոլետարիատի իշխանություն ևայլն) լծակների գերի նվազեցումը:

Այստեղից ել՝ ծագում ե մեր պետական արդյունաբերության սոցիալիստական բնույթի անըմբոնումըն և կասկածը կենինի կոռպերատիվ ծրագրի ուղիղ լինելու մասին:

Այստեղից ել՝ ծագում ե գյուղի շերտավորման ուղղումը, խուճապը կուլակի հանդեպ, միջակի դերի նվազեցումը, փորձերը ապարդյուն դարձնելու կուսակցության քաղաքականությունը, վոր նպատակ ունի ամուռ դաշնակցություն ապահովելու միջակի հետ, և ընդհանրապես պատեհապատ ընկելը կուսակցության գյուղում վարելիք քաղաքականության հարցի մեջ:

Այստեղից ել՝ ծագում ե անըմբոնումն կուսակցության այն վիթխարի աշխատանքի, վոր բանվորների ու գյուղացիների միխոնավոր մասսաներն և գըրավում արդյունաբերության և գյուղատնտեսության շինարարության գործի մեջ, կոռպերացիայի և խորհուրդների աշխուժացման մեջ, յերկրի կառավարչության մեջ, այն պայքարի մեջ, վոր մղվում և բյուրոկրատիվմի գեմ, մեր պետական ապարատի լավացման և վերաշնուրական համար, — աշխատանք, վոր նշում և զարգացման նոր շրջան և առանց վորի չի կարելի յերևակայել վորեւ սոցիալիստական շինարարություն:

Այստեղից ել՝ ծագում ե անհուսալիությունն ու զիսխորուսությունն մեր շինարարության դժվարությունների առաջ, կասկածը մեր յերկրի ինդրուստրիացման հնարավորության հանդեպ, հոռետես շաղակըրատությունը կուսակցության վերասերման մասին և այլն:

Նրանց մոտ, բուրժուաների մոտ, ամեն բան առավել կամ պակաս լավ ե. մեզ մոտ, պրոլետարների մոտ, առավել կամ պակաս վատ ե. յեթե Արհմուտքից հեղափոխությունը չհասնի՝ կորած և մեր բանը, — այսպիսին և նոր ոպազիցիայի ընդհանուր տոնը, վոր, ըստ իս լիկվիդատորական տոն ե, բայց ոպազիցիայի կողմից (հավանորեն զվարճության համար) իր «ինտերնացիոնալիզմ» և հրամցվում:

Նեպը կապիտալիզմ ե, ասում ե ոպազիցիան: Նեպը առավելապես նահանջ ե, ասում ե ընկ. Զինովիեր, Այս բոլորը, իհարկե, ուզեղ չե: Իսկապես նեպը կուսակցության քաղաքականությունն ե, վոր թույլատրում ե սոցիալիստական և կապիտալիստական տարրերի մրցումն, այն հաշվենկատառումով, թե սոցիալիստական տարրերը պիտի հաղթանակեն կապիտալիստական տարրերին: Իսկապես նեպը սկսել ե միայն նահանջով, բայց այն հաշվենկատառումով, վոր նահանջի ընթացքում պետք ե վերախմբավորել ույժերը և հարձակման անցնել: Իսկապես քանի տարի յե ահա, վոր մենք հարձակվում ենք, և հարձակվում ենք հաջողությամբ, զարգացնելով մեր ինդրուստրիան, զարգացնելով խորհրդային առևտուրը, նեղը ցցելով մասնավոր կապիտալը:

Բայց ինչումն ե այն թեզիսի իմաստը, թե նեպը կապիտալիզմ ե, նեպը նահանջ ե առավելապես: Ինչից ե մեկնում այդ թեզիսը:

Այդ մեկնում ե այն անձիշտ յենթազրությունից, թե մեզ մոտ կապիտալիզմի պարզ վերականգնումն և առաջի ունենում, կապիտալիզմի պարզ «դարձ»: Միայն այդ պարզ յենթազրությամբ կարելի յե բացատրել:

ոպպոզիցիայի կասկածները մեր արդյունաբերության սոցիալիստական բնույթի մասին։ Միայն այդ յենթադրությամբ կարելի յե բացատրել ոպպոզիցիայի աճապարանքը, վորով ոպպոզիցիան կառչեց գյուղացության շերտավորման անճիշտ թվերին։ Միայն այդ յենթադրությամբ կարել ե բացատրել ոպպոզիցիայի հատուկ մոռացությունը այս մասին, վոր միջակն ե մեզ մոտ հողագործության կենդրունական դեմքը։ Միայն այդ յենթադրությամբ կարելի յե բացատրել միջակի տեսակաբար կշռի թերագնահատումը և կասկածը կենինի կոռակերտափիվ ծրագրի նկատմամբ։ Միայն այդ յենթադրությամբ կարելի յե «հիմնավորել» նոր ոպպոզիցիայի թերահավատությունը գյուղի զարգացման նոր ուղիի, գյուղի սոցիալիստական շինարարության մեջ գրավելու ուղիի նկատմամբ։

Իսկապես մեզ մոտ կապիտալիզմի վերականգնման միակողմանի պրոցես չե, վոր տեղի յե ունենում, այլ յերկողմանի պրոցես՝ կապիտալիզմի զարգացման և սոցիալիզմի զարգացման, սոցիալիստական տարրերի այդպիսին ներհակ պրոցես կապիտալիստական տարրերի դեմ, կապիտալիստական տարրերի հաղթահարելու պրոցես սոցիալիստական տարրերի կողմից։ Սա հավասարապես անվիճելի յե թե քաղաքի համար, ուր սոցիալիզմի բազան ե հանդիսանում պետական արդյունաբերությունը, և թե գյուղի համար, ուր սոցիալիստական զարգացման հիմնական կառուցն ե հանդիսանում մասսայական կոռակերացիան, վոր զողվում ե սոցիալիստական արդյունաբերության հետ։

Կապիտալիզմի պարզ վերականգնումն անհնարին ե գեթ այն պատճառով, վոր մեր իշխանությունը պ-

րոլետարական ե, խոշոր արդյունաբերությունը պրոլետարիատի ձեռքին ե գտնվում, տրանսպորտն ու վարկը պրոլետարական պետության կարգադրության ներքո յեն։

Շերտավորումը չի կարող առաջվա չափերն ընդունել, միջակը գյուղացության հիմնական մասսան ե մնում, իսկ կուլակը չի կարող առաջվա ույժն ունենալ դեմ այն պատճառով, վոր հողը մեզ մոտ ազգայնացած ե, այն հանված ե շրջանառությունից, իսկ մեր առևտուրը, վարկային, հարկային և կոռակերտափիքաղաքականությունն ուղղված են այն բանին, վորպեսզի սահմանափակեն կուլակության շահագործական ձգումները, բարձրացնեն գյուղացության ամենալայն մասսաների բարեկեցությունը և գյուղում հավասարեցնեն ծայրահեղությունները։ Յես արդեն չեմ խոսում այն մասին, վոր կուլակության դեմ մեր պայքարը այժմ զնում ե վոչ միայն հին գծով, այլև նոր գծով, վոր ընդդեմ կուլակի պրոլետարիատի և չքավորության դաշնակցության ամրացումն ե գյուղացության միջակ մասսաների հետ։ Այն փաստը, վոր նոր ոպպոզիցիան չի ըմբռնում կուլակության դեմ այդ յերկրորդ գծով վարելիք պայքարի իմաստն ունշանակությունը, այդ փաստն ավելորդ անգամ ապացում ե, վոր ոպպոզիցիան շեղվում ե գեպի գյուղի զարգացման հին ուղին, նրա կապիտալիստական զարգացման ուղին, յերբ կուլակն ու չքավորը կազմում եյին գյուղի հիմնական ույժերը, իսկ միջակը «անգիտացում եր»։

Կոռակերացիան պետական կապիտալիզմի մի այլ տեսակն ե, ասում ե ոպպոզիցիան, վկայության կան-

չեղով կենինի «Պարենհարկը», վորի պատճառով ելնա  
չե հավատում, թե կոռպերացիան իբրև սոցիալիստա-  
կան զարգացման հիմնական կառչոց կարելի յե ոգ-  
տագործել: Ուղղողիցիան այստեղ ել ե կոպտագույն սը-  
խալ թույլատրում: Կոռպերացիայի նման մեկնարա-  
նությունը հերիք ու բավարար եր 1921 թվին, յերբ  
զրվել եր «Պարենհարկը», յերբ մեզ մոտ զարգացած  
սոցիալիստական արդյունաբերություն չկար, յերբ  
Լենինը մեր տնտեսության հիմնական հնարավոր ձեւը  
պետկապիտակիզմն եր յենթագրում, իսկ կոռպերացիան  
քննում եր պետկապիտակիզմի հետ զուգակցած: Բայց  
այդ մեկնարանությունը այժմ արդեն հերիք չե և գե-  
րազանցված ե պատմության կողմից, վորովհետև այդ  
պահից ի վեր փոխվել են ժամանակները. սոցիալիս-  
տական արդյունաբերությունը մեզ մոտ զարգացավ,  
պետկապիտակիզմը չպատվաստվեց այն չափով, վոր-  
քան այդ ցանկալի յեր, իսկ կոռպերացիան, վոր այժմ  
ընդգրկում ե տասնյակ միլիոն անդամներից ավելի՝  
սկսել ե զոդվել սոցիալիստական ինդուստրիայի հետ:

Այլ կերպ ինչպես բացատրել այն փաստը, վոր  
«Պարենհարկից» յերկու տարի անց, 1923 թվականին,  
Լենինը սկսեց կոռպերացիային նայել այլ աշխով, հա-  
մարելով, թե «կոռպերացիան մեր պայմաններում իս-  
պառ մի գլուխ կատարելապես զուգադիպում ե սոցի-  
ալիզմին» (տես հ. 18, մ. 5, եջ 144):

Այլ կերպ ինչպես բացատրել, քան նրանով, վոր  
այդ յերկու տարվա ընթացքում սոցիալիստական ար-  
դյունաբերությունն արդեն հաջողել ել աճել իսկ կա-  
պիտակիզմը պահանջված չափով չեր պատվաստվել, վո-  
րի պատճառով Լենինը սկսել եր կոռպերացիան քննել

վոչ թե պետկապիտակիզմի զուգակցությամբ, այլ սո-  
ցիալիստական արդյունաբերության զուգակցությամբ:  
Փոխվել եյին կոռպերացիայի զարգացման պայ-  
մանները: Պեաք եր փոխվեր և մոտեցումը կոռպերա-  
ցիայի հարցին:

Ահա, որինակ, մի նշանավոր կար Լենինի «Կո-  
պերացիայի մասին» (1923 թ.) բրոշյուրեց, վոր լույս  
ե սփռում այդ հարցի վրա.

«Պետական կապիտալիզմի պայմանում») կո-  
պերատիվ ձեռնարկությունները զանազանվում  
են պետական կապիտալիստականից նախ և ա-  
ռաջ իբրև մասնավոր ձեռնարկություններ և ա-  
պա իբրև կոլեկտիվ: Մեր գոյուրյուն ունեցող հա-  
ստրակարգում\*) կոռպերատիվ ձեռնարկություն-  
ները զանազանվում են մասնավոր-կապիտալիս-  
տականից իբրև կոլեկտիվ ձեռնարկություններ,  
բայց չեն տարբերվում\*) սոցիալիստական ձեռնար-  
կություններից, յեթե նրանք հիմնված են պե-  
տական այսպիս բանվոր գասակարգին պատ-  
կանող հողի, արտադրության միջոցների վրա  
(տես հ. 18-րդ, մ. 2, եջ 143-144):

Այս փոքր ցիտատում լուծված են յերկու խոշոր  
հարց: Առաջին՝ այն հարցը, վոր «մեր գոյություն ու-  
նեցող հասարակարգը» պետկապիտակիզմ չե: Յերկ-  
րորդ՝ այն հարցը, վոր կոռպերատիվ ձեռնարկություն-  
ները՝ վերցրած մեր հասարակարգի զուգակցությամբ  
«չեն զանազանվում» սոցիալիստական ձեռնարկու-  
թյուններից:

Ցես կարծում եմ, վոր զժվար և ավելի պարզ ար-  
տահայտել:

\*) Ընդգծություն իմա եւ ի. ՍՏ.

Ահա մի կտոր ևս լենինի այդ նույն բրոշյուրից՝  
«Կոռպերացիայի պարզ աճումը մեղ համար  
նույնական ե (վերը ցուցադրված «Փոքրիկ» բա-  
ցառությամբ) սոցիալիզմի աճման հետ, և սրա-  
նետ միասին մենք ստիպված ենք ճանաչել մեր  
վողջ հայեցակետի արմատական փոփոխումը սո-  
ցիալիզմի նկատմամբ» (նույն տեղ):

Ակներև ե, վոր «Կոռպերացիայի մասին» բրո-  
շյուրում մենք գործ ունենք կոռպերացիայի նոր զը-  
նահատման հետ, ինչ վոր չի ուզում ճանաչել նոր ոպ-  
պողիցիան և ինչ վոր նա ջանասիրությամբ՝ հակա-  
ռակ փաստերին, հակառակ ակներև ճշմարտության,  
հակառակ լենինիզմին՝ լուրջան և մատնում:

Մի բան ե կոռպերացիան, վերցրած պետկա-  
պիտակիզմի գուգակցությամբ, և այլ բան ե կոռպե-  
րացիան, վերցրած սոցիալիստական արդյունաբերու-  
թյան գուգակցությամբ:

Որանից սակայն չի կարելի այն յեզրակացու-  
թյունը հանել, թե «Պարենհարկի» և «Կոռպերացիայի  
մասին» բրոշյուրի միջև անդունդ ե ընկած: Դա, իհար-  
կե, ուղիղ չե, չերիք ե, որինակ, վկայության կանչել  
«Պարենհարկից» հետևյալ կտորը, վորպեսզի կոռպե-  
րացիայի գնահատման ինդրում կարելի լինի իսկույն  
եյթ նշմարել այն անխղելի կապը, վոր կա «Պա-  
րենհարկի» և «Կոռպերացիայի մասին» բրոշյուրի մի-  
ջև: Ահա դա.

«Կոնցեսիաներից սոցիալիզմին անցնելը  
խոշոր արդյունաբերության մի ձևից խոշոր ար-  
դյունաբերության մյուս ձևից անցնելն ե: Մանր  
տնտեսատերերի կոռպերացիայից սոցիալիզմին:

անցնելը դա մանը արդյունաբերությունից խո-  
շորին անցնելն ե, այսինքն առավել բարդ ան-  
ցնում, բայց դրա փոխարեն, աջողության զեպ-  
քում ընդունակ ընդգրկելու բնակչության առա-  
վել լայն մասաններ, ընկունակ արմատախիլ՝ ա-  
նելու առավել խոր և առավել կենսունակ ար-  
մատները հին, մինչ-սոցիալիստական\*, անգամ  
մինչ-կապիտալիստական հարաբերությունների,  
վորոնք առավել համառ են ամեն-մի «նորության»  
գիմալիրելու իմաստով» (հ. 18-րդ, մ. եջ 220):

Այս ցիտատից յերեսում ե, թե լենինը դեռ «Պա-  
րենհարկի» ժամանակ, յերբ մեղ մոտ դեռ զարգացած  
սոցիալիստական ինդուստրիա չկար, հնարավոր եր հա-  
մարում, վոր կոռպերացիան հաջողության դեպքում կա-  
րող ե պայքարի հզոր միջոց դառնալ «մինչ-սոցիա-  
լիստական», ուրեմն և կապիտալիստական հարաբերու-  
թյունների դեմ: Յես կարծում եմ, վոր հետագայում  
այս միտքն ե մեկնակետ դարձնլ նրա «Կոռպերացիա-  
յի մասին» բրոշյուրի համար:

Բայց ինչ ե բղխում այս բոլորից:

Իսկ այստեղից բխում ե, վոր նոր սոպողիցիան  
կոռպերացիայի հարցին մոտենում ե վոչ-մարքսիստու-  
թեն, այլ բնագանցորեն: Նա կոռպերացիան քննում ե  
վոչ իրեն պատմական յերեսույթ, վերցրած ուրիշ յե-  
րեսույթների գուգակցությամբ, ասենք, պետկապիտա-  
կիզմի (1921 թ.) կամ սոցիալիստական արդյունաբե-  
րության (1923 թ.) գուգակցությամբ, այլ իրեն մըշ-  
տական և մեկ ընդմիշտ տված մի բան, իրեն «իրն  
ինքնին»:

\* ) Ընդգծումներն ամենուրեք իմն են: ի. Ստ.  
Լենինիզմի խնդիրների ընւրջը. 5

Այստեղից ել ոպազողիցիայի սխալը կոռպերացիայի հարցում, այստեղից նրա թերահավատությունը դեպի դյուզի սոցիալիստական զարգացումը կոռպերացիայի միջոցով, այստեղից ոպազողիցիայի գարձը հին ուղին, գյուղի կապիտալիստական զարգացման ուղին:

Այսպիսին և ընդհանուր առմամբ նոր ոպազողիցիայի դիրքը սոցիալիստական շինարարության գործնական խնդիրներում:

Յեզրակացությունը միևնույն ոպազողիցիայի գիծը, վոր չափով նա գիծ ունի, ոպազողիցիայի յերերումներն ու տատանումները, նրա թերահավատությունն ու գիւմակորուսությունը դժվարությունների հանդեպ—տանում են դեպի անձնաբարություն մեր տնտեսության կապիտալիստական տարրերի առաջ: Վորովիկեան յեթե նեպը առավելապես նահանջե, յեթե պետության սոցիալիստական արդյունաբերության ընույթը կառկածի յե յենթարկվում, յեթե կուլակը համարյա թե հզորազոր ե, նվազ հույս կա կոռպերացիայի վրա, միջակի դիրք պրոգրեսիվում ընկնում ե, գյուղի զարգացման նոր ուղին կասկածելի յե, կուսակցությունը համարյա թե վերասերվում ե, իսկ Արևմուտքի հեղափոխությունը գեռ տինքան մոտ չե,— ապա այս բոլորից հետո եկ ինչ և մնում ոպազողիցիայի գինապահետում, ինչի վրա յե նա հույս դնում մեր տնտեսության կապիտալիստական տարրերի գեմ պայքար մը դելու գործում: Խոմ չի կարելի կովի գնալ միմբայն «Դարաշրջանի փիլիսոփայությունն» ունենալով:

Պարզ ե, վոր նախանձելի չե նոր ոպազողիցիայի գինապահետը, յեթե ընդհանրապես կարելին յե այն գինապահետ անվանել: Պայքարի համար չե այդ զինապահետը: Յեվս առավել հաղթության համար:

Պարզ ե, վոր նման գինապահետով կուսակցությունը «մեկ-յերկու» և կըլորտակելի իրան, —յեթե նա կովի նետվեր, նա ստիպված կըլիներ պարզապես անձնատուր լինել մեր տնտեսության կապիտալիստական առրրերին:

Այս պատճառով կուսակցության 14-րդ համագումարը կատարելապես ուղիղ ե վարդել վորոշելով թե ոկուսակցական հերթական անելիքն և պայքար մղել սոցիալիստական շինարարության հաղթության համար Խ. Շ. Մ. մեջ։ Թե այդ անելիքի լուծման անհրաժեշտ պայմաններից մեկն ե, վոր «պայքար մղվել մեր յերկը սոցիալիստական շինարարության նկատմամբ տածած թերձավատության դեմ և այն նկատմամբ տածած թերձավատության դեմ և այն փորձերի գեմ, վոր մեր ձեռնարկությունները, վորոնք «հաջորդական սոցիալիստական տիպի» (Լենին) ձեռնարկություններ են հանդիսանում, գիտում ե իբրև պետական-կապիտալիստական ձեռնարկություններ»: Թե «նման զաղափարական հոսանքները, անհնարին թե ունման առաջարկական առաջարկությունների գիտակից վիրաբերմունքը գեղարձնելով մասսաների գիտակից վիրաբերմունքը պի սոցիալիզմի շինարարությունն ընդհանրապես և սոցիալիստական արդյունաբերությունը մասնավորապես, ընդունակ են միայն կասեցնել տնտեսության սոցիալիստական առաջարկի անումը և հիշեցնել մասնավոր կապիտալի պայքարը նրանց դեմ»: Թե «այս պատճառով համագումարը անհրաժեշտ է գատում լայն գաստիարակչական աշխատանք զարգացնել՝ հաղթահագատիարակչական աշխատանք (տես Համ. ըելու Լենինիզմի այդ աղավազումները)» (տես Համ. կ. կ. կ. հաշվետվության առիթով ընդունված բանաձեւը):

Համ. կկ 14-րդ համագումարի պատմական նշա-

4084

նակությունը նրա մեջ և, վոր նա կարողացավ մինչ  
արմատները մերկացնել նոր ոպպոզիցիայի սխալները,  
գեն նետեց նրա թերհավատությունն ու հեծկլառոցը,  
պարզ ու հստակ նշեց սոցիալիզմի համար մղվող պայ-  
քարի հետագա ուղին, ավագ կուսակցությանը հաղ-  
թանակի հեռանկար և դրանով իսկ զինեց պրոլետա-  
րիատին անխորտակելի հավատով դեպի սոցիալիստա-  
կան շինարարության հաղթանակը:

1926 թ. հունվարի 25-ին



ՀՀ Ազգային գրադարան



NL0178624

